ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՈՒՍԱՆՈՂԻ

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

# I

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 378 (03)
ԳՄԴ 74. 58
Ու 722

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

(ՊՐԱԿ I)

ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝
*Նորայր Ղուկասյան*

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝
*Ռուբեն Գասպարյան*
*Վրեժ Սարգսյան*

ՈՒ 722 Ուսանողի ուղեցույց. Եր.: Կրթության ազգային ինստիտուտի հրատ., 2007. - 320 էջ:

ՈՒ 4309000000 / 0149 (01)2007 2007 թ. ԳՄԴ 74.58

Ինկորպորացիայի հեղինակ՝ ***Վ. Սարգսյան***
Հրատարակիչ՝ ***Կրթության ազգային ինստիտուտ***

ISBN 99941-960-1-4
© ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2007 թ.

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*Սիրելի բարեկամ*

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը իր աշխատանքները նպատակաուղղել է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, որ ներառում է կրթության կառուցվածքը, բովանդակությունը, կառավարումը:

Մեր առջև ծառացած կարևորագույն խնդիրն է ինտեգրումը եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և բարձրագույն կրթության կազմակերպումը կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով, իսկ մնացած հարցերն ածանցյալ են այս գլխավորից, քանզի ուսուցման նոր սկզբունքով կազմակերպումը, բնականաբար, ենթադրում է և կառավարման նոր մեթոդների կիրարկում, և պետական ֆինանսավորման նոր ձևերի արմատավորում, և աշխատաշուկայի հետ կապերի ընդլայնում:

Այս գործընթացը ենթադրում է ուսանողության ակտիվ մասնակցությունը: Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, Կրթության ազգային ինստիտուտը սկսում են Տեղեկագրի շարունակական հրատարկումը, որի նպատակը ուսանողության իրազեկության մակարդակի բարձրացումն է:

Կարծում ենք Տեղեկագիրը կհանդիսանա յուրահատուկ ուղեցույց ուսանողության համար:

Տեղեկագրում ներկայացվելու են ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամաններ, կարգեր, որոնք կանոնակարգում են բարձրագույն կրթության համակարգը:

Սիրով ակնկալում ենք ուսանողության առաջարկությունները և դիտողությունները Տեղեկագրի համալրման և բարելավման ուղղությամբ:

***ՀՀ կրթության և գիտության նախարարություն***
***Կրթության ազգային ինստիտուտ***

# ԲԱԺԻՆ I

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

**Ընդունվել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով**

Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

## Գ Լ ՈՒ Խ 1
## *ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ*

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

**Հոդված 2.** Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:

**Հոդված 3.** Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

**Հոդված 4.** Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

**Հոդված 5.** Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

**Հոդված 6.** Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայա-

տանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով:

**Հոդված 7.** Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը:

Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին:

Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը:

**Հոդված 8.** Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը:

**Հոդված 8.1.** Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից:

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

**Հոդված 8.2.** Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո:

**Հոդված 9.** Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով:

**Հոդված 10.** Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը:

**Հոդված 11.** Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

**Հոդված 11.1.** Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են մարզերը և համայնքները:

**Հոդված 11.2.** Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տեղական ինքնակառավարումը:

**Հոդված 11.3.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:

**Հոդված 12.** Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

**Հոդված 13.** Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով:

Հայաստանի Հանրապետության զինանշանն է. Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Դրոշի և զինանշանի մանրամասն նկարագրությունը սահմանվում է օրենքով:

Հայաստանի Հանրապետության օրհներգը սահմանվում է օրենքով:

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է:

## Գ Լ ՈՒ Խ 2

## *ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

**Հոդված 14.** Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:

**Հոդված 14.1.** Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

**Հոդված 15.** Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

**Հոդված 16.** Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն հետևյալ դեպքերում՝

1) անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար իրավասու դատարանի կողմից.

2) անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով.

4) առկա է հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա անհրաժեշտ է անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու այլ մարմին ներկայացնելու նպատակով.

6) վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմոլ, թմրամոլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելու նպատակով.

7) Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով: Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:

Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր ազատությունից զրկման կամ խուզարկության օրինականությունն ու հիմնավորվածությունը բողոքարկելու վերադաս դատական ատյանում: Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

**Հոդված 17.** Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք:

Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:

**Հոդված 18.** Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:

**Հոդված 19.** Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմ-

նակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել:

**Հոդված 20.** Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:

Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:

Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք:

Տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 21.** Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

**Հոդված 22.** Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը:

Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:

Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար:

**Հոդված 23.** Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ:

**Հոդված 24.** Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

**Հոդված 25.** Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն վերադառնալու իրավունք:

**Հոդված 26.** Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

**Հոդված 27.** Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն

առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը:

**Հոդված 27.1.** Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

**Հոդված 28.** Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

**Հոդված 29.** Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք:

Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով:

**Հոդված 30.** Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ

ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

**Հոդված 30.1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է: Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք: Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը սահմանվում է օրենքով:

Ոչ ոք չի կարող զրկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, ինչպես նաև քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

**Հոդված 30.2.** Քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք:

Հանրային ծառայության սկզբունքները և կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով:

**Հոդված 31.** Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս

պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

**Հոդված 31.1.** Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

**Հոդված 32.** Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ընտրության ազատություն:

Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք:

Աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք, որի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով:

Մինչև 16 տարեկան երեխաներին մշտական աշխատանքի ընդունելն արգելվում է: Նրանց ժամանակավոր աշխատանքի ընդունման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հարկադիր աշխատանքն արգելվում է:

**Հոդված 33.** Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով:

**Հոդված 33.1.** Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

**Հոդված 33.2.** Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը:

Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

**Հոդված 34.** Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում` բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

**Հոդված 35.** Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է:

Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը իրենց կամքի ազատ արտահայտությամբ ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս նրանք օգտվում են հավասար իրավունքներից:

Մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելն արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբե-

րության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

**Հոդված 36.** Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

Ծնողական իրավունքներից զրկելը կամ դրանց սահմանափակումը կարող է կատարվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

Չափահաս աշխատունակ անձինք պարտավոր են հոգ տանել իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների համար:

**Հոդված 37.** Յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով:

**Հոդված 38.** Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով:

**Հոդված 39.** Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:

Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքով կարող է սահմանվել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության սկզբունքները որոշվում են օրենքով:

Ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

**Հոդված 40.** Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

**Հոդված 41.** Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք:

**Հոդված 42.** Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները չեն բացառում օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներ և ազատություններ:

Յուրաքանչյուր ոք ազատ է կատարելու այն, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները և ազատությունները: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն:

Անձի իրավական վիճակը բարելավող, նրա պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

**Հոդված 42.1.** Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա

այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

**Հոդված 43.** Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

**Հոդված 44.** Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 և 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում:

**Հոդված 45.** Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

**Հոդված 46.** Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

**Հոդված 47.** Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

**Հոդված 48.** Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են`

1) պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը.

2) նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը.

3) խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը.

4) իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը.

5) նպաստել երիտասարդության մասնակցությանը երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին.

6) խթանել ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը.

7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.

8) նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը.

9) նպաստել գիտության և մշակույթի զարգացմանը.

10) իրականացնել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն.

11) նպաստել ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը.

12) ապահովել տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը:

Պետությունը պարտավոր է իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ ձեռնարկել սույն հոդվածում ամրագրված խնդիրների իրականացման համար:

## Գ Լ ՈՒ Խ 3

## *ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ*

**Հոդված 49.** Հանրապետության Նախագահը պետության գլուխն է:

Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը:

Հանրապետության Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

**Հոդված 50.** Հանրապետության Նախագահին ընտրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով:

Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում:

**Հոդված 51.** Հանրապետության Նախագահին ընտրվում է Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով: Հանրապետության Նախագահի ընտրությունը անցկացվում է նրա լիազորությունների ավարտից հիսուն օր առաջ:

Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին:

Եթե քվեարկվել է երկուսից ավելի թեկնածու, և նրանցից ոչ մեկին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ, ապա քվեարկությու-

նից հետո՝ տասնչորսերորդ օրը, անցկացվում է Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլ: Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլին կարող են մասնակցել այն երկու թեկնածուները, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Երկրորդ փուլում Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

Եթե Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքների վերաբերյալ սահմանադրական դատարանը գործ է ընդունում քննության, ապա որոշում պետք է կայացնի դիմումը ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, իսկ սույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվվում են դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Եթե Հանրապետության Նախագահ չի ընտրվում, ապա նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակվելուց հետո՝ քառասուներորդ օրը:

Հանրապետության Նախագահն իր պաշտոնն ստանձնում է Հանրապետության նախորդ Նախագահի լիազորությունների ավարտման օրը:

Նոր կամ արտահերթ ընտրության միջոցով ընտրված Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է ընտրությունից հետո՝ քսաներորդ օրը:

**Հոդված 52.** Հանրապետության Նախագահի թեկնածուներից մեկի համար անհաղթահարելի խոչընդոտներ առաջանալու դեպքում Հանրապետության Նախագահի ընտրությունը հետաձգվում է երկշաբաթյա ժամկետով: Անհաղթահարելի ճանաչված խոչընդոտները չվերանալու դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նշված երկշաբաթյա ժամկետը լրանալուց հետո՝ քառասուներորդ օրը:

Մինչև քվեարկության օրը թեկնածուներից մեկի մահվան դեպքում նշանակվում է նոր ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է նոր ընտրություն նշանակելուց հետո՝ քառասուներորդ օրը:

**Հոդված 53.** Հանրապետության Նախագահի հրաժարականի, մահվան, լիազորությունների կատարման անհնարինության կամ Սահմանադրության 57-րդ հոդվածով սահմանված կարգով նրան պաշտոնանկ անելու դեպքերում նշանակվում է Հանրապետության Նախագահի արտահերթ ընտրություն, իսկ քվեարկությունն անցկացվում է Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ քառասուներորդ օրը:

**Հոդված 53.1.** Ռազմական և արտակարգ դրության ժամանակ Հանրապետության Նախագահի ընտրություն չի անցկացվում, իսկ Հանրապետության Նախագահը շարունակում է իր լիազորությունների իրականացումը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ քառասուներորդ օրը, անցկացվում է Հանրապետության Նախագահի ընտրություն:

**Հոդված 54.** Հանրապետության Նախագահը պաշտոնն ստանձնում է օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. Անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի:»:

**Հոդված 55.** Հանրապետության Նախագահը՝

1) ուղերձով դիմում է ժողովրդին և Ազգային ժողովին.

2) Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը.

3) Սահմանադրության 74.1-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ու կարգով արձակում է Ազգային ժողովը և նշանակում արտահերթ ընտրություն.

4) Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Հանրապետության Նախագահը վարչապետ է նշանակում կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում:

Հանրապետության Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին:

Հանրապետության Նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության Նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, կառավարությանն անվստահություն հայտնվելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Հանրապետության Նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը.

5) օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ է կատարում պետական պաշտոններում.

6) կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ.

7) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմա-

նագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը.

8) նշանակում և հետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերը.

9) Ազգային ժողովին է առաջարկում գլխավոր դատախազի, կենտրոնական բանկի նախագահի և վերահսկիչ պալատի նախագահի թեկնածությունները: Գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին.

10) նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահի չնշանակելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ:

Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

11) արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ,

արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին.

11.1) նշանակում է արդարադատության խորհրդի երկու իրավաբանգիտնական անդամներ.

12) զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը.

13) Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին:

Պատերազմի ժամանակ Հանրապետության Նախագահը կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին:

Զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով.

14) սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին:

Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով.

15) օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը.

16) պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում բարձրագույն զինվորական և պատվավոր կոչումներ, բարձրագույն դիվանագիտական և այլ դասային աստիճաններ.

17) ներում է շնորհում դատապարտյալներին:

**Հոդված 56.** Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագրեր և կարգադրություններ, որոնք չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին ու ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

**Հոդված 56.1.** Հանրապետության Նախագահն անձեռնմխելի է:

Հանրապետության Նախագահն իր լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Իր կարգավիճակի հետ չկապված գործողությունների համար Հանրապետության Նախագահը կարող է պատասխանատվության ենթարկվել իր լիազորությունների ավարտից հետո:

**Հոդված 57.** Հանրապետության Նախագահը կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար:

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարցի մասին եզրակացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան:

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է Ազգային ժողովի քննարկումից:

**Հոդված 58.** Հանրապետության Նախագահն իր հրաժարականը ներկայացնում է Ազգային ժողով: Հրաժարականը ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետը լրանալուն պես, երկօրյա ժամկետում հրաժարականը կրկին ներկայացնելու դեպքում Հանրապետության Նախագահի հրաժարականը համարվում է ընդունված, և Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում անցկացվում է արտահերթ ընտրություն:

**Հոդված 59.** Հանրապետության Նախագահի ծանր հիվանդության կամ նրա լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տևականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների կատարումը, Ազգային ժողովը կառավարության առաջարկով և սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին: Եթե սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության հիմքերը բացակայում են, ապա կառավարությունը չի կարող նման առաջարկով դիմել Ազգային ժողով:

**Հոդված 60.** Հանրապետության Նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մինչև նորընտիր Նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը, Հանրապետության Նախագահի պարտականությունները կատարում է Ազգային ժողովի նախագահը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա վարչապետը: Ազգային ժողովի նախագահի կողմից Հանրապետության Նախագահի պարտականությունները կատարելիս Ազգային ժողովի նախագահի լիազորությունները կատարում է Ազգային ժողովի նախագահի այն տեղակալը, որը պաշտոնում ընտրվելիս ստացել էր առավել շատ ձայներ: Այդ ընթացքում արգելվում է նշանակել հանրաքվե, նշանակել վարչապետին, նշանակել և ազատել զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը (բացառությամբ ռազմական դրության ժամանակ), օրենքով նախատեսված դեպքերում նշանա-

կումներ կատարել ոստիկանության և ազգային անվտանգության մարմինների պաշտոններում, ինչպես նաև իրականացնել Սահմանադրության 55-րդ հոդվածի 3, 8, 16, 17-րդ կետերում սահմանված լիազորությունները:

**Հոդված 61.** Հանրապետության Նախագահը օրենքով սահմանված կարգով ձևավորում է իր աշխատակազմը: Հանրապետության Նախագահի վարձատրության, սպասարկման և անվտանգության ապահովման կարգը սահմանվում է օրենքով:

## Գ Լ ՈՒ Խ 4

## *ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ*

**Հոդված 62.** Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ և հայտարարություններ: Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ: Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:

**Հոդված 63.** Ազգային ժողովը կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից:

Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Նրա լիազորությունների ժամկետը սկսվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահից:

Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարման պահին: Ազգային ժողովը չի կարող արձակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ, ինչպես նաև, երբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված:

Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություն չի անցկացվում, իսկ Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը: Այս դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ոչ շուտ, քան հիսուն, և ոչ ուշ, քան վաթսուն օրվա ընթացքում անցկացվում է Ազգային ժողովի ընտրություն:

**Հոդված 64.** Պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

**Հոդված 65.** Պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Պատգամավորն իր լիազորությունները կատարում է մշտական հիմունքներով:

Պատգամավորի կարգավիճակը և գործունեության երաշխիքները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

**Հոդված 66.** Պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

Պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների,

այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:

Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:

Պատգամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:

**Հոդված 67.** Պատգամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Ազգային ժողովն արձակվելու, Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու, մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու, ազատազրկման դատապարտվելու, անգործունակ ճանաչվելու և հրաժարականի դեպքերում:

Պատգամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

**Հոդված 68.** Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է նրա լիազորությունների ավարտին նախորդող ոչ շուտ, քան քառասուն, և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

Ազգային ժողովի արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովն արձակելուց հետո ոչ շուտ, քան երեսուն, և ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում:

Ազգային ժողովի ընտրությունը նշանակվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երրորդ հինգշաբթի օրը:

Արտահերթ ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանը գումարվում է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի ընտրությունից հետո՝ երկրորդ հինգշաբթի օրը:

**Հոդված 69.** Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով:

Ազգային ժողովի նիստերը դռնբաց են: Դռնփակ նիստ կարող է գումարվել Ազգային ժողովի որոշմամբ:

**Հոդված 70.** Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում:

**Հոդված 71.** Օրենքները և Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

**Հոդված 72.** Հանրապետության Նախագահի առարկությունները և առաջարկությունները չընդունելու դեպքում Ազգային ժողովը վերադարձված օրենքը վերստին ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում է արտահերթ:

**Հոդված 73.** Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:

Մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար:

Անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ՝ առանձին օրենքների նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:

**Հոդված 74.** Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ և քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

**Հոդված 74.1.** Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին:

Հանրապետության Նախագահը Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է արձակել Ազգային ժողովը, եթե՝

ա) Ազգային ժողովը հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ.

բ) հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովի նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում.

գ) հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում:

**Հոդված 75.** Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը:

Կառավարությունը կարող է սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով:

Կառավարության եզրակացության համաձայն՝ պետական բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերն Ազգային ժողովն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Կառավարությունն իր կողմից ներկայացված օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Եթե կառավարության կողմից իր վստահության հարցը դնելուց հետո՝ քսանչորս ժամվա ընթացքում, Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը չի ներկայացնում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ կամ նման նախագիծ ներկայացվելու դեպքում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ 84-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված ժամկետում որոշում չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին, ապա վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված:

Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ:

**Հոդված 76.** Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Պետական բյուջեի քննարկման և հաստատման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

**Հոդված 77.** Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Ազգային ժողովը վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը:

**Հոդված 78.** (հանված է)

**Հոդված 79.** Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում է Ազգային ժողովի նախագահ:

Ազգային ժողովի նախագահը վարում է նիստերը, տնօրինում է Ազգային Ժողովի նյութական միջոցները, ապահովում նրա բնականոն գործունեությունը:

Ազգային ժողովն ընտրում է Ազգային ժողովի նախագահի երկու տեղակալ:

**Հոդված 80.** Պատգամավորներն իրավունք ունեն գրավոր և բանավոր հարցերով, իսկ խմբակցությունները և խմբերը նաև հարցապնդումներով դիմելու կառավարությանը: Հերթական նստաշրջանի նիստերի գումարման շաբաթվա մեկ նիստում վարչապետը և կառավարության անդամները պատասխանում են պատգամավորների հարցերին: Պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում: Հարցապնդումները ներկայացվում են գրավոր և քննարկումից առնվազն տասն օր առաջ:

Հարցապնդումներով դիմելու, քննարկում կազմակերպելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

**Հոդված 81.** Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝

1) հայտարարում է համաներում.

2) վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Ազգային ժողովի վավերացմանը ենթակա են այն միջազգային պայմանագրերը՝

ա) որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ կամ նախատեսում են պետական սահմանի փոփոխություն,

բ) որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին,

գ) որոնք ֆինանսական պարտավորություններ են նախատեսում Հայաստանի Հանրապետության համար,

դ) որոնց կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր,

ե) որոնցով նախատեսված է վավերացում,

զ) օրենքով սահմանված այլ դեպքերում.

3) որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության Նախագահը:

Ազգային ժողովը կարող է չեղյալ հայտարարել Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված միջոցառումների իրականացումը:

**Հոդված 82.** Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ սահմանում է Հանրապետության վարչատարածքային բաժանումը:

**Հոդված 83.** Ազգային ժողովը՝

1) Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հինգ անդամ.

2) սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ.

3) սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները, համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

4) ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնականների:

**Հոդված 83.1.** Ազգային ժողովը մարդու իրավունքների պաշտպանին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով:

Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձը, որը համապատասխանում է պատգամավորին ներկայացվող պահանջներին:

Մարդու իրավունքների պաշտպանն անփոփոխելի է:

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք համագործակցում են մարդու իրավունքների պաշտպանի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է պատգամավորի համար սահմանված անձեռնմխելիությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այլ երաշխիքները սահմանվում են օրենքով:

**Հոդված 83.2**. Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

**Հոդված 83.3.** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է:

Կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

Կենտրոնական բանկը թողարկում է Հայաստանի Հանրապետության արժույթը՝ հայկական դրամը:

Կենտրոնական բանկը Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված խնդիրները և գործառույթներն իրականացնելիս անկախ է:

Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել կենտրոնական բանկի նախագահ:

Օրենքով սահմանված դեպքերում Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ կարող է պաշտոնանկ անել կենտրոնական բանկի նախագահին:

**Հոդված 83.4.** Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը:

Վերահսկիչ պալատը տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

Վերահսկիչ պալատի գործունեության կարգը և իրավասությունը սահմանվում են օրենքով:

Վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Հանրապետության Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով:

Վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել վերահսկիչ պալատի նախագահ:

**Հոդված 83.5.** Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքնե-րով են սահմանվում՝

1) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրակա-նացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը.

2) ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազա-տությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատաս-խանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տե-սակները, չափը, վճարման կարգը.

3) իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողու-թյուն ու վերահսկողություն (այդ թվում՝ ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը.

4) իրավաբանական անձինք ստեղծելու, դրանց գործունեությունը կա-սեցնելու կամ դադարեցնելու կարգը և պայմանները.

5) ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրա-վաբանական անձանց՝ առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկություն-ների ցանկը.

6) քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պատիժների իրականացման կարգը, դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը, փաստաբանների կարգավի-ճակը և լիազորությունները.

7) հանրաքվեների, Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը.

8) պետական բյուջեի ձևավորման և դրա ծախսման կարգը.

9) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, չեղյալ համարելու կարգը և պայմանները.

10) կուսակցությունների և այլ հասարակական միավորումների, զանգվածային լրատվության միջոցների իրավական կարգավիճակը.

11) Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորները և դրանց սահմանները:

**Հոդված 84.** Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը:

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը կարող է ներկայացվել Հանրապետության Նախագահի կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից: Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ նման որոշման նախագիծ չի կարող ներկայացվել:

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ շուտ, քան քառասունութ, և ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում:

## Գ Լ ՈՒ Խ 5

## *ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ*

**Հոդված 85.** Կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ: Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների կամ Հանրապետության Նախագահի նորմատիվ ակտերի հիման վրա և դրանց կատարումն ապահովելու նպատակով կառավարությունն ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման Հանրապետության ամբողջ տարածքում:

Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: Նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ Հանրապետության Նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ և փոխարինել վարչապետին վերջինիս բացակայության ժամանակ:

Վարչապետը և նախարարները պետք է լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

**Հոդված 86.** Կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը:

Արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել Հանրապետության Նախագահը:

Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը:

Հանրապետության Նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար:

**Հոդված 87.** Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:

Վարչապետն ընդունում է որոշումներ՝ կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերով:

**Հոդված 88.** Կառավարության անդամը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել

այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

**Հոդված 88.1.** Մարզպետները նշանակվում և ազատվում են կառավարության որոշմամբ: Կառավարության այդ որոշումները վավերացվում են Հանրապետության Նախագահի կողմից:

Մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Երևան քաղաքում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

**Հոդված 89.** Կառավարությունը՝

1) Սահմանադրության 74-րդ հոդվածով նախատեսված կարգով Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը.

2) Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով.

3) կառավարում է պետական սեփականությունը.

4) իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը.

4.1) իրականացնում է տարածքային զարգացման պետական քաղաքականությունը.

5) իրականացնում է պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում.

6) ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը.

7) ապահովում է հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ.

8) իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ գործառույթներ և լիազորություններ:

**Հոդված 90.** Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ և կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի ավարտը: Բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված կարգով կառավարությանն անվստահություն չի հայտնում, ապա պետական բյուջեն՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:

Բյուջեի հաստատման առնչությամբ Ազգային ժողովի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում նոր կառավարությունը բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը հավանության արժանանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, որը քննարկվում և հաստատվում է սույն հոդվածով նախատեսված կարգով՝ երեսուն օրվա ընթացքում:

## Գ Լ ՈՒ Խ 6

## *ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

**Հոդված 91.** Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:

**Հոդված 92.** Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառու-

թյունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

**Հոդված 93.** Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը:

**Հոդված 94.** Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով:

Դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով:

Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով:

**Հոդված 94.1.** Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը:

Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ:

Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

**Հոդված 95.** Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

1) կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.

2) եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ.

3) առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները.

4) Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ.

5) դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

**Հոդված 96.** Դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են: Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչև 65 տարին լրանալը: Նրանց լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:

**Հոդված 97.** Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:

Դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության:

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես

դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և համապատասխանաբար վճռաբեկ դատարանի նախագահը կամ սահմանադրական դատարանի նախագահը:

**Հոդված 98.** Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:

**Հոդված 99.** Սահմանադրական դատարանը կազմված է ինն անդամից:

**Հոդված 100.** Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1) լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտները.

5) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է տալիս Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին.

7) եզրակացություն է տալիս սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացություն է տալիս համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

9) օրենքով նախատեսված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

**Հոդված 101.** Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.

7) դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.

8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

9) Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

**Հոդված 102.** Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ և եզրակացություններ՝ Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված ժամկետներում և կարգով:

Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-4-րդ և 9-րդ կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-8-րդ կետերով նախատեսված հարցերով՝ եզրակացություններ: Եզրակացությունները և 9-րդ կետով նախատեսված հարցերով որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մնացած որոշումները՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:

**Հոդված 103.** Հայաստանի Հանրապետության դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

Գլխավոր դատախազին Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել գլխավոր դատախազ:

Օրենքով սահմանված դեպքերում Հանրապետության Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին:

Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում.

2) հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ.

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան.

5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

## Գ Լ ՈՒ Խ 7

## *ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ*

**Հոդված 104.** Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:

**Հոդված 104.1.** Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրությունն է:

Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:

**Հոդված 105.** Համայնքի սեփականությունը կառավարելու և տնօրինելու, համայնքային նշանակության հարցեր լուծելու և համայնքի պահանջմունքների բավարարմանն ուղղված այլ լիազորությունները համայնքն իրականացնում է որպես սեփական լիազորություններ: Համայնքի սեփական լիազորությունների մի մասն օրենքով կարող է սահմանվել որպես պարտադիր:

Պետական իշխանության մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

**Հոդված 105.1.** Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողը, բացառությամբ պետական կարիքների համար անհրաժեշտ, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:

**Հոդված 106.** Համայնքներն իրենց բյուջեն ձևավորում են ինքնուրույն:

Համայնքների եկամուտների աղբյուրները սահմանվում են օրենքով:

Օրենքով սահմանվում են համայնքների ֆինանսավորման այնպիսի աղբյուրներ, որոնք ապահովում են նրանց լիազորությունների իրականացումը:

Համայնքներին պատվիրակված լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման:

Համայնքները սահմանում են տեղական հարկեր և տուրքեր՝ օրենքով նախատեսված սահմաններում:

Համայնքներն իրենց կողմից մատուցվող ծառայությունների դիմաց կարող են սահմանել վճարներ:

**Հոդված 107.** Համայնքն իր ինքնակառավարման իրավունքն իրականացնում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի

ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով, որոնք օրենքով սահման- ված կարգով ընտրվում են չորս տարի ժամկետով:

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքով սահմանված կարգով սահմանում տեղական հարկեր, տուրքեր և վճարներ, ընդունում է համայնքի տարածքում պարտադիր կատար- ման ենթակա իրավական ակտեր: Համայնքի ավագանու կողմից ընդուն- վող ակտերը չեն կարող հակասել օրենսդրությանը, դրանց հրապարակ- ման և ուժի մեջ մտնելու կարգը սահմանվում է օրենքով:

Համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով:

Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղա- կան հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանվում է օրենքով:

**Հոդված 108.** Երևանը համայնք է: Երևան քաղաքում տեղական ինք- նակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևա- վորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող է սահմանվել Երևանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն:

**Հոդված 108.1.** Տեղական ինքնակառավարման մարմինների գործու- նեության օրինականությունն ապահովելու նպատակով օրենքով սահ- մանված կարգով իրականացվում է իրավական հսկողություն: Համայն- քին պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարգը սահմանվում է օրենքով:

**Հոդված 109.** Կառավարությունը օրենքով նախատեսված դեպքերում սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պաշտոնանկ անել համայնքի ղեկավարին:

**Հոդված 110.** Համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել: Ազգային ժողովը համա-

պատասխան օրենքն ընդունում է կառավարության առաջարկով: Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից:

Համայնքների միավորման կամ բաժանման սկզբունքները, կարգը, ինչպես նաև նոր ձևավորված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամկետները սահմանվում են օրենքով:

Օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ:

### Գ Լ ՈՒ Խ 8

### *ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆ*

**Հոդված 111.** Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ:

Հանրաքվեն նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ: Համապատասխան որոշումը Ազգային ժողովն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Հանրապետության Նախագահը Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, կարող է այն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում:

Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով վերստին առաջարկված Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը Հանրա-

պետության Նախագահը հանրաքվեի է դնում Ազգային ժողովի սահմանած ժամկետում:

Եթե նախաձեռնությամբ հանդես է գալիս Հանրապետության Նախագահը, ապա Ազգային ժողովը Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում, նախագիծը հանրաքվեի դնելու հարցը ներկայացնում է քվեարկության: Եթե Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությունը կողմ է քվեարկում նախագծին, ապա վերջինս համարվում է ընդունված, և այն Հանրապետության Նախագահը հանրաքվեի է դնում իր սահմանած ժամկետում:

**Հոդված 112.** Օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով՝ Սահմանադրության 111-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքվեով:

**Հոդված 113.** Հանրաքվեի դրված նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ քառորդը:

**Հոդված 114.** Սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:

## Գ Լ ՈՒ Խ 9

## *ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**Հոդված 115.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները, բացառությամբ 55-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության՝ վերահսկիչ պալատի նախագահին և գլխավոր դատախազին վերաբերող դրույթների, 63-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի, 74.1-րդ հոդվածի առաջին մասի, 83.4-րդ հոդվածի, 85-րդ հոդվածի վեցերորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթի, 86-րդ հոդվածի, 88.1-րդ հոդվածի առաջին մա-

սի, 101-րդ հոդվածի 6-րդ կետի, 107-րդ հոդվածի առաջին մասում նշված ժամկետի, ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելու հաջորդ օրվանից:

**Հոդված 116.** Սահմանադրության փոփոխությունների 55-րդ հոդվածի 9-րդ կետի առաջին նախադասության՝ վերահսկիչ պալատի նախագահին և գլխավոր դատախազին վերաբերող դրույթները, 74.1-րդ հոդվածի առաջին մասը, 83.4-րդ հոդվածով սահմանված դրույթը, 86-րդ հոդվածը, 88.1-րդ հոդվածի առաջին մասն ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից:

63-րդ հոդվածի երկրորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթը կիրառվում է Ազգային ժողովի հաջորդ գումարումների համար:

85-րդ հոդվածի վեցերորդ մասի առաջին նախադասությամբ սահմանված դրույթն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 1-ից: 101-րդ հոդվածի 6-րդ կետն ուժի մեջ է մտնում 2006 թվականի հուլիսի 1-ից:

107-րդ հոդվածի առաջին մասում նշված ժամկետն ուժի մեջ է մտնում Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների համար:

**Հոդված 117.** Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին.

2) Ազգային ժողովը մեկ տարվա ընթացքում օրենքով սահմանում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Մինչ այդ գործում է մինչև Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելը գործող օրհներգը.

3) Սահմանադրությամբ սահմանված սոցիալական իրավունքները գործում են համապատասխան օրենքներով սահմանված ծավալով.

4) մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը Հանրապետության Նախագահը կարող է՝

ա) Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն,

բ) ազատել վարչապետին.

5) մինչև Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը կառավարության նիստերը հրավիրում և վարում է Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը.

6) մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում Հանրապետության Նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին.

7) կենտրոնական բանկի նախագահը պաշտոնավարում է մինչև գործող օրենքով սահմանված ժամկետի ավարտը.

8) վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից հետո՝ հինգ ամսվա ընթացքում: Մինչ այդ վերահսկիչ պալատը շարունակում է մինչև Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելը սահմանված լիազորությունների իրականացումը.

9) գլխավոր դատախազը շարունակում է պաշտոնավարել ոչ ավելի, քան հինգ ամիս Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրվանից հետո՝ մինչև Սահմանադրության 55-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված կարգով գլխավոր դատախազի նշանակումը.

10) արդարադատության խորհրդի գործող դատավոր և իրավաբանգիտնական անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Ազգային ժողովը երեք ամսվա ընթացքում ընտրում է արդարադատության խորհրդի երկու իրավաբանգիտնական անդամներին.

11) 83.2-րդ հոդվածով նախատեսված անկախ մարմնի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

իրենց լիազորությունների ժամկետի ավարտը: Նրանց պաշտոնավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր տեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի կողմից.

12) Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինները կազմավորվում են համապատասխան օրենքի ընդունումից հետո ոչ ուշ, քան երկու տարվա ընթացքում: Մինչ այդ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարումը և տարածքային կառավարումը իրականացվում են գործող օրենսդրությամբ սահմանված կարգով.

13) սահմանադրական դատարանի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց 70 տարին լրանալը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2006 թվականի հունիսի 15-ին*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության դրոշի նկարագրությունը և գործածման կարգը:

**Հոդված 2. Հայաստանի Հանրապետության դրոշը**

Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ վերևից ներքև կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է՝ 1:2-ի: Սույն մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դրոշի լայնության և երկարության հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշ:

Հայաստանի Հանրապետության դրոշի նկարագրության գունավոր պատկերը ներկայացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելվածում:

**Հոդված 3. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածումը**

Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է՝

Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի,

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի,

Հայաստանի Հանրապետության կառավարության,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի,

Հայաստանի Հանրապետության դատարանների,

Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների,

մարդու իրավունքների պաշտպանի,

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի,

հանրապետական գործադիր մարմինների,

պետական կառավարման այլ մարմինների,

Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների),

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի) շենքերի վրա:

Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես պետք է բարձրացվի օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) և Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչություն-

ների շենքերի վրա՝ միջազգային իրավունքի նորմերին, դիվանագիտական արարողակարգի կանոններին և ընդունող պետությունների սովորույթներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է Հայաստանի Հանրապետության մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում է փակման արարողությունների ժամանակ:

Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես տեղադրվում է՝

պաշտոնական, աշխատանքային և հանդիսավոր արարողությունների համար նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության դատարանների դատական նիստերի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերի դահլիճներում:

Հայաստանի Հանրապետության դրոշը տեղադրվում է՝

Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ

մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դատավորների և դատախազների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի), օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների) ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում:

Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է տեղադրվել այլ վայրերում, շենքերի, շինությունների, այդ թվում՝ բնակելի շենքերի վրա:

Հայաստանի Հանրապետության դրոշը կարող է ամրացվել՝

Հայաստանի Հանրապետության Նախագահի փոխադրամիջոցների վրա, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի փոխադրամիջոցների վրա՝ միայն արտասահմանյան պատվիրակությունների այցերի ժամանակ՝ Հայաստանի Հանրապետության պետական արարողակարգի հիմնադրույթներին համապատասխան, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունների ղեկավարների, դիվանագիտական և մշտական ներկայացուցչությունների ղեկավարների փոխա-

դրամիջոցների վրա՝ ընդունող պետությունների արարողակարգին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական պաշտոններում նշանակվող անձանց կամ օրենքով սահմանված այլ անձանց երդման արարողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո:

Սույն հոդվածով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության դրոշի և դրա պատկերի գործածման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 4. Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացումը, իջեցումը, փոխանցումը**

Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման, իջեցման, փոխանցման արարողակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության դրոշը իջեցվում է պաշտոնապես հայտարարված սգո օրերին կամ սգո արարողությունների ժամանակ՝ մինչև դրոշաձողի մեջտեղը: Դրոշի վերևի մասում ամրացվում է սև ժապավեն, որի երկարությունը հավասարեցվում է դրոշի երկարությանը:

**Հոդված 5. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածումը սգո արարողությունների ժամանակ**

Հայաստանի Հանրապետության մահացած (զոհված) քաղաքացուն զինվորական հարգանքի տուրք մատուցելու նպատակով կազմակերպված սգո արարողությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում մահացածի դին և դագաղը ծածկվում են Հայաստանի Հանրապետության դրոշով: Աճյունը հողին հանձ-

նելուց առաջ Հայաստանի Հանրապետության դրոշը հանձնվում է մահացածի (զոհվածի) հարազատներին:

**Հոդված 6. Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության դրոշի գործածումը օտարերկրյա պետության դրոշի հետ**

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության դրոշը օտարերկրյա պետության դրոշի հետ միաժամանակ բարձրացնելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է բարձրացվի տվյալ շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը): Եթե միաժամանակ բարձրացվում են կենտ թվով մի քանի դրոշներ, ապա Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է բարձրացվի դրանց մեջտեղում: Եթե բարձրացվում են զույգ թվով (2-ից ավելի) դրոշներ, ապա Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է բարձրացվի կենտրոնից ձախ:

Հայաստանի Հանրապետության դրոշն այլ պետությունների դրոշների հետ միաժամանակ բարձրացվելու դեպքում այլ պետությունների դրոշների չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության դրոշի չափերը:

**Հոդված 7. Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջները**

Բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է լինի ամբողջական, մաքուր և չգունաթափված, ընդ որում, դրոշի ներքևի մասը պետք է գտնվի գետնից 2,5 մետրից ոչ պակաս բարձրության վրա:

Դրոշի երկարության հարաբերությունը դրոշաձողի երկարության նկատմամբ կարող է լինել 1:1,7-ից ոչ պակաս:

Հայաստանի Հանրապետության դրոշը՝ ուղղահայաց դիրքով կախելու դեպքում պետք է ժամացույցի սլաքի ուղղության հակառակ 90 աստիճանով շրջել, այնպես, որ դեմքով դեպի դրոշը կանգնելիս կարմիր, կապույտ, նարնջագույն գույների հերթականությունը ձախից աջ չխախտվի:
Սույն օրենքով սահմանված կարգով մշտապես բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշը գիշերային ժամերին պետք է լուսավորվի:

**Հոդված 8. Հայաստանի Հանրապետության դրոշի ընդօրինակումը**

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների դրոշները պետք է տարբերվեն Հայաստանի Հանրապետության դրոշից:

**Հոդված 9. Հայաստանի Հանրապետության դրոշի գործածումը զինված ուժերի և այլ զորքերի կողմից**

Հայաստանի Հանրապետության դրոշը բարձրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, զորամասերի, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի առանձին ստորաբաժանումների, ինչպես նաև այլ զորքերի մշտական տեղակայման վայրերում՝ հանդիսությունների և պաշտոնական արարողությունների ժամանակ (զորահանդես, շարային ստուգատես, զինվորական երդում, տոնական միջոցառումներ և այլ հատուկ դեպքեր):
Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կանոնադրություններով նախատեսված դեպքերում զորամասի մարտական դրոշը դուրս բերելիս դուրս է բերվում նաև Հայաստանի Հանրապետության դրոշը:
Հայաստանի Հանրապետության դրոշը զորամասի մարտական դրոշի հետ միաժամանակ դուրս բերելու և տեղադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 10. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում**

Սույն օրենքի պահանջների խախտումը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 11. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**Հոդված 12. Անցումային դրույթներ**

1. Մինչև Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ձևավորումը սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխան պահանջը գործում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի համար:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «ՀՍՍՀ պետական դրոշի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1967 թվականի սեպտեմբերի 30-ի հրամանագիրը և «Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին» Հայաստանի Հանրապետության 1990 թվականի օգոստոսի 24-ի ՀՆ-0076-1 օրենքը:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

2006 թ. հուլիսի 4

Երևան

ՀՕ-149-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2006 թվականի հունիսի 15-ին*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

**Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության զինանշանի նկարագրությունը և գործածման կարգը:

**Հոդված 2. Հայաստանի Հանրապետության զինանշանը**

Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝ կենտրոնում՝ վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի թագավորություններից չորսի՝ վերևից ձախ՝ Բագրատունիների, վերևից աջ՝ Արշակունիների, ներքևից ձախ՝ Արտաշեսյանների, ներքևից աջ՝ Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:

Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ վերևից ձախ՝ կարմիր, վերևից աջ՝ կապույտ, ներքևից ձախ՝ կապույտ, ներքևից աջ՝ կարմիր, և կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները:

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը (գունավոր) ներկայացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելվածում:

**Հոդված 3. Հայաստանի Հանրապետության զինանշանի ընդօրինակումը**

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների զինանշանները, կազմակերպությունների խորհրդանիշները, ինչպես նաև այլ խորհրդանիշներն ու զինանշանները պետք է տարբերվեն Հայաստանի Հանրապետության զինանշանից:

**Հոդված 4. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը**

Հայաստանի Հանրապետության զինանշանի գունավոր պատկերը գործածվում է՝

Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների, Հայաստանի Հանրապետության դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրերի վրա, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի, հանրապետական գործադիր մարմինների, Հայաստանի Հանրապետության դատարանների, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի, պետական կառավարման այլ մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի), Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ձևաթղթերի վրա:

Հայաստանի Հանրապետության զինանշանի միագույն պատկերը գործածվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրերի կամ անձը հաստատող այլ փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման այն մարմինների կնիքների և ձևաթղթերի վրա, որոնց՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը գործածելու իրավունքը վերապահված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**Հոդված 5. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի տեղադրումը**

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը մշտապես տեղադրվում է՝

Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի, Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների (ծառայությունների, խորհուրդների, հանձնաժողովների) ղեկավարների, Հայաստանի Հանրապետության դատավորների և դատախազների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի) աշխատասենյակներում, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում, Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի դահլիճում, Հայաստանի Հանրապետության դատարանների դատական նիստերի դահլիճներում, քաղաքացիական կացության ակտերի պետա-

կան գրանցման մարմինների հանդիսությունների սրահներում և շենքերի վրա, Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության դատախազության մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, մարդու իրավունքների պաշտպանի, հանրապետական գործադիր մարմինների, պետական կառավարման այլ մարմինների, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ Երևանի քաղաքապետի), Հայաստանի Հանրապետության նոտարական գրասենյակների շենքերի վրա, դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանատների, ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների), օտարերկրյա պետությունների տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության այլ պաշտոնական ներկայացուցչությունների շենքերի վրա և դրանց ղեկավարների աշխատասենյակներում, ուսումնական հաստատությունների սրահներից կամ նախասրահներից մեկում, Հայաստանի Հանրապետության պաշտոնական ինտերնետային կայքերում:

Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը տեղադրվում է նաև հիմնական սահմանային նշանների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցագրային կետերում:

Սույն օրենքով նախատեսված դեպքերից բացի, Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 6. Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը օտարերկրյա պետության զինանշանի հետ**

Հայաստանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում այլ պետությունների պետական զինա-

նշանների չափերը չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության զինանշանի չափերը:

Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրելու դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը չի կարող տեղադրվել ավելի ցածր, քան օտարերկրյա պետության զինանշանը:

Հայաստանի Հանրապետության զինանշանը օտարերկրյա պետության զինանշանի հետ միաժամանակ տեղադրվելու անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի տվյալ շենքի ձախ կողմից (դեմքով դեպի այդ շենքը): Եթե միաժամանակ տեղադրվում է կենտ թվով մի քանի զինանըշան, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի դրանց մեջտեղում: Եթե տեղադրվում են զույգ թվով (2-ից ավելի) զինանշաններ, ապա Հայաստանի Հանրապետության զինանշանը պետք է տեղադրվի կենտրոնից ձախ:

**Հոդված 7. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կողմից**

Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է տեղադրվել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի դրոշների վրա, Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների, զինծառայողների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության շարքային ու ղեկավար կազմի տարբերանշանների վրա:

**Հոդված 8. Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերի գործածումը Հայաստանի Հանրապետության դրամական միավորների, շքանշանների ու մեդալների վրա**

Հայաստանի Հանրապետության զինանշանը կարող է պատկերվել Հայաստանի Հանրապետության դրամական միավորների, շքանշանների ու մեդալների վրա:

**Հոդված 9. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում**

Սույն օրենքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 10. Օրենքի ուժի մեջ մտնելը**

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**Հոդված 11. Անցումային դրույթներ**

1. Մինչև Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի ձևավորումը սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան պահանջը գործում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի համար:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «ՀՍՍՀ պետական զերբի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1981 թվականի ապրիլի 29-ի հրամանագիրը և «Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի մասին» Հայաստանի Հանրապետության 1992 թվականի ապրիլի 19-ի ՀՆ-0580-1-ՀՕ-21 օրենքը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2006 թ. հուլիսի 4
Երևան
ՀՕ-148-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### ԳԼՈՒԽ 1.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1.** Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Սույն օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպականիրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:

Կրթության բնագավառը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

**Հոդված 2.** Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները

Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրներն են`

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների` Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.

2) իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև.

3) կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը:

**Հոդված 3.** Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) կրթություն` անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու **(հանվել է (ընդ.է 09.10.01թ., ուժի մեջ է` 14.11.01թ.)** սերունդներին փոխանցելու համար.

2) պետական կրթական չափորոշիչ՝ նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները.

3) կրթական ծրագիր՝ կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը.

4) ուսումնական հաստատություն՝ **կառույց (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան.

5) մանկապարտեզ՝ նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություն. **(հանվել է** «մասնավոր մանկապարտեզ, ընտանեկան մանկապարտեզ» բառերը) **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

6) հանրակրթական դպրոց՝ հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն.

7) վարժարան՝ ավանդական և այլընտրանքային մանկավարժական մեթոդների զուգորդմամբ հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ) իրականացնող ուսումնական հաստատություն: Վարժարանը կարող է իրականացնել նաև հիմնադրի առաջարկած և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած մանկավարժական գիտափորձը.

8) կրթահամալիր՝ տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում.

**8՛) արհեստագործական ուսումնարան՝ ուսումնական հաստատություն, որտեղ իրականացվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր.(ընդ.01.12.03 թ.)**

9) քոլեջ, ուսումնարան՝ ուսումնական հաստատություն, որտեղ իրականացվում է միջին մասնագիտական կրթական ծրագիր.

10) համալսարան՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն,

հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը.

11) ինստիտուտ՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ.

12) ակադեմիա (ուսումնական)՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի (բնագավառի) բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերաորակավորումը, հետբուհական կրթական ծրագրեր.

13) կոնսերվատորիա՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է երաժշտության ոլորտում մասնագետների պատրաստմանը, որակավորման բարձրացմանը և հետբուհական կրթական ծրագրերի իրականացմանը.

14) մասնաճյուղ՝ ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր.

15) ուսումնական կենտրոն՝ ուսումնական հաստատություն, որն իրականացնում է նախնական ու լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր. **(հանվել է .(ընդ.01.12.03 ք.)**

16) լիցենզավորում՝ ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթաց.

17) ատեստավորում՝ ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատում՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան.

18) պետական հավատարմագրում՝ պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը.

18[1]) արհեստագործ` նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորում անցած անձանց. (ընդ. 01.12.03 թ.)

19) կրտսեր մասնագետ` միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորում անցած անձանց. (խմբագրվել է. (ընդ.01.12.03 թ.)

20) բակալավր` բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող և առնվազն քառամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց.

21) դիպլոմավորված մասնագետ` բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ (լրիվ) ընդհանուր կամ մասնագիտական կրթություն ունեցող անձանց` առնվազն հնգամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

22) մագիստրոս` բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց` երկամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

23) հետազոտող` հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց` ասպիրանտուրայում եռամյա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

24) ինտերն` բարձրագույն բժշկական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բժշկական բարձրագույն կրթական ծրագրերն ավարտած և առնվազն մեկ տարվա հետբուհական ուսուցում ստացած անձանց.

25) կլինիկական օրդինատոր` բարձրագույն մասնագիտական որակավորման աստիճան, որը շնորհվում է բարձրագույն բժշկական կրթություն ունե-

ցող անձանց՝ երկուսից մինչև հինգ տարվա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

26) էքստեռն (այսուհետ՝ ղրսեկություն)՝ ինքնակրթության և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ ատեստավորման եղանակով իրականացվող կրթության ձև:

**Հոդված 4.** Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը

1. Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:

2. Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

3. Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին:

4. Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

5. Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

**Հոդված 5.** Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգաց-

ման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.

4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.

5) սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը.

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.

7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.

8) պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների՝ կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

9) պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:

Հոդված 6. Կրթական իրավունքի պետական երաշխիքները

1. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով:

2. Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ:

3. Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

4. Պետական հանրակրթական դպրոցների **առաջինից երրորդ** (27.11.2000թ., **ուժի մեջ է մտնում** 01.01.2003թ-ից) դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով՝ **բացառությամբ օտար լեզուների և երաժշտական դասագրքերի** (**ընդ.է** 11.12.02**թ., ուժի մեջ է**՝ 08.01.03**թ.**), իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով:

5. Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին պետությունն աջակցում է՝ ստանալու համապատասխան մակարդակի կրթություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

6. Պետությունն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների կրթության համար՝ զարգացման շեղումները շտկելու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

7. Պետությունը նպաստում է, որ կրթական գործունեությանը մասնակցի նաև սփյուռքահայությունը:

**Հոդված** 7. Ուսուցման լեզուն

Հայաստանի Հանրապետությունում կրթությունն իրականացվում է «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

## ԳԼՈՒԽ 2.

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**Հոդված** 8. Կրթության համակարգը

Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

**Հոդված** 9. Պետական կրթական չափորոշիչները

Հայաստանի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք շրջանավարտների կրթության

մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից:

**Հոդված 10.** Կրթական ծրագրերը

1. Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կրթական ծրագրերն են՝

1) հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ).

2) մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

2. Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

Հանրակրթական հիմնական ծրագրերը ներառում են՝

1) նախադպրոցական կրթությունը.

2) տարրական ընդհանուր կրթությունը.

3) հիմնական ընդհանուր կրթությունը.

4) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունը.

5) հատուկ ընդհանուր կրթությունը:

3. Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

1) նախնական մասնագիտական (արհեստագործական).

2) միջին մասնագիտական.

3) բարձրագույն մասնագիտական.

4) հետբուհական մասնագիտական:

4. Ուսումնական հաստատություններում հանրակրթական և մասնագիտական հիմնական ծրագրերի յուրացման ժամկետները որոշվում են սույն օրենքով և համապատասխան պետական կրթական չափորոշիչով:

5. Լրացուցիչ կրթական ծրագրերը (հանրակրթական և մասնագիտական) նպատակաուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների և մասնագետների կրթական պահանջմունքների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը:

**Հոդված** 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

2. Կրթության բովանդակությունն ապահովում է`

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

**Հոդված** 12. Կրթության ձևերը

1. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան` կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով:

2. Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը:

**Հոդված 13.** Ուսումնական հաստատությունների տիպերը

1. Ուսումնական հաստատությունների տիպերն են`

1) նախադպրոցական.

2) հանրակրթական (տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր, հատուկ ընդհանուր).

**$2^{1}$) նախնական մասնագիտական (արհեստագործական). (ընդ. 01.12.03 թ.)**

3) միջին մասնագիտական.

4) բարձրագույն մասնագիտական.

5) լրացուցիչ կրթության, **այդ թվում` արտադպրոցական դաստիարակության. (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)**

6) հետբուհական մասնագիտական կրթության:

2. Սույն օրենքին համապատասխան` կրթական ծրագրեր կարող են իրականացվել նաև ոչ ուսումնական հաստատություններում` կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

**Հոդված 14.** Կրթական գործընթացի կազմակերպումը

1. Կրթական գործընթացը կազմակերպվում է սույն օրենքին համապատասխան և կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

**3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, համապատասխան բնագավառի(ների) պետական կառավարման լիազորված մարմնի հետ համաձայնեցված և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած չափորոշիչներին համապատասխանեցված, հաստատում են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին**

**մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները: (խմբագրվել է. (ընդ.01.12.03թ.)**

4. Բարձրագույն կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատությունը: Դրանք ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

4՛) **համարակալումը փոփ. (ընդ.01.12.03թ.)** Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը վերահսկում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին:

5. Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչով:

6. Հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որի անցկացման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

7. Դրսեկության ձևով հանրակրթության, **նախնական մասնագիտական (արհեստագործական), (ընդ.01.12.03թ.)** մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Հեռակա ձևով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության **կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)** մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 15.** Ուսումնական հաստատության ընդունելությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. **Սույն օրենքին համապատասխան**` ուսումնական հաստատությունում սովորողների ընդունելության պահանջները սահմանում է հիմնադիրը` **հաշվի**

**առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները:** (ընդ. է 18.02.00թ., ուժի մեջ է մտել 15.04.2000թ.)

2. Ուսումնական հաստատությունը պարտավոր է դիմորդներին և նրանց ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել ուսումնական հաստատության կանոնադրությանը և կրթական գործընթացը կարգավորող մյուս փաստաթղթերին:

3. Ընդհանուր կրթությունն սկսվում է **վեց և կես (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)** տարեկանից (որը կարող է լրանալ մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը): Մինչև նշված ժամկետը յոթ տարին չլրացած երեխաների ընդունելությունն իրականացնում են դպրոցները՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

4. **Պետական (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)** միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքով:

(**Պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների հրամանագրումն ավարտվում է ընդունելության քննությունների ավարտից հետո՝ քսանօրյա ժամկետում:** (ընդ.է 4.12.00թ., ուժի մեջ է՝ 28.12.00թ.) **) հանվել է և խմբագրվել հետևյալ կերպ.**

**Պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանվում են օրենքով, իսկ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

Մինչև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության արտոնությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: **(ընդ.է 0705.02թ., ուժի մեջ է՝ 19.06.02թ.)**

5.Պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում և մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը պաշտոնապես հրապարակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հաստատված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է:

Պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը ներառում է`

1) կրթության ձևը (առկա (ստացիոնար), հեռակա (դրսեկության).
2) մասնագիտություններն ըստ բուհերի.
3) յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված ընդունելության քննությունների առարկաների անվանումը.
4) քննության ձևը (մրցութային, ոչ մրցութային).
5) քննության տեսակը` գրավոր (թելադրություն, շարադրություն, թեստ), բանավոր, հարցազրույց և այլն:

6. Պետական հանրակրթական դպրոցների ավարտական, ինչպես նաև պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների անցկացման համար նախատեսվող հարցաթերթիկները (հարցաշարերը, քննական հարցերը, խնդիրները և այլ առաջադրանքները) կազմում են բացառապես պետական հանրակրթական դպրոցների (1-11-րդ դասարանների) կրթական ծրագրերով նախատեսված, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից պետական հանրակրթական դպրոցներում օգտագործման համար երաշխավորված և առնվազն մեկ ուսումնական տարվա ընթացքում պետական հանրակրթական դպրոցներում օգտագործված (դասավանդված) դասագրքերին, ձեռնարկներին, խնդրագրքերին և ժողովածուներին համապատասխան: **(ընդ.է 09.10.01թ., ուժի մեջ է` 14.11.01թ.)**

Հոդված 16. Հանրակրթական ծրագրերի իրականացումը

1. Հանրակրթական ծրագրերն իրականացնում են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները:

2. Հատուկ (օժանդակ) հանրակրթական դպրոցների ծրագրերը մշակվում են հիմնական հանրակրթական ծրագրերի հիման վրա` հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները և կարողությունները:

3. Նախադպրոցական, տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր և հատուկ ընդհանուր կրթության ծրագրերը կառուցվում են հաջորդականության սկզբունքով:

Նախորդ կրթական ծրագիրը (բացի նախադպրոցականից) չյուրացնելու դեպքում սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթական ուսուցման հաջորդ աստիճանին:

4. Տարրական և հիմնական ընդհանուր կրթության ծրագրերի շրջանակներում տվյալ ուսումնական տարվա ծրագրերը չյուրացրած սովորողի հետագա ուսումնառությունը կարգավորվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Հոդված 17. Նախադպրոցական կրթություն

1. Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներն են`

1) երեխայի ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը.

2) մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը.

3) հաշվելու տարրական կարողությունների զարգացումը.

4) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը.

5) հայրենիքի նկատմամբ հարգանքի և սիրո զգացման ձևավորումը.

6) աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը.

7) դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2. Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Պետությունը պայմաններ է ստեղծում ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար:

3. Ընտանիքին աջակցելու համար պետությունն ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ` տարբերակված ծրագրերով մսուր-մանկապարտեզներ և մանկապարտեզներ:

**Հոդված** 18. Տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր, միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն

1. Հանրակրթության նպատակը քաղաքացիների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելն է:

2. Հանրակրթության հիմնական խնդիրներն են`

1) սովորողների կողմից բնության, բնապահպանության, հասարակության, տեխնիկայի և արտադրության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը.

2) համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը.

3) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը:

3. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում` 11 **տարի (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)** ընդհանուր տևողությամբ` հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-3-րդ դասարաններ).

2) միջին դպրոց (**4-9-րդ դասարաններ**). **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)**

3) ավագ դպրոց (**10-11-րդ դասարաններ**): **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)**

4. Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և մաթեմատիկական տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

5. Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթական և հասարակական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը:

6. Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում:

7. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: 16 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը:

Պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը չի տարածվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որոնք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 19.** Հատուկ ընդհանուր կրթություն

1. Պետությունը հանրակրթական դպրոցի համապատասխան աստիճանի ծրագրով ստեղծում է մանկատներ և գիշերօթիկ դպրոցներ` առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցմանն աջակցելու նպատակով:

2. Պետությունն ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում` երկարօրյա և գիշերօթիկ)` կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում` հատուկ ծրագրերով:

4. Օրինազանց անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումը, օրենքով սահմանված կարգով, իրականացնում են հատուկ ռեժիմի դպրոցները:

5. Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները` հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները:

**Հոդված** 20. Արտադպրոցական դաստիարակություն

1. Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

2. Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

**Հոդված** 21. Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը

1. Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրականացնում են սույն օրենքով նախատեսված, կրթական տարբեր մակարդակներին բավարարող կրթական ծրագրեր` նախնական (արհեստագործական), միջին և

բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրեր պատրաստելու նպատակով:

2. Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների կրթական մասնագիտությունների ցանկը, ինչպես նաև համապատասխան մասնագիտական որակավորումների ուսուցման տևողությունը` ըստ մասնագիտությունների, և կրթության հիմքը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: (խմբագրվել է. (ընդ. 01.12.03թ.)

**Հոդված 22.** Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում:

3. Համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը կարող է իրականացվել նաև անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում), որի իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հիմքը` ըստ մասնագիտությունների, սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: (խմբագրվել է. (ընդ.01.12.03թ.)

**Հոդված 23.** Միջին մասնագիտական կրթություն

1. Միջին մասնագիտական կրթության նպատակը առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: (խմբագրվել է. (ընդ. 01.12.03թ.)

2. Մասնագիտությունների ցանկը, որոնց գծով թույլատրվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթության կազմակերպում, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական ու արհեստագործական կրթական ծրագրեր:

4. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է միջին մասնագիտական որակավորում: Բարձր առաջադիմություն ցուցաբերած **(հանվել է (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)** շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը կրթության կառավարման պետական լիազորված մարմնի ներկայացմամբ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 24.** Բարձրագույն մասնագիտական կրթություն

1. Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը:

2. Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերի ձևով (առկա, հեռակա, դրսեկություն), կազմակերպական-իրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ:

4. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման հետևյալ աստիճանները.

1) բակալավր.

2) դիպլոմավորված մասնագետ.

3) մագիստրոս:

5. Դիպլոմավորված մասնագետ պատրաստող բուհերի մասնագիտությունների ցանկը կրթության կառավարման պետական լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Բարձրագույն ուսումնական հաստատությունը, իր բնույթին համապատասխան և օրենքով սահմանված կարգով, կրթության պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցրած մասնագիտությունների գծով կարող է իրականացնել նաև հանրակրթական և միջին մասնագիտական կրթության ծրագրեր:

**Հոդված** 25. Հետբուհական մասնագիտական կրթություն

1. Հետբուհական մասնագիտական կրթության նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է:

2. Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական հիմնարկների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում` հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով: (**հանվել է** ) **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)**

**Հոդված** 26. Լրացուցիչ կրթություն

1. Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են քաղաքացիների և հասարակության կրթական պահանջմունքների բավարարման նպատակով: Մասնագիտական կրթության յուրաքանչյուր մակարդակի շրջանակում լրացուցիչ կրթության հիմնական խնդիրն անձի մասնագիտական որակավորման անընդհատ բարձրացումն է:

2. Լրացուցիչ կրթությունն իրականացվում է հանրակրթական, մասնագիտական և լրացուցիչ կրթության ուսումնական հաստատություններում, ինչպես նաև անհատական մանկավարժական գործունեության միջոցով, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## ԳԼՈՒԽ 3.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հոդված 27.** Ուսումնական հաստատության կարգավիճակը

1. Պետական ուսումնական հաստատությունը հիմնարկի կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը սույն օրենքին, օրենքներին ու իրավական այլ ակտերին համապասասխան, ձեռք է բերում իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ: **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

2. Պետական ուսումնական հաստատությունը, իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական, հետազոտական և գիտաարտադրական ծառայություններ և վճարովի ուսուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պետական ուսումնական հաստատությունն ունի հաշվեկշիռ, նախահաշիվ և բանկային հաշիվ:

**(Հանվել է նախկին 4-րդ կետը) (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

4. Ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

**Հոդված 28.** Համալսարանական (պետական բարձրագույն ուսումնական հաստատության) ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները

1. Համալսարանական պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողները օժտված են ակադեմիական ազատություններով: Նրանք իրավունք ունեն մասնակցելու համալսարանի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքին:

2. Պրոֆեսորադասախոսական կազմը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ազատ է դասավանդվող ուսումնական նյութի շարադրման և դասավանդման մեթոդների ընտրության մեջ:

3. Համալսարանական գիտաշխատողները սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաների ընտրությունը և մշակումն իրականացնելիս ազատ են:

4. Ուսանողներն ազատ են գիտելիքներ ստանալու, հետազոտություններով զբաղվելու՝ ըստ իրենց հակումների: Նրանք կարող են մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության ընտրովի պաշտոններն են՝ ռեկտոր, մասնաճյուղի (կրթահամալիրի) տնօրեն, ֆակուլտետի դեկան (ուսումնական ստորաբաժանման ղեկավար), ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս: Այդ պաշտոնները զբաղեցվում են բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում՝ բարձրագույն ուսումնական հաստատության (մասնաճյուղի) խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետի (ուսումնական ստորաբաժանման) խորհուրդ, հավակնորդների թեկնածությունները քննարկելու և գաղտնի (փակ) քվեարկությամբ ընտրելու արդյունքով:

**Երկրորդ մասը հանվել է (ընդ.է 18.04.01թ., ուժի մեջ է՝ 31.05.01թ.)**

6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների և ուսումնական հաստատությունների: Բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրեն հատկացված ընդունելության ընդհանուր տեղերի շրջանակներում կարող է ձևավորել ուսանողական համակազմի անվճար և վճարովի չափաքանակներ՝ յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսելով անվճար ուսուցման տեղեր՝ առնվազն տասը տոկոսի սահմաններում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը **(հանվել է (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.))** վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին փոխհատուցում է ուսման տարեկան վարձը՝ հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը:

**Վճարովի հիմունքներով սովորողներն ուսման վարձը կարող են մուծել ըստ կիսամյակների:** (ընդ.է 4.12.00թ., ուժի մեջ է՝ 28.12.00թ.)

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավասու է տնօրինելու սեփական ֆինանսական միջոցները՝ ապահովելով մասնաճյուղի, ֆակուլտետի (ուսումնական ստորաբաժանման) ֆինանսական գործունեության ինք-

նուրույնությունը` բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

Բարձրագույն ուսումնական հաստատության ծախսերի նախահաշվի նախագիծը ձևավորվելուց հետո յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաստատվում է բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդում և ներկայացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

8. Երևանի պետական համալսարանը կրթական և ինքնավար գիտամշակութային հաստատություն է, որի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Ընդունելության քննությունների մրցույթից դուրս մնացած դիմորդները բարձրագույն ուսումնական հաստատության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ կարող են հրամանագրվել վճարովի հիմունքներով, նախքան ընդունելության քննությունները բուհերի ներկայացրած տեղեկանքի հիման վրա, ելնելով բուհի իրական հնարավորությունից: Այս կարգով հրամանագրված ուսանողները չեն կարող օգտվել սույն հոդվածի 6-րդ կետի երկրորդ պարբերության և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի առաջին կետի «ա» ենթակետի արտոնություններից: (ընդ.է 4.12.00թ., ուժի մեջ է` 28.12.00թ.)

10. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը` ուսանողական խորհուրդը: Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմինը` պետական լիազորված մարմնի ընդունած օրինակելի կանոնադրության հիման վրա: (ընդ.է 18.04.01թ., ուժի մեջ է` 31.05.01թ.)

**Հոդված 29.** Ուսումնական հաստատության հիմնադիրը (հիմնադիրները)

1. Պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է` ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի:

2. Համայնքային (թաղային) ուսումնական հաստատության հիմնադիրը համայնքն (թաղն) է՝ ի դեմս համայնքի ինքնակառավարման մարմինների:

3. Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

4. Ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ կարող է հիմնադրել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 30.** Ուսումնական հաստատության ստեղծումը

1. Ուսումնական հաստատությունն ստեղծվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ:

2. Ուսումնական հաստատությունն ստեղծված է համարվում հիմնադրի (հիմնադիրների) կողմից դրա կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից: (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)

**Հոդված 31.** Ուսումնական հաստատության անվանումը և գտնվելու վայրը

1. Ուսումնական հաստատությունն ունի անվանում, որում նշվում է դրա կազմակերպական-իրավական ձևը, գործունեության բնույթը և գտնվելու վայրը:

2. Ուսումնական հաստատության գտնվելու վայրը դրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

3. Ուսումնական հաստատության և դրա մասնաճյուղերի անվանումներն ու գտնվելու վայրերը նշվում են հաստատության կանոնադրությունում:

**Հոդված 32.** Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը

1. Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը դրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:

2. Կանոնադրության պահանջները պարտադիր են ուսումնական հաստատության և դրա հիմնադիրների համար:

3. Ուսումնական հաստատության կանոնադրությունում նշվում են հաստատության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, հաստատության գտնվելու վայրը, գործունեության առարկան և նպատակները, կառավարման կարգը, տվյալներ՝ մասնաճյուղերի վերաբերյալ, ուսումնական հաստատու-

թյան գույքի ձևավորման աղբյուրները, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը, ուսումնական հաստատության լուծարման դեպքում՝ գույքի տնօրինման կարգը:

Ուսումնական հաստատության կանոնադրությունը կարող է պարունակել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

**Հոդված** 33. Ուսումնական հաստատության վերակազմակերպումը **(հանվել է (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.))**

1. Ուսումնական հաստատությունը կարող է վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան:

2. Ուսումնական հաստատությունը կարող է վերակազմակերպվել միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:

**Հոդված** 34. Ուսումնական հաստատության մասնաճյուղերը

1. Ուսումնական հաստատությունը կարող է ստեղծել մասնաճյուղեր:

2. Մասնաճյուղն իրավաբանական անձ չէ և գործում է ուսումնական հաստատության հաստատած կանոնադրության համաձայն:

Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծումը և գործունեությունը կարգավորվում են սույն օրենքով կամ միջպետական պայմանագրերով:

Մասնաճյուղի ղեկավարները նշանակվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված կարգով:

3. Մասնաճյուղերը գործում են իրենց ստեղծող ուսումնական հաստատությունների անունից: Ուսումնական հաստատությունները պատասխանատվություն են կրում իրենց մասնաճյուղերի գործունեության համար:

**Հոդված** 35. Ուսումնական հաստատության լուծարումը

1. Ուսումնական հաստատությունը լուծարվում է՝

1) հիմնադիրների կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ.

2) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելով՝ կապված դրա ստեղծման ժամանակ թույլ տրված՝ օրենքի կամ իրավական ակտերի խախտումների հետ.

3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու դեպքում.

4) (**հանվել է (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**) ուսումնական հաստատության սնանկության հետևանքով.

5) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Ուսումնական հաստատությունը լուծարվելիս դրա պարտատերերի պահանջները բավարարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո ուսումնական հաստատության մնացած գույքը հանձնվում է դրա հիմնադիրներին, եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Ուսումնական հաստատության լուծարումը համարվում է ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված, իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:

5. Լուծարված ուսումնական հաստատության սովորողների հետագա ուսուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

## ԳԼՈՒԽ 4.

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

**Հոդված 36.** Կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը.

2) հաստատում է պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը. (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)

3) հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը.

4) հաստատում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) (ընդ.01.12.03թ.) միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը.

5) հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.

6) հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 37.** Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝

1) մշակում է կրթության զարգացման պետական ծրագիրը և պետական կրթական **չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը. (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

2) վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման նկատմամբ.

3) ապահովում է օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը.

4) իրականացնում է ուսումնական հաստատությունների լիցենզավորումը և պետական հավատարմագրումը.

5) մշակում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.

6) հաստատում է ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգը.

7) ձևավորում է ուսումնական մասնագիտությունների ցանկերը.

8) մշակում է հանրակրթական, **նախնական մասնագիտական (արհեստագործական), (ընդ.01.12.03թ.)** միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերը.

9) հաստատում է պետական և հավատարմագրված ոչ պետական **նախնական մասնագիտական (արհեստագործական), (ընդ.01 .12.03թ.)** միջին և

բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնները, վերահսկում դրանց իրականացումը.

10) հաստատում է ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգը.

11) սահմանված կարգով հաստատում է հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների շնորհած պատվավոր կոչումները և տիտղոսները.

12) մշակում է կրթության բոլոր աստիճանների գծով պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

13) սահմանում է օտարերկրյա պետությունների կրթական փաստաթղթերի համարժեքության որոշման և ճանաչման կարգը.

14) ապահովում է պետական ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի ձևավորումը, իրականացումը և վերահսկումը.

15) համաձայնություն է տալիս մարզպետարանների և համայնքների կրթության վարչությունների (բաժինների) ղեկավարների **և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների** նշանակման և ազատման վերաբերյալ` **Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով**. (11.06.2001թ.)

**15.1) համաձայնություն է տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ. (լրաց. է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)**

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված** 38. Հանրակրթության բնագավառում մարզպետի իրավասությունը

Մարզպետը`

1) ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը.

2) վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում է կրթական և դաս-

տիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.

3) համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.

4) **ապահովում է պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցումը, շահագործումը և պահպանումը. (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

**Հոդված 39.** Հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունը

Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորության կարգով՝

1) ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) իրականացնում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 40.** Ուսումնական հաստատության իրավասությունը և կառավարումը

1. Ուսումնական հաստատությունն իր իրավասության շրջանակներում **կազմակարպում ու** (ընդ. է 21.02.00թ., ուժի մեջ է մտել 15.04.2000թ.) իրականացնում է ընդունելության և ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման, կազմակերպման և իրականացման, կադրերի ընտրության և տեղաբաշխման, գիտական, ֆինանսական, տնտեսական և այլ գործունեություն՝ սույն օրենքին, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին, իրավական

ակտերին և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

2. Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է սույն օրենքին, այլ իրավական ակտերին և ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

3. Ուսումնական հաստատությունը կառավարվում է միանձնյա ղեկավարման և ինքնավարության սկզբունքների զուգորդմամբ:

4. Ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը, ուսումնական հաստատության խորհուրդը, ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը: Ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

5. Ուսումնական հաստատությունը **ղեկավարում է (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)** տնօրենը, ռեկտորը (պետը), որը նշանակվում (ընտրվում) և ազատվում է ուսումնական հաստատության կանոնադրության համաձայն:

Պետական ուսումնական հաստատության տնօրենը, ռեկտորը (պետը) չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

6. Ուսումնական հաստատության կառավարման բարձրագույն և գործադիր մարմինների միջև լիազորությունները սահմանազատվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

**Հոդված 41.** Կրթական գործունեության լիցենզավորումը

1. Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիան տրվում է ուսումնական հաստատությանը հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

1) հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ.

2) լաբորատոր բազա և ուսումնական տարածք.

3) ուսումնամեթոդական ապահովում.

4) գրադարանային-տեղեկատվական համակարգ.

5) ուսումնաարտադրական պրակտիկայի բազա:

2. Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Կրթական ծրագրերի լիցենզավորումն իրականացվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)

**Հոդված 42.** Պետական հավատարմագրումը

1. Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատություն-ների և դրանց մասնագիտությունների:

2. Հավատարմագրման կարգը, չափանիշները և ժամկետները հաստա-տում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կրթության պետա-կան կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ:

3. Պետական հավատարմագրումն իրականացնում է կրթության պետա-կան կառավարման լիազորված մարմինը՝ անկախ ուսումնական հաստա-տության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպական-իրավական ձևից, ուսումնական հաստատության և նրա սովորողների ատեստավորման վերաբերյալ եզրակացության հիման վրա:

4. Պետական հավատարմագրման պայմաններն են՝

1) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովումը.

2) առանձին մասնագիտության գծով՝ երկու տարի անընդմեջ շրջանա-վարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման դրական արդյունքները.

3) ուսումնական հաստատության գծով՝ այդ հաստատության մասնագի-տությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայու-թյունը:

5. Նոր մասնագիտություններ բացելու դեպքում ուսումնական հաստա-տությունը պահպանում է իր պետական հավատարմագրված կարգավիճակը, եթե ապահովված են սույն օրենքի 42 հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

6. Պետական ուսումնական հաստատությունները և դրանց մասնագիտությունները, ինչպես նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների բժշկական մասնագիտությունները պարտադիր պետք է անցնեն հավատարմագրման գործընթաց:

7. Ուսումնական հաստատությունների մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ որակավորման աստիճանների:

8. Ուսումնական հաստատության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների (կրթահամալիրների, մասնաճյուղերի) կրթական գործունեությունը լիցենզավորվում, իսկ այդ ստորաբաժանումները և դրանց մասնագիտությունները հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ սույն օրենքով սահմանված կարգով:

9. Պետական հավատարմագրման վկայականը հաստատում է ուսումնական հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագրերի մակարդակը, դրանց բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

10. Լիցենզիա և պետական հավատարմագրման վկայական շնորհելու կամ այդ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

**Հոդված** 43. Պետական վերահսկողությունն ուսուցման որակի նկատմամբ

1. Ուսումնական հաստատությունների լիցենզավորման, ուսուցման որակի պետական վերահսկողության և մասնագիտությունների հավատարմագրման համար եզրակացություն տալու նպատակով կրթության պետական կառավարման լիազորված մարմինն ստեղծում է լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն: Ծառայության կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Լիցենզավորման և հավատարմագրման ծառայությունը, պարբերական ատեստավորումների արդյունքով, կարող է կրթության պետական կառավարման լիազորված մարմին զեկուցագիր ներկայացնել լիցենզավորման, ուսուց-

ման որակի կամ հավատարմագրված մասնագիտությունների՝ պետական կրթական չափորոշիչների պահանջները չապահովելու վերաբերյալ:

3. Զեկուցագրի ներկայացման համար կարող է հիմք ծառայել սովորողների (ծնողների) ընդհանուր ժողովի որոշումը կամ լիցենզավորման և հավատարմագրման ծառայության պաշտոնական ներկայացումը սովորողների ատեստավորման բացասական արդյունքի վերաբերյալ:

4. **Զեկուցագրի հիման վրա պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած որոշումն** ուսումնական հաստատությունը կարող է բողոքարկել դատարան: **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

5. Անընդմեջ երկու տարվա ընթացքում սովորողների 50 տոկոսի կրկնակի բացասական ատեստավորման դեպքում տվյալ մասնագիտությունը զրկվում է պետական հավատարմագրից:

6. Մասնագիտության պետական հավատարմագրման վերականգնումը կատարվում է նոր հավատարմագրում ստանալու կարգով:

**Հոդված 44.** Ուսումնական հաստատության ավարտական փաստաթուղթը

1. Ուսումնական հաստատությունն ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում է համապատասխան փաստաթուղթ (վկայական, **ատեստատ**, դիպլոմ): **(ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

2. Ուսումնական հաստատությունները հավատարմագրված մասնագիտությունների գծով ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում են պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտներին՝ զինվորական և դրան համապատասխանող քաղաքացիական կրթության պետական նմուշի ավարտական փաստաթուղթ):

3. Ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք են ստանում լիցենզավորման պահից:

4. Պետական նմուշի ավարտական փաստաթուղթը հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայման է:

5. Պետական մարմինների և բյուջետային հիմնարկների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված պետական նմուշի ավարտական փաստաթուղթն է:

6. Տվյալ մակարդակի կրթությունը չավարտած անձանց տրվում է համապատասխան տեղեկանք:

## ԳԼՈՒԽ 5.

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**Հոդված 45.** Սեփականության հարաբերությունները կրթության համակարգում

1. Պետական ուսումնական հաստատության գործունեությունն ապահովելու նպատակով՝ վերջինիս սեփականության կամ օգտագործման (անհատույց կամ հատուցելի) իրավունքով շենքեր, շինություններ, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ հանձնվող պետական գույքի տեսակները հաստատում է **կառավարությունը: (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.)**

2. Պետական ուսումնական հաստատությունը պատասխանատու է սեփականատիրոջ գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

3. Ոչ պետական ուսումնական հաստատությունների սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, բացի գույքի առանձին տեսակների համար՝ օրենքով նախատեսված սահմանափակումներից:

4. Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով: (ընդ.01.12.03թ.)

**Հոդված 46.** Պետական և համայնքային ուսումնական հաստատության ֆինանսավորումը

1. Ուսումնական հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը:

2. Պետությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը՝ նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում

կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը չպետք է ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից:

3. Պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի, սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով: (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է՝ 01.09.01թ.) Պետական պատվերով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով:

4. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

5. Ուսումնական հաստատությունը չի կարող վճարովի ուսումնական գործունեություն իրականացնել բյուջեից ֆինանսավորվող կրթական գործունեության փոխարեն:

6. Ուսումնական հաստատության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական և համայնքների բյուջեներն են:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները.

2) սեփական միջոցները, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներ:

7. Պետությունը կրթության բնագավառում ապահովում է բարենպաստ հարկային քաղաքականություն:

**Հոդված 47.** Ոչ պետական ուսումնական հաստատությունների միջոցները

1. Ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

2. Ոչ պետական ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները մեկ սովորողի հաշվարկով չեն կարող ցածր լինել պետական համանման ուսումնական հաստատությունների համար պետական չափորոշիչով սահմանված ֆինանսավորման չափանիշներից:

**Հոդված 48.** Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան

Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան, որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, գիտաարտադրական գործունեության և կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվում և զարգացվում է բյուջետայինի, ինչպես նաև սեփական միջոցների հաշվին` կրթության զարգացման պետական ծրագրի և ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի հիման վրա:

## ԳԼՈՒԽ 6.

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

**Հոդված 49.** Սովորողների իրավունքները և սոցիալական պաշտպանվածությունը

1. Ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

2. Արգելվում է սովորողներին ներգրավել աշխատանքի` առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է:

3. Բացառիկ ընդունակություններ դրսևորած երեխաների համար կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով կարող են ստեղծվել հանրակրթական համապատասխան հաստատություններ:

4. Պետությունն ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած և ծնողական խնամքից զուրկ երեխաների ուսուցումը պետական հանրակրթական հաստատություններում:

5. Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է բարձրացված չափաքանակներով:

6. Պետական միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները կրթաթոշակ են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

7. Ռազմաուսումնական հաստատությունների սովորողները դրամական բավարարմամբ, հանդերձանքով, սննդով և կացարանով ապահովվում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա բաժինների սովորողներն իրավունք ունեն տվյալ կամ այլ հաստատությունում վճարովի հիմունքներով ստանալ երկրորդ մասնագիտություն:

9. Սովորողներն ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իրավունք ունեն տեղափոխվելու համապատասխան մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություն:

10. Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներն իրավունք ունեն ստանալ պետական նմուշի դիպլոմ` մինչև 2005-2006 ուսումնական տարվա ավարտը հանձնելով պետական քննություններ` պետական և ոչ պետական հավատարմագրված բուհերում ըստ մասնագիտությունների` պետականի լիազորված մարմնի սահմանած մասնագիտական- առարկայական ծրագրերի համաձայն: Պետական քննությունների կազմակերպական կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը մինչև 2003 թվականի փետրվարի 1-ը: (լրաց.է 19.11.02թ., ուժի մեջ է` 26.12.02թ.)

**Հոդված 50.** Ուսումնական հաստատությունների աշխատողների սոցիալական երաշխիքները

1. Աշխատանքային հարաբերություններն ուսումնական հաստատության և դրա աշխատողների միջև կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2. Պետական ուսումնական հաստատությունների **վարչական և (27.11.2000թ., ուժի մեջ է մտնում 01.01.2003թ-ից)** մանկավարժական (պրոֆեսորադասախոսական) կազմի աշխատանքի վարձատրության դրույքաչափը չի կարող ցածր լինել բյուջետային հիմնարկների աշխատողների միջին աշխատավարձից:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հավելյալ վարձատրություն է սահմանում սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:

4. Ուսումնական հաստատությունն ապահովում է աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացները:

## ԳԼՈՒԽ 7.

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

**Հոդված 51.** Միջազգային համագործակցությունը կրթության բնագավառում

1. Կրթության բնագավառում միջազգային համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

2. Ուսումնական հաստատություններն իրավունք ունեն համագործակցել օտարերկրյա ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

## ԳԼՈՒԽ 8.

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

**Հոդված 52.** Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

## ԳԼՈՒԽ 9.

## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 53.** Հանվել է (ընդ.է 07.05.02թ., ուժի մեջ է` 19.06.02թ.)

**Հոդված 54.** Սույն օրենքի 50 հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հունվարի 1-ից:

**Հոդված 55.** Սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի գործողությունը տարածվում է միայն 2001 թվականին և դրանից հետո հանրակրթական ուստմնական հաստատություններ ընդունված անձանց վրա: (ընդ.է 26.07.01թ., ուժի մեջ է` 01.09.01թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

*Ընդունված է 2004 թվականի դեկտեմբեր 14-ին*

## «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆ-ՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 ապրիլի 1999 թվականի, ՀՕ-297) 3-րդ հոդվածում՝

1) 4-րդ կետի «կառույց» բառը փոխարինել «կազմակերպություն» բառով.

2) 22-րդ կետի «երկամյա» բառը փոխարինել «առնվազն մեկ տարի» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը;»:

**Հոդված 3.** Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը «հեռակա» բառից հետո լրացնել «, հեռավար (դիստանցիոն)» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում «հեռակա ձևով» բառերը փոխարինել «, հեռակա, հեռավար (դիստանցիոն) ձևերով» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի 3-րդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել.

2) 5-րդ մասի 1-ին կետը «հեռակա» բառից հետո լրացնել «հեռավար (դիստանցիոն),» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում «,հիմնարկների» բառը փոխարինել «կազմակերպությունների» բառով:

**Հոդված 7.** Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 28. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները»,**

2) 1-ին և 3-րդ մասերի «համալսարանական» բառը փոխարինել «բուհական» բառով:

**Հոդված 8.** Օրենքի 44-րդ հոդվածում`

1) 1-ին մասը «ուսումնական հաստատությունը» բառերից հետո լրացնել «կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և» բառերով.

2) 2-րդ և 4-րդ մասերից հանել «պետական նմուշի» բառերը.

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթուղթն է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»:

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ Ռ. Քոչարյան**

2005 թ. հունվարի 18
Երևան
ՀՕ-63-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2005 թվականի նոյեմբերի 15-ին

### «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (14 ապրիլի 1999 թվականի, ՀՕ-297)

1) ավելացնել հետևյալ բովանդակությամբ 37[1]-րդ հոդված.

**«Հոդված 37[1] . Կրթության պետական տեսչությունը**

Կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովումը վերահսկողական գործառույթների միջոցով իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կրթության պետական տեսչությունը, որի գործունեությունը կարգավորվում է «Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:».

2) 43-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

« 7. Ուսումնական հաստատություններում և հանրակրթական ու նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է կրթության պետական տեսչություն:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ Ռ. Քոչարյան**

2005թ. դեկտեմբերի 15
Երևան
ՀՕ-234-Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

Օ Ր Ե Ն Ք À

*Ընդունված է 2006 թվականի ³åñÇÉÇ 13-ին*

## §ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ¦ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1**. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 ապրիլի 1999 թվականի, ՀՕ-297-Ն. այսուհետ օրենք) 18-րդ հոդվածի վեցերորդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Միջին և ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմությáõն առարկաների ուսուցումն ավարտվում է գիտելիքների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ»:

**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Նախագահ** **Ռ. Քոչարյան**

2006 թ. մայիսի 4
Երևան ՀՕ-48-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

*Ընդունված է 2005 թվականի մայիսի 25-ին*

## «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 ապրիլի 1999 թվականի, ՀՕ-297-Ն. այսուհետ օրենք) երրորդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ $3^1$-րդ կետով.

«$3^1$) **հատուկ կրթություն**՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգ, որը մեկ կամ մի քանի կրթական ծրագրերի հիման վրա կարող է իրականացվել հատուկ կամ ընդհանուր հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»:

**Հոդված 3.** Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը հանել:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2005-2006 թվականների ուսումնական տարվա սկզբից (2005 թվականի սեպտեմբերի 1-ից):

**Հայաստանի Հանրապետության**
**Նախագահ** **Ռ. Քոչարյան**

2005 թ. հունիսի 24

Երևան

ՀՕ-137-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին

## «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 ապրիլի 1999 թվականի, ՀՕ-297-Ն. այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածում՝

ա) 8[1]-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8[1]) արհեստագործական ուսումնարան՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն».

բ) 9-րդ կետը շարադրել հետևյալ .

«9) քոլեջ՝ միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն».

գ)18[1] -րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18[1]) արհեստավոր՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց».

դ) 19-րդ կետից հանել «կրտսեր» բառը:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում «մրցութային կարգով՝ անվճար միջին,» բառերը փոխարինել «մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին,» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածը «չափորոշիչների,» բառից հետո լրացնել «պետական հավատարմագրման չափորոշիչների,» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հիմնարկի կամ» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասը «մանկավարժական խորհուրդը» բառերից հետո լրացնել «գործադիր մարմինը» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 49-րդ հոդվածի 6-րդ մասը «պետական» բառից հետո լրացնել «նախնական մասնագիտական (արհեստագործական)» բառերով:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2005 թ. օգոստոսի13
Երևան
ՀՕ-165-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

*Ընդունված է 2006 թվականի հունիսի 13-ին*

## «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 ապրիլի 1999 թվականի, ՀՕ-297) 15-րդ հոդվածի երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընդհանուր կրթությանն սկսվում է վեց տարեկանից (որը լրանում է մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը)»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասում «11-րդ» փոխարինել «12-րդ» թվով:

Հոդված 3. Օրենքի 18-րդ հոդվածի երրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«3. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ).

2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ).

3) ավագ դպրոց (10-12 րդ դասարաններ)»:

Հոդված 4. Օրենքի 55-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 55. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը տարածվում է միայն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 2006 թվականին և դրանից հետո հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունված անձանց վրա:

Մինչև 2001 թվականը հանրակրթական դպրոցներ ընդունված սովորողները ուսումը շարունակում են տասնամյա հանրակրթական միջնակարգ դպրոցի համար հաստատված կրթական ծրագրերով:

2001 թվականից մինչև 2005 թվականը ներառյալ, ինչպես նաև 2006 թվականին հանրակրթական դպրոցների առաջին դասարաններ ընդունված 6,5 և բարձր տարիքի սովորողները ուսումը շարունակում են տասնմեկամյա հանրակրթական միջնակարգ դպրոցի համար հաստատված կրթական ծրագրերով:

2006-2007 ուսումնական տարում դպրոցներում ըստ տարիքային խմբերի ձևավորված առաջին դասարանների սովորողների ուսուցման և փոխադրման կարգը սահմանում է կրթության կառավարման պետական լիազորված մարմինը:

2007-2008 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից երկրորդ (2006-2007 ուսումնական տարում առաջին դասարան ընդունված 6,5 և բարձր տարիքի սովորողներ), երրորդ և երրորդից բարձր դասարանները վերահամարակալվում են՝ յուրաքանչյուրը մեկով ավելի:

2009-2010 ուսումնական տարվանից կատարվում է անցում եռամյա ավագ դպրոցի»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2006 թ. հուլիսի 1
Երևան
ՀՕ-139-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Ընդունվել է 14.12.2004 թ.*

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ
Գլուխ 2.Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը
Գլուխ 3. Ուսումնական գործունեության սուբյեկտները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում
Գլուխ 4. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի կառավարումը
Գլուխ 5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի տնտեսական հիմքերը
Գլուխ 6. Անցումային և եզրափակիչ դրույթներ

## ԳԼՈՒԽ 1

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

***Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան***

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

***Հոդված 2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենսդրությունը***

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

*Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) <u>բարձրագույն մասնագիտական կրթություն</u>՝ առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթություն.

2) <u>բարձրագույն ուսումնական հաստատություն</u>՝ կրթական հաստատություն, որն իրականացնում է բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրեր.

3) <u>հետբուհական մասնագիտական կրթություն</u>՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն.

4) <u>լրացուցիչ կրթություն</u>՝ մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթություն.

5) <u>ուսանող</u>՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն սահմանված կարգով ընդունված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառու անձ.

6) <u>դասախոս</u>՝ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի գիտամանկավարժական աշխատող, որը տեսական, գործնական, մասնագիտական

գիտելիքներ է դասավանդում ուսանողներին, սովորողներին և նպաստում է դրանց յուրացմանը.

7) ասպիրանտ՝ բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի որակավորման աստիճան.

8) դոկտորանտ՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձ.

9) հայցորդ՝ բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը.

10) հեռավար (դիստանցիոն) ուսուցում՝ համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով.

11) դրսեկություն (էքստեռնատ)՝ ինքնակրթությամբ և գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով ուսումնական հաստատությունում իրականացվող կրթության ձև.

12) պետական հավատարմագրում՝ պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչում.

13) ինքնավերլուծություն՝ բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության և որակի ուսումնասիրություն, որը, կրթական չափորոշիչներին համապատասխան, իրականացնում է բարձրագույն ուսումնական հաստատությունը.

14) որակի գնահատում (ատեստավորում)՝ բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում.

15) որակի ապահովում՝ պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության և բարելավման անընդհատ գործընթաց.

16) ակադեմիական կրեդիտ (չափանիշ)՝ ուսումնական բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտվող պայմանական միավոր.

17) կրեդիտային (չափանիշային) համակարգ՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն.

18) կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ)՝ համաեվրոպական կրեդիտային համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների շարժունակությունը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում.

19) ուսանողական նպաստ՝ ուսանողի ուսման վարձի փոխհատուցում՝ պետական բյուջեի ֆինանսավորման, բարձրագույն ուսումնական հաստա-

տության, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին:

***Հոդված 4. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները***

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.

2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը.

3) կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը.

4) մրցութայնությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը.

5) եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների ճանաչելիությունն ապահովելը.

6) ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը.

7) բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը.

8) հայազգի օտարերկրյա քաղաքացիների (սփյուռքի համար), ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագիտական պատրաստումը և որակավորման բարձրացումը:

***Հոդված 5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները***

1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝

1) բարձրագույն և հետբուհական կրթության որակի ապահովումը.

2) պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստմանն աջակցելը.

3) միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստելը.

4) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը միջազգային ասպարեզում.

5) Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում ուսուցման որակի ներքին (ներբուհական) ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը.

6) հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:

2. Պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետևյալ ձևերով.

1) անցում բարձրագույն կրթության որակավորման երկաստիճան համակարգի.

2) հետբուհական կրթության համակարգի կատարելագործում.

3) կրթության զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում.

4) կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքային շուկայի պահանջներին.

5) պետության պահանջներից ելնելով՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ֆինանսավորում.

6) օրենքով սահմանված կարգով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ և մասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր).

7) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ստուգման և որակի գնահատման, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրում.

8) կրթական նոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրում՝ զարգացում ապահովելու նպատակով.

9) բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտության և կրթության ինտեգրման ապահովում, գիտահետազոտական ստորաբաժանումների կազմակերպում:

3. Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն ստանալու հնարավորություն:

***Հոդված 6. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները***

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունը՝

1) իրականացնում է իր ինքնավարությունը ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքներով.

2) ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում.

3) ինքնուրույն է որոշում բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնում է աշխատողների ընտրությունը և բաշխումը, ներառյալ՝ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը.

4) իրավունք ունի օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեության:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է՝

1) ըստ կրթական ծրագրերի՝ դիմորդների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպումը.

2) բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավար անձնակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերի մշակումը և ընտրությունների անցկացումը.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը.

4) ըստ ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների` աշխատողների տեղաբաշխումը.

5) մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացների կազմակերպումը.

6) տեղական և միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունը և իրականացումը, գիտական հետազոտությունների կատարումը.

7) հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը.

8) վճարովի կրթական ծառայությունների (վճարովի ուսուցում և այլն) իրականացումը.

9) ֆինանսների կառավարում, ներառյալ` աշխատավարձի, կրթաթոշակի վճարում, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողական նպաստների տրամադրում, բարձրագույն ուսումնական հաստատության պահպանմանը և զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը.

10) հետբուհական կրթության իրականացումը` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունն ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ` իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանում է կրթաթոշակներ:

4. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

Պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկը և քանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ինչպես նաև սահմանված կարգով փոխհատուցում է այդ ուսանողների նպաստը:

Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ինքնուրույն են իրենց կառուցվածքի ձևավորման հարցում:

Բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակը և գործառույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումները կարող են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հանրակրթական, միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթության ծրագրեր:

6. Բարձրագույն ուսումնական հաստատությունը օտարերկրյա պետությունների կրթական կառավարման համապատասխան մարմինների հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով իրականացնում է օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն, մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ինչպես նաև մասնագետների փոխանակում, համատեղ գիտական աշխատանքներ, ծրա-

գրեր, օտարերկրյա պետություններում ստեղծում է մասնաճյուղեր, ստորաբաժանումներ և այլն:

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իր գործունեության համար պատասխանատու է անհատի, հասարակության և պետության առջև:

Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին վերահսկում են բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադիրը (հիմնադիրները), լիազորված մարմինը և օրենքով սահմանված կարգով լիազորված այլ մարմիններ:

## ԳԼՈՒԽ 2
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

***Հոդված 7. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը***

Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը ներառում է՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները.

2) լիցենզավորված բարձրագույն ուսումնական հաստատությունները և համապատասխան հետբուհական ու լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունները.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կառավարման մարմինները, ինչպես նաև դրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունները:

*Հոդված 8. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և կրթական ծրագրերը*

1. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ, որոնք ապահովում են՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակը.

2) եվրոպական և օտարերկրյա այլ պետությունների կրթական չափորոշիչների հետ համեմատելիության հնարավորությունները.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության գնահատման հիմքը.

4) օտարերկրյա պետությունների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորումների և փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում են՝

1) ընդհանուր պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի վերաբերյալ.

2) պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի, դրանց իրականացման պայմանների, ներառյալ՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևերի, յուրաքանչյուր մասնագիտությամբ շրջանավարտների պատրաստման մակարդակի վերաբերյալ.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման ժամկետները կամ անհրաժեշտ կրեդիտային միավորների քանակը.

4) սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը:

3. Պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ներկայացմամբ (ռազմական, ոստիկանական բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական կառավարման լիազորված մարմինների հետ համաձայնեցված):

4. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ հետևյալ կրթական ծրագրերով.

1) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով՝

- բակալավրի,

- մագիստրոսի (կլինիկական օրդինատորի),

- դիպլոմավորված մասնագետի.

2) հետբուհական մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝

- հետազոտողի.

3) լրացուցիչ կրթական ծրագրերով՝

- վերապատրաստման,

- մասնագետների որակավորման բարձրացման:

5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերը մշակում և հաստատում են բարձրագույն ուսումնական հաստատությունը, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտացումների ուսումնական պլանները և դասընթացները երաշխավորում են տարբեր կրթական փուլերում սովորողների ուսումնառության գործընթացը (մուտքը կրթական ծրագիր և ելքը ծրագրից)՝ ապահովելով

կրթական կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստի-ճանների շնորհումը:

***Հոդված 9. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանները, ուսուցման ժամկետները և ձևերը***

1. Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրա-գրերը կարող են իրականացվել անընդհատ և (կամ) ընդհատումներով՝ ըստ աստիճանների:

2. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է բարձրագույն մաս-նագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ:

Ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է՝

1) առաջին աստիճանում՝ բակալավրի որակավորում.

2) երկրորդ աստիճանում՝ մագիստրոսի որակավորում:

Հայաստանի Հանրապետությունում պահպանվում է նաև դիպլոմավորված մասնագետի որակավորումը:

3. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է հետբուհական մաս-նագիտական կրթության՝ հետազոտողի որակավորման աստիճանը:

4. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսուցման տևողությունն է՝

1) բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնըվազն 4 տարվա, բժշկական մասնագիտությունների համար՝ առնվազն 5 տարվա.

2) դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 5 տարվա, արվեստի և ֆիզիկական կուլտուրայի մասնա-գիտությունների համար՝ առնվազն 4 տարվա.

3) մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 1 տարվա, բժշկական մասնագիտությունների համար՝ մինչև 4 տարվա.

4) հետազոտողի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 3 տարվա:

5. Այն անձինք, ովքեր ստացել են բարձրագույն մասնագիտական կրթու-թյան համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ, իրավունք

ունեն սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով:

Բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագրերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն:

6. Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի): Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի զուգակցումը չի արգելվում:

Այն մասնագիտությունների ցանկը, որոնցով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը չի թույլատրվում հեռակա, հեռավար (դիստանցիոն) կամ դրսեկության (էքստեռնատի) ձևերով, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Չհավատարմագրված բուհի ուսանողները և շրջանավարտները կարող են դրսեկության կարգով մասնակցել հավատարմագրված բուհի ընթացիկ, ամփոփիչ ատեստավորմանը:

7. Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ուսուցման ձևերով, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

***Հոդված 10. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթը***

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթուղթ՝ համապատասխան ներդիրով.

- բակալավրի դիպլոմ,

- մագիստրոսի դիպլոմ,

- բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ,

- հետազոտողի դիպլոմ:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ակադեմիական տեղեկանք:

3. Լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ավարտական փաստաթուղթ (հավաստագիր, վկայական):

***Հոդված 11. Բարձրագույն ուսումնական հաստատության խնդիրները***

Բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական խնդիրներն են՝

1) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը բարձրագույն և (կամ) հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու միջոցով.

2) գիտության, կրթության, տնտեսության և արվեստի զարգացումը գիտամանկավարժական աշխատողների և սովորողների գիտական հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացում.

3) բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը.

4) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.

5) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

6) սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը.

7) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

8) սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում:

***Հոդված 12. Բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները և անվանումները***

Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տեսակները.

1) համալսարան.

2) ինստիտուտ.

3) ակադեմիա.

4) կոնսերվատորիա և այլն:

Բարձրագույն ռազմական, ոստիկանական ուսումնական հաստատությունների գործունեության կարգը սահմանվում է սույն և այլ օրենքներով:

***Հոդված 13. Բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը, վերակազմակերպումը, լուծարումը, լիցենզավորումը, հավատարմագրումը***

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Բարձրագույն և հետբուհական կրթական գործունեության լիցենզավորումը՝

1) բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) կրթական գործունեության լիցենզիան ուսումնական հաստատությանը տալիս է լիազորված մարմինը: Կրթական ծրագրերի լիցենզավորումն իրականացվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3) ուսումնական հաստատության լիցենզավորման համար հիմք են մանկավարժական և պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի, լաբորատոր բազայի և ուսումնական տարածքի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդական ապահովումը:

3. Պետական հավատարմագրումը՝

1) պետական հավատարմագրումն իրականացնում է լիազորված մարմինը, անկախ ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից, ուսումնական հաստատության և դրա սովորողների ատեստավորման վերաբերյալ եզրակացության հիման վրա.

2) բարձրագույն ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների, հետբուհական կրթական ծրագրերի պետական հավատարմագրումն իրականացվում է լիցենզիայի առկայության դեպքում.

3) բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների.

4) հավատարմագրման կարգը, չափանիշները և ժամկետները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

5) պետական հավատարմագրման նպատակն է ուսուցման և առանձին մասնագիտությունների գծով շրջանավարտների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումը, ինչպես նաև նպաստելը ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը.

6) պետական հավատարմագրման վկայականը հավաստում է ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց

բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին.

7) ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ կրթական ծրագրերի.

8) Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում պետական հավատարմագրման ենթակա են բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերը.

9) պետական հավատարմագրման վկայականը տրվում է բարձրագույն ուսումնական հաստատությանը ուսումնական հաստատության և դրա ուսանողների և երկու տարվա շրջանավարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման վերաբերյալ դրական եզրակացության հիման վրա, ինչպես նաև այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայության դեպքում.

10) ուսումնական հաստատության մասնաճյուղերը հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր բուհի կազմում.

11) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և լիցենզավորվում, հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով.

12) բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում (դիպլոմում) նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը:

4. Բարձրագույն ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաև հասարակական հավատարմագրում, որը հասարակական հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին և պահանջներին բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության մակարդակի համապատասխանության ճանաչումն է:

***Հոդված 14. Ընդունելությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում***

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունը բարձրագույն կրթության առաջին աստիճանում՝ բակալավրիատում, դիպլոմավորված մասնագետի ծրագրում անցկացվում է առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով, օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված մրցութային հիմունքներով:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավունք ունի ընդունելություն հայտարարելու լիցենզիայի առկայության դեպքում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը պարտավոր է ծանոթացնել դիմորդին իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունն ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում է դիմորդներին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավունք չունի ուսանողի հետ կնքած պայմանագրում կատարելու փոփոխություն:

4. Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգում երկրորդ աստիճանի (մագիստրատուրայի) մրցութային ընդունելությունն իրականացվում է առաջին աստիճանի (բակալավրիատի) գնահատականների հաշվառմամբ:

5. Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, ըստ կրթական ծրագրերի (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի), սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի՝ մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

6. Ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ծրագրով, դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա, որի կարգը և մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Դոկտորանտուրայի փաստաթղթերի ձևակերպումը կատարվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի և դոկտորական թեզի համար գիտական թեմայի առկայության հիման վրա:

***Հոդված 15. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարումը***

1. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ:

2. Պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհուրդը ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան: Խորհրդի նախագահի և անդամների իրավասությունները սահմանվում են կանոնադրությամբ:

Խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի, լիազորված մարմնի ներկայացուցիչներից:

Խորհրդի ձևավորման կարգը լիազորված մարմնի ներկայացմամբ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Խորհրդի թվաքանակը սահմանվում է տվյալ բուհի կանոնադրությամբ, առնվազն 20 հոգի:

Խորհրդի գործունեության մեջ մտնում են հաստատության բյուջեի, ռազմավարական ծրագրերի հաստատումը, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության տարեկան հաշվետվության (որը ներկայացնում է ռեկտորը) լսումն ու գնահատումը, ռեկտորի ընտրությունը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկության ներկայացումը հիմնադրին:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան և լուծում է բարձրագույն ուսումնական հաստատության ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները և բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

Գիտական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում է բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

4. Բարձրագույն ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ ռեկտորը:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական

հաստատության կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով` ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը: Արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում, համաձայն գործող կարգի, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն:

Եթե նույն թեկնածուն ընտրություններում հավաքում է գիտական խորհրդի անդամների ձայների առնվազն երկու երրորդը, ապա հիմնադիրը հաստատում է գիտական խորհրդի որոշումը:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

6. Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղի տնօրենն ընտրվում է ուսումնական հաստատության խորհրդի նիստում գաղտնի (փակ) քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, բաց մրցույթով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել մասնաճյուղի տնօրենի պաշտոնում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատության պրոռեկտորները (մասնաճյուղի տնօրենի տեղակալները) նշանակվում են ռեկտորի (մասնաճյուղի տնօրենի) հրամանով, և նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

8. Ֆակուլտետի դեկանի (ուսումնական ստորաբաժանման ղեկավարի), ամբիոնի վարիչի պաշտոնները ընտրովի են, որոնց ընտրության կարգը սահմանվում է բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ֆակուլտետի դեկանի (ուսումնական ստորաբաժանման ղեկավարի) գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:

9. Նոր ստեղծվող կամ վերակազմակերպված բարձրագույն ուսումնական հաստատությունում մինչև խորհրդի ձևավորումը բարձրագույն ուսումնական

հաստատության հիմնադիրը նշանակում է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար մեկ տարուց ոչ ավելի ժամկետով:

10. Բարձրագույն ուսումնական հաստատությունները մշակում և հաստատում են հնգամյա կրթական ռազմավարական ծրագրեր: Ռազմավարական ծրագրով սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական նպատակները, դրանց հասնելու միջոցառումների ցանկը: Ռազմավարական ծրագիրը հաստատում է խորհուրդը:

Ռազմավարական ծրագիրը լիազորված մարմնի կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը գնահատելու հիմնական ծրագրային փաստաթուղթն է:

***Հոդված 16. Հասարակական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում***

Հասարակական-քաղաքական, հասարակական, կրոնական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում չեն գործում, բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների:

## ԳԼՈՒԽ 3

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

***Հոդված 17. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողները***

1. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը բարձրագույն (հետբուհական) կրթության սուբյեկտ է:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողները, ասպիրանտները (այսուհետ՝ սովորողներ) կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետու-

թյունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4) մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.

5) անվճար օգտվելու բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին.

6) բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամանները ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

8) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ.

9) ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ.

12) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ.

13) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

14) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական

խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

4. Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու բարձրագույն ուսումնական հաստատությունում:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողը պարտավոր է կատարել բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը:

Արգելվում է ուսանողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսանողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

***Հոդված 18. Ասպիրանտները, դոկտորանտները և հայցորդները***

1. Ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ընտրված գիտական թեմաների, գիտական հետազոտությունների հետ կապված աշխատանքների կատարման համար ասպիրանտները, հայցորդները և դոկտորանտները բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գիտամանկավարժական և գիտական աշխատողների հետ հավա-

սարապես օգտվում են լաբորատորիաներից, սարքավորումներից, ուսումնա-մեթոդական կաբինետներից, գրադարաններից, ինչպես նաև գործուղումների իրավունքից:

***Հոդված 19. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների աշխատողները***

1. Բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական և գիտական աշխատողներն իրավունք ունեն իրենց հայեցողությամբ ծրագրի շրջանակներում ուսումնական առարկան շարադրելու, գիտական հետազոտությունների թեմաներ ընտրելու և դրանք իրենց ընտրած մեթոդներով իրականացնելու:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում սահմանվում են գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական (դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ) կազմ, գիտական աշխատողներ, ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողներ:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական աշխատողների բոլոր թափուր պաշտոնները զբաղեցվում են բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությանը և կանոնակարգերին համապատասխան:

4. Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումը իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրություն: Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական աշխատողի հետ կարող է կնքվել նոր աշխատանքային

պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային ժամկետում նրա գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա: Նշված պաշտոնների տեղակալման կարգը հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատության, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության խորհուրդը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողն իրավունք ունի՝

1) բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում.

2) մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը.

3) օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից՝ բարձրագույն ուսումնական հաստատության, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությանը և (կամ) կոլեկտիվ պայմանագրին համապատասխան.

4) ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ.

5) բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

6) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողները պարտավոր են՝

1) ապահովել կրթական և գիտական գործընթացների արդյունավետությունը.

2) պահպանել բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

3) սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն.

4) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ.

5) ոչ պակաս, քան 5 տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

***Հոդված 20. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին օտարերկրյա պետությունների փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը***

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին օտարերկրյա պետությունների փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջպետական, միջկառավարական պայմանագրերով, համաձայնագրերով:

## ԳԼՈՒԽ 4

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

***Հոդված 21. Պետական իշխանության մարմինների իրավասությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում***

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունն է՝

1) պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգի հաստատումը.

3) բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի հաստատումը.

4) կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի հաստատումը.

5) ըստ հիմնական կրթական ծրագրերի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի հաստատումը.

6) հաստատում է դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով ուսուցում իրականացվող մասնագիտությունների ցանկը.

7) պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ դիմորդների ընդունելության կարգի և գիտելիքների գնահատման միասնական համակարգի մշակումը և հաստատումը.

8) ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգի հաստատումը.

9) ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտների և հայցորդների ձևակերպման կարգի հաստատումը.

10) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկերի հաստատումը, փոփոխությունների և լրացումների կատարումը.

11) հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների ցանկերի հաստատումը.

12) ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը.

13) պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների գրանցումը, դրանցում լրացումների և փոփոխությունների կատարումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

2. Լիազորված մարմնի իրավասությունն է՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների մշակումն ու հաստատումը.

2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի վերահսկողության իրականացումը.

3) ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգերի մշակումը.

4) համապատասխան մարմինների հետ աշխատաշուկայի վերլուծության կատարումը և բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելության վերաբերյալ առաջարկների ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն.

5) մասնագետների պատրաստման, աշխատողների և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ներկայացումը.

6) բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի հաստատումը.

7) երկրորդ մասնագիտություն ստանալու կարգի հաստատումը.

8) առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցման կարգերի հաստատումը:

Լիազորված մարմինն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ իրավասություններ:

***Հոդված 22. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովումը և դրա նկատմամբ պետական վերահսկողությունը***

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն ուղղված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահով-

ման գործընթացների կազմակերպմամբ, որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

3. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակով բարձրագույն ուսումնական հաստատությունը և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր են հրապարակել որակի գնահատման և (կամ) հավատարմագրման չափանիշները, որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպության տված եզրակացությունները, ինչպես նաև որակի գնահատման ընթացիկ արդյունքները:

4. Բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում որակի գնահատում և (կամ)հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը հաստատում է լիազորված մարմինը:

5. Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը:

## ԳԼՈՒԽ 5

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### ***Հոդված 23. Սեփականության հարաբերությունները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում***

1. Կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը (հիմնադիրները) բարձրագույն ուսումնական հաստատությանը սեփականության կամ օգտագործման (անհատույց կամ հատուցելի) իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին հիմնադիրը (հիմնադիրները) գույքը տրամադրում է անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններին կարող են անհատույց կամ հատուցելի կարգով օգտագործման հանձնել ուսումնական տարածքներ և հողամասեր:

***Հոդված 24. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորումը***

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

***Հոդված 25. Բարձրագույն ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի վարձատրությունը***

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իր ունեցած և աշխատողների աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների սահմաններում ինքնուրույն է որոշում աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը, ինչպես նաև բոլոր տարակարգերի աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը` առանց աշխատավարձի առավելագույն դրույքաչափեր սահմանելու:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության աշխատողին աշխատավարձի դրույքաչափը վճարվում է աշխատանքային պայմանագրով նախատեսված գործառական պարտականությունների և աշխատանքների կատարման համար:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության կրթական գործունեությունն ապահովելու նպատակով պետական բյուջեից հատկացվող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին պետական, օտարերկրյա պետությունների մասնակցությամբ ստեղծված բարձրագույն ուսումնական հաստատությունները ինքնուրույն ձևավորում են աշխատողների աշխատանքի վարձատրության ֆոնդ:

## ԳԼՈՒԽ 6
## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### *Հոդված 26.Անցումային դրույթներ*

1. Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ կապված բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի ներդրման հետ, բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունն իրականացվում է միայն բակալավրի կրթական ծրագրով: Արվեստի բարձրագույն ուսումնական հաստատություններում առանձին մասնագիտությունների գծով ուսուցում կարող է իրականացվել դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով:

2. Մինչև 2009-2010 թվականների ուսումնական տարին գործում է նաև միաստիճան որակավորման համակարգ՝ դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ:

3. Մինչև 2010 թվականը շնորհված դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին:

4. Դիպլոմավորված մասնագետի ծրագրով բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառությունն սկսած ուսանողը բանակ զորակոչվելուց կամ հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելուց հետո, եթե վերականգնվում է երկաստիճան կրթական համակարգում, հնարավորություն է

ստանում սովորելու մագիստրատուրայում: Եթե մագիստրատուրան երկու տարով է, ապա բարձրագույն ուսումնական հաստատության ֆինանսավորման հաշվին ազատվում է մեկ տարվա ուսման վարձից:

5. Բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը սկսվում է 2006-2007 թվականների ուսումնական տարվանից:

6. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետն ուժի մեջ է մտնում 2005-2006 թվականների ուսումնական տարվանից:

*Հոդված 27. Եզրափակիչ դրույթ*

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

18.01.2005
ՀՕ-62

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2006 թվականի ապրիլի 13-ին*

# «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 դեկտեմբերի 2004 թվականի, ՀՕ-62-Ն, այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ $2^1$-րդ կետով.

«$2^1$. անկախ սեփականության ձևից և մասնագիտությունից բարձրագույն մասնագիտական հիմնական կրթության բակալավրի կրթական ծրագրում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումը ներառվում է առնվազն երկու կիսամյակի ընթացքում, որոնք ավարտվում են գիտելիքների պարտադիր ստուգմամբ»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2006 թ. մայիսի 4
Երևան
ՀՕ-47-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2006 թվականի ապրիլի 13-ին*

# «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 դեկտեմբերի 2004 թվականի, ՀՕ-62-Ն. այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Ասպիրանտուրայի ընդունելության դիմումի հետ միասին բարձրագույն ուսումնական հաստատությունը դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդին: Օրինակելի պայմանագրի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

***Հոդված 2.*** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Ասպիրանտուրայում պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետները պարտավոր են առնվազն երեք տարի աշխատել բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ելնելով՝ «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից:

Մասնագետների աշխատանքի տեղավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

***Հոդված 3.*** Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ $9^1$-րդ և $9^2$-րդ կետերով.

«$9^1$) ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը.

$9^2$)բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգի սահմանումը»:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2006 թ. մայիսի 4
Երևան
ՀՕ - 45 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2006 թվականի հուլիսի 7-ին*

# «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14 դեկտեմբերի 2004 թվականի. ՀՕ 62 Ն այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բարձրագույն ուսումնական հաստատությունն ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում է դիմորդներին:

Բարձրագույն ուսումնական հաստատության և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների:

Ուսանողի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում՝ այդ պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն»:

***Հոդված 2***. Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում «2006-2007 թվականների» բառերը փոխարինել «2007-2008 թվականների» բառերով:

***Հոդված 3***. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան

2006 թ. հուլիսի 29
Երևան
ՀՕ 163 - Ն

## ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

Օրինագիծն ընդունված ¿ ՀՀ Գերագույն խորհրդի
կողմից "30" մարտի 1993թ. Հ.Ն-0773-I

## ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության եւ կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

### ՀՈԴՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն ¿, որը սպասարկում ¿ հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն ¿:

Հայաստանի Հանրապետությունն աջակցում ¿ իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը եւ տարածմանը:

Հայաստանի Հանրապետությունը նպաստում ¿ հայերենի ուղղագրության միասնականացմանը:

Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում ¿ ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

### ՀՈԴՎԱԾ 2. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական եւ ուսումնական համակարգերում դասավանդման եւ դաստիարակության լեզուն գրական հայերենն ¿:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով եւ հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կրթության եւ գիտության, լեզվի եւ մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովի համաձայնությամբ:

Հայաստանի Հանրապետության բոլոր միջնակարգ մասնագիտական, մասնագիտական տեխնիկական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը եւ հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են: Հայրենադարձների, փախստականների, Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննություններն ու ուսուցումը իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

## ՀՈԴՎԱԾ 3. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պաշտոնատար անձինք եւ սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել հայերենին:

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն հայերենն ¿, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին:

Պաշտոնական խոսքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են ապահովել լեզվի անաղարտությունը:

## ՀՈԴՎԱԾ 4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակեր-

պություննների եւ քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները պարտավոր են.

ա) գործավարությունը կատարել հայերեն.

բ) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների եւ պաշտոնական ու զանգվածային այլ միջոցառումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների զուգահեռ հայերեն թարգմանությունը.

գ) ցուցակները, ձեւաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները ձեւավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները եւ կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով:

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձեւաթղթերը, կնիքները ձեւավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

## ՀՈԴՎԱԾ 5. ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Պետական լեզվաքաղաքականությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իշխանության եւ կառավարման տեղական մարմինները, ինչպես նաեւ դրա համար լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է հայերեն լեզվով հրատարակչությունները, մամուլը, ինչպես նաեւ հայերեն դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, գիտամեթոդական, տեղեկատու, գիտահանրամատչելի գրականության ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն սույն օրենքի պահանջները խախտելու համար:

Երեւան

17 ապրիլի 1993 թ.
ՀՆ.-0772-ՀՕ-52

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2005 թվականի մայիսի 3-ին

## "ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ՀՈԴՎԱԾ 1.* "Լեզվի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի (17 ապրիլի 1993 թվականի, ՀՕ-52) 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

"Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը":

*ՀՈԴՎԱԾ 2.* Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին պարբերությունում "իշխանության եւ կառավարման տեղական մարմինները" բառերը փոխարինել "պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները" բառերով:

*ՀՈԴՎԱԾ 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

1 հունիսի 2005 թվականի
ՀՕ-95-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

*Ընդունված է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին*

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### *ՀՈԴՎԱԾ 1.* ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալու կարգը, ձեւերը եւ պայմանները:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների եւ դրանց պաշտոնատար անձանց վրա:

### *ՀՈԴՎԱԾ 2.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

### *ՀՈԴՎԱԾ 3.* ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

տեղեկատվության ազատություն՝ տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով փնտրելու եւ դա տեղեկատվություն տնօրինողից ստանալու իրավունքի իրականացում.

տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության,

եղելության, երեւույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված եւ ձեւավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձեւից կամ նյութական կրիչից տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպություններ եւ դրանց պաշտոնատար անձինք.

հանրային նշանակության կազմակերպություն՝ ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող, ինչպես նաեւ առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի եւ կապի, կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ.

հարցում՝ տեղեկություն փնտրելու եւ (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.

հրապարակում՝ տեղեկությունը մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը եւ մատչելի դարձնելը:

### *ՀՈԴՎԱԾ 4.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքներն են՝

1) տեղեկությունները գրանցելու, դասակարգելու եւ պահպանելու միասնական կարգի սահմանումը.

2) տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության պաշտպանությունը.

3) տեղեկություններ տրամադրելու մատչելիության ապահովումը.

4) հրապարակայնությունը:

### *ՀՈԴՎԱԾ 5.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

### *ՀՈԴՎԱԾ 6.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը եւ (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին եւ ստանալու այդ տեղեկությունը:

2. Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից եւ ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով եւ (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում:

3. Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված դեպքերում:

### *ՀՈԴՎԱԾ 7.* ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Տեղեկատվություն տնօրինողն օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում եւ հրապարակում է իր կողմից տեղեկություն տալու կարգը, որը փակցնում է իր գտնվելու վայրում՝ բոլորի համար տեսանելի տեղում:

2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձեւով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ

գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական եւ հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը:

3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող հետեւյալ տեղեկությունները եւ դրանցում կատարված փոփոխությունները.

1) հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները եւ ծառայությունները.

2) բյուջեն.

3) գրավոր հարցումների ձեւերը եւ դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները.

4) հաստիքացուցակները, ինչպես նաեւ պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները.

5) աշխատանքի ընդունման կարգը եւ թափուր աշխատատեղերը.

6) շրջակա միջավայրի վրա ներգործությունը.

7) հասարակական միջոցառումների ծրագրերը.

8) քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը եւ վայրը.

9) աշխատանքների եւ ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները).

10) տնօրինվող տեղեկությունների ցանկը եւ դրանց տնօրինման կարգը.

11) ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական եւ ամփոփ տվյալները, այդ թվում՝ մերժման հիմքերը.

12) սույն մասում սահմանված տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրները.

13) սույն մասում սահմանված տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակվում են դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում նշված տեղեկությունները հրապարակվում են հանրության համար մատչելի ձեւով, տեղեկատվություն տնօրինողի ինտերնետային էջի առկայության դեպքում՝ նաեւ դրանով:

6. Հանրային նշանակության, ինչպես նաեւ բյուջեից հատկացում (ֆինանսավորում) ստացող կազմակերպությունները կարող են չհրապարակել սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում սահմանված տեղեկությունները եւ դրանց փոփոխությունները:

### *ՀՈԴՎԱԾ 8.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Տեղեկատվություն տնօրինողը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝

1) պարունակում է պետական, ծառայողական, բանկային, առեւտրային գաղտնիք.

2) խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալները.

4) բացահայտում է մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում է հեղինակային իրավունքը եւ (կամ) հարակից իրավունքները:

2. Եթե պահանջվող տեղեկության մի մասը պարունակում է տվյալներ, որոնց տրամադրումը ենթակա է մերժման, ապա տեղեկություն է տրամադրվում մնացած մասի վերաբերյալ:

3. Տեղեկության տրամադրումը չի կարող մերժվել, եթե դա՝

1) վերաբերում է քաղաքացիների անվտանգությանը եւ առողջությանը սպառնացող արտակարգ դեպքերին, ինչպես նաեւ տարերային (ներառյալ՝ պաշտոնապես կանխատեսվող) աղետներին եւ դրանց հետեւանքներին.

2) ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տնտեսության ընդհանուր վիճակը, ինչպես նաեւ բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանության, առողջապահության, կրթության, գյուղատնտեսության, առեւտրի, մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը.

3) չտրամադրելը բացասական ազդեցություն կունենա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական եւ հոգեւոր-մշակութային զարգացման պետական ծրագրերի իրականացման վրա:

### *ՀՈԴՎԱԾ 9.* ՀԱՐՑՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը: Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը):

2. Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների եւ բողոքների համար օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձեւերից առանձին:

3. Գրավոր հարցմանը պատասխան չի տրվում, եթե՝

1) դա չի պարունակում սույն հոդվածի 1-ին մասում նշված բոլոր տվյալները.

2) պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են.

3) դա նույն անձի կողմից նույն տեղեկությունն ստանալու պահանջով վերջին 6 ամսվա ընթացքում ներկայացված երկրորդ դիմումն է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի:

4. Դիմողը պարտավոր չէ հիմնավորել հարցումը:

5. Բանավոր հարցմամբ դիմողը պարտավոր է նախապես հայտնել իր անունը եւ ազգանունը: Բանավոր հարցման պատասխանը տրվում է, եթե՝

1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին եւ ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը.

2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը.

3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկատվությունը տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

6. Բանավոր հարցման պատասխանը տրվում է բանավոր՝ հարցումը լսելուց հետո անհապաղ կամ հնարավորինս սեղմ ժամկետում: Եթե բանավոր հարցմամբ դիմողը չի հայտնում իր անունը եւ ազգանունը, եւ (կամ) բանավոր հարցումը չի համապատասխանում սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված պահանջներին, ապա տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը:

7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետեւյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի եւ ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.

3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկու-

թյունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները եւ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

8. Գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված նյութական կրիչով: Եթե նյութական կրիչը նշված չէ, եւ դա անհնար է պարզել տվյալ հարցմանը՝ սույն օրենքով սահմանված ժամկետում պատասխանելու համար, ապա գրավոր հարցման պատասխանը տրվում է տեղեկությունը տնօրինողին առավել ընդունելի նյութական կրիչով:

9. Սույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը:

10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:

11. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությանը վերաբերող բոլոր տվյալները, ապա նա դիմողին տալիս է տվյալների այն մասը, որն ունի, իսկ հնարավորության դեպքում գրավոր հարցման պատասխանում նշում է նաեւ այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկատվությանը վերաբերող մյուս տվյալները:

### *ՀՈԴՎԱԾ 10.* ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների եւ կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետեւյալ դեպքերում.

1) բանավոր հարցումներին պատասխանելիս.

2) մինչեւ 10 էջ տպագրված կամ պատճենահանված տեղեկություն տրամադրելիս.

3) տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս.

4) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում նշված տեղեկությունների տրամադրման մասին գրավոր հարցումներին պատասխանելիս.

5) սույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով եւ 9-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության տրամադրման ժամկետի փոփոխման մասին տեղեկություններ տրամադրելիս.

6) տեղեկության տրամադրումը մերժելիս:

3. Հանրային նշանակության կազմակերպություններն ինքնուրույն են որոշում տեղեկությունների տրամադրման համար գանձվող գումարի չափը, որը չի կարող գերազանցել այդ տեղեկության տրամադրման ծախսերը:

4. Ոչ հավաստի կամ ոչ լրիվ տվյալներ պարունակող տեղեկություն տրամադրած մարմինը կամ կազմակերպությունն այդ տեղեկությունն ստացած անձի գրավոր հարցման հիման վրա պարտավոր է սույն օրենքով սահմանված կարգով անվճար տրամադրել ճշգրտված տվյալներով տեղեկություն:

### *ՀՈԴՎԱԾ 11.* ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Տեղեկության տրամադրումը մերժվում է սույն օրենքի 8-րդ հոդվածում սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության տրամադրման համար սահմանված գումարը չվճարվելու դեպքում:

2. Տեղեկատվություն տնօրինողը կարող է չպատասխանել բանավոր հարցմանը, եթե տվյալ պահին դա խոչընդոտում է տեղեկատվություն տնօրինողի հիմնական պարտականությունների կատարմանը, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին 5-օրյա ժամկետում գրավոր հայտնում է դիմողին՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաեւ դրա բողոքարկման կարգը:

4. Տեղեկության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան:

### *ՀՈԴՎԱԾ 12.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԻՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝

1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը եւ հրապարակայնությունը.

2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը եւ պահպանումը.

3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի եւ իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն.

4) սահմանել իր կողմից բանավոր եւ (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը.

5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

### *ՀՈԴՎԱԾ 13.* ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձն օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձեւով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները եւ ձեւերը.

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական եւ ամփոփ տվյալները:

### *ՀՈԴՎԱԾ 14.* ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

2. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում տեղեկության հրապարակումը չի կարող առաջացնել վարչական կամ քրեական պատասխանատվություն:

### *ՀՈԴՎԱԾ 15.* ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

22 հոկտեմբերի 2003 թ.
ՀՕ-11-Ն

# ԿՈՆՎԵՆՑԻԱ
# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

**(4-ը նոյեմբերի, 1950 թ., Հռոմ)**

Սույն Կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,

***նկատի ունենալով*** 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

***նկատի ունենալով,*** որ սույն Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը,

***նկատի ունենալով,*** որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,

---

* Կոնվենցիայի տեքստը փոփոխված է համաձայն 1970 թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտած 3-րդ Արձանագրության, 1971 թ. դեկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած 5-րդ Արձանագրության և 1990 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած 8-րդ Արձանագրության, տեքստում ընդգրկված է նաև 2-րդ Արձանագրությունը, որը 1970 թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտնելուց հետո նրա 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն է: Բոլոր դրույթները, որոնք լրացվել կամ փոփոխվել են այս արձանագրություններով, փոխարինված են 1998 թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած 11-րդ Արձանագրությամբ: Վերջինիս ուժի մեջ մտնելով դադարում է գործել 1994 թ. հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած 9-րդ Արձանագրությունը, և 10-րդ Արձանագրությունը, որն ուժի մեջ չի մտել, կորցրել է իր նպատակը:

***կրկին հավաստելով*** իրենց խորին հավատն այդ հիմնարար ազատությունների հանդեպ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու կիրառումից,

***համակված վճռականությամբ***՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական իրականացման ճանապարհին,

***համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.***

Հոդված 1. Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում:

## ԲԱԺԻՆ I

## ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 2. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

a) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

b) օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

c) խռովությունը կամ ապստամբությունը օրենքին համապատասխան ճնշելու համար:

**Հոդված 3. Խոշտանգումների արգելում**

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, կամ պատժի:

**Հոդված 4. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում**

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝

a) ցանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

b) զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,

c) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

d) սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

**Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք**

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

a) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելն իրավասու դատարանի կողմից նրան դատապարտելուց հետո,

b) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

c) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

d) անչափահասին կալանքի վերցնելն օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

e) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

f) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ օրենքով՝ դատական իշխանություն իրականացնելու համար լիազորված պաշտոնատար անձի մոտ և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Հոդված 6. Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները՝

a) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

b) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալու իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

c) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

d) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

e) օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

**Հոդված 7. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա**

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:

Հոդված 8. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք։

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով։

Հոդված 9. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն։

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների։

## Հոդված 10. Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

## Հոդված 11. Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք, ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսելուն զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

**Հոդված 12. Ամուսնության իրավունք**

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

**Հոդված 13. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք**

Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

**Հոդված 14. Խտրականության արգելում**

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրա-

մասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

**Հոդված 15. Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում**

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղումն սույն Կոնվենցիայով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3, 4 (1) և 7-րդ հոդվածների դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանց կիրառման դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

**Հոդված 16. Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում**

Ոչինչ 10, 11 և 14-րդ հոդվածներում չի կարող խոչընդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար:

**Հոդված 17. Իրավունքների չարաշահման արգելում**

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

**Հոդված 18. Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները**

Նշված իրավունքների և ազատությունների՝ սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

## ԲԱԺԻՆ II

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**Հոդված 19. Դատարանի հիմնումը** Սույն Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետ՝ Դատարան): Այն գործում է մշտական հիմունքով:

Հոդված 20. Դատավորների թիվը

Դատարանի դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորվող կողմերի թվին:

Հոդված 21. Դատավորներին ներկայացվող պահանջները

1. Դատավորները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր և բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն ճանաչված իրազեկ իրավագետներ:

2. Դատավորները Դատարանի աշխատանքին մասնակցում են անձնապես:

3. Պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն որևէ գործունեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության, անաչառության կամ նրանց աշխատանքի մշտական բնույթից բխող պահանջների հետ. սույն կետի դրույթների կիրառման առնչությամբ ծագող հարցերը լուծում է Դատարանը:

Հոդված 22. Դատավորների ընտրությունները

1. Խորհրդարանական վեհաժողովն ընտրում է յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմի դատավորին Բարձր պայմանավորվող կողմի առաջադրած երեք թեկնածուների ցուցակից՝ քվեների մեծամասնությամբ:

2. Նույն ընթացակարգը կիրառվում է նոր Բարձր պայմանավորվող կողմի միանալու դեպքում Դատարանի կազմը, ինչպես և առաջացող թափուր տեղերը համալրելիս:

Հոդված 23. Պաշտոնավարության ժամկետը

1. Դատավորներն ընտրվում են վեց տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել: Սակայն առաջին ընտրության ժամանակ ընտրված դատավորների կեսի պաշտոնավարության ժամկետը երեք տարի է:

2. Դատավորները, որոնց պաշտոնավարության ժամկետը պետք է լրանա առաջին երեք տարվա ավարտին, որոշվում են իրենց ընտրվելուց անմիջապես հետո՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից անցկացվող վիճակահանությամբ։

3. Յուրաքանչյուր երեք տարին մեկ Դատարանի կազմի, ըստ հնարավորին, կիսով չափ նորացումն ապահովելու նպատակով Խորհրդարանական վեհաժողովը կարող է մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնելը որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող դատավորների պաշտոնավարության ժամկետը կամ ժամկետները լինեն այլ, քան վեց տարին է, բայց ամեն դեպքում ոչ ավելի, քան ինը և ոչ պակաս, քան երեք տարի։

4. Այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է պաշտոնավարության մեկից ավելի ժամկետի, և Խորհրդարանական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետը որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահանությամբ։

5. Այն դատավորը, որն ընտրվել է պաշտոնավարության ժամկետը դեռևս չլրացած դատավորին փոխարինելու համար, այդ պաշտոնն զբաղեցնում է նախորդ դատավորի լիազորությունների ժամկետից մնացած ժամանակահատվածում։

6. Դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին։

7. Դատավորները պաշտոնավարում են մինչև փոխարինվելը։ Նրանք, սակայն, փոխարինվելուց հետո շարունակում են քննել իրենց կողմից արդեն քննության առնված գործերը։

Հոդված 24. Պաշտոնից հեռացնելը

Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին։

Հոդված 25. Գրասենյակը և իրավական հարցերով քարտուղարները

Դատարանն ունի Գրասենյակ, որի գործառույթներն ու կազմակերպումը սահմանվում են Դատարանի ընթացակարգի կանոններով։ Դատարանն օգտվում է իրավական հարցերով քարտուղարների ծառայություններից։

Հոդված 26. Դատարանի լիագումար նիստերը

Լիագումար նիստերում Դատարանը՝

a) ընտրում է իր Նախագահին և Նախագահի մեկ կամ երկու տեղակալի՝ երեք տարի ժամկետով. նրանք կարող են վերընտրվել,

b) ձևավորում է Պալատներ, որոնք ստեղծվում են որոշակի ժամկետով,

c) ընտրում է Դատարանի պալատների նախագահներ. նրանք կարող են վերընտրվել,

d) ընդունում է Դատարանի ընթացակարգի կանոնները,

e) ընտրում է Քարտուղար և Քարտուղարի մեկ կամ մի քանի տեղակալ։

Հոդված 27. Կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

1. Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստեր գումարում է երեք դատավորից կազմված կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պա-

լատում: Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ:

2. Շահագրգիռ մասնակից պետությունից ընտրված դատավորը Պալատի և Մեծ պալատի *ex officio* անդամ է. նման դատավորի բացակայության դեպքում, կամ եթե նա չի կարող մասնակցել նիստին, այդ պետությունը նշանակում է որևէ այլ անձի, որը հանդես է գալիս որպես դատավոր:

3. Մեծ պալատի կազմի մեջ մտնում են նաև Դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, Պալատների նախագահները և Դատարանի այլ դատավորները, որոնք ընտրվում են Դատարանի ընթացակարգի կանոններին համապատասխան: Երբ գործը, 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, հանձնվում է Մեծ պալատ, որևէ դատավոր, որն ընդգրկված է եղել որոշում կայացրած Պալատում, չի կարող մասնակցել Մեծ պալատի նիստերին, բացառությամբ վերոնշյալ Պալատի նախագահի և շահագրգիռ մասնակից կողմի դատավորի:

**Հոդված 28. Կոմիտեների հայտարարությունները գանգատի անընդունելիության մասին**

Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգատը կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգատի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է:

**Հոդված 29. Պալատների որոշումները գանգատի ընդունելիության մասին և ըստ էության** 1. Եթե 28-րդ հոդվածին համապատասխան որոշում չի ընդունվում, Պալատը որոշում է կայացնում 34-րդ հոդվածին համա-

պատասխան ներկայացված անհատական գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:

2. Պալատը որոշում է կայացնում 33-րդ հոդվածին համապատասխան պետության ներկայացրած գանգատի ընդունելիության մասին և ըստ էության:

3. Գանգատի ընդունելիության մասին որոշումը կայացվում է առանձին, եթե դատարանը բացառության կարգով հակառակը չի որոշում:

**Հոդված 30. Ընդդատության զիջումը Մեծ պալատին**

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության ներքո գտնվող հարցի լուծումը կարող է հակասել Դատարանի ավելի վաղ կայացրած որոշմանը, Պալատը կարող է, մինչև իր որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում:

**Հոդված 31. Մեծ պալատի լիազորությունները** Մեծ պալատը՝

a) քննության է առնում 33-րդ կամ 34-րդ հոդվածներին համապատասխան ներկայացված գանգատները, եթե Պալատը 30-րդ հոդվածի դրույթների հիման վրա զիջել է ընդդատությունը, կամ եթե գործը նրան է հանձնվել 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,

b) քննության է առնում խորհրդատվական եզրակացություններ տալու մասին 47-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ներկայացված խնդրանքները:

**Հոդված 32. Դատարանի իրավազորությունը**

1. Դատարանի իրավազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33, 34 և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավազորության շուրջ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը:

**Հոդված 33. Միջպետական գործեր**

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և դրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որ թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ:

**Հոդված 34. Անհատական գանգատները**

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով ճանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչընդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմանը:

1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական

միջոցները և վերջնական որոշման կայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում:

2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ մի անհատական գանգատ, եթե այն՝

a) անանուն է,

b) ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է, կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

3. Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների դրույթների հետ, կամ ակնհայտորեն անհիմն է, կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:

4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

**Հոդված 36. Երրորդ կողմի մասնակցությունը**

1. Պալատի կամ Մեծ պալատի կողմից քննության առնվող ցանկացած գործի կապակցությամբ յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, որի քաղաքացին է դիմողը, իրավունք ունի ներկայացնելու գրավոր դիտողություններ և մասնակցելու լսումներին:

2. Ելնելով արդարադատությունը պատշաճ կերպով իրականացնելու շահերից՝ Դատարանի նախագահը կարող է ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի, որը գործի կողմ չէ, կամ ցանկացած շահագրգիռ անձի,

որը գործի կողմ չէ, կամ ցանկացած շահագրգիռ անձի, որը դիմող չէ, հրավիրել ներկայացնելու գրավոր դիտողություններ կամ մասնակցելու լսումներին:

**Հոդված 37. Գանգատը ցուցակից հանելը**

1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանգատը հանելու գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, թե`

a) դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին,

b) վեճն արդեն կարգավորվել է,

c) Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով` գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ:

Այդուհանդերձ, Դատարանը շարունակում է գանգատի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել գանգատը վերստին ընդգրկելու գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա:

**Հոդված 38. Գործի քննությունը և բարեկամական կարգավորման ընթացակարգը**

1. Եթե Դատարանը գանգատը հայտարարում է ընդունելի, այն`

a) նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է, իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետություններն ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,

b) իր ծառայությունն է տրամադրում գործին առնչվող կողմերին՝ սույն Կոնվենցիայով և դրա արձանագրություններով սահմանված իրավունքների պահպանման հիման վրա հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

2. 1-ին կետի (b) ենթակետին համապատասխան իրականացվող քննությունը խորհրդապահական է:

**Հոդված 39. Բարեկամական կարգավորման ձեռքբերումը**

Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը:

**Հոդված 40. Դռնբաց լսումները և փաստաթղթերի մատչելիությունը**

1. Լսումները դռնբաց են, եթե Դատարանը բացառիկ հանգամանքներում այլ որոշում չի ընդունում:

2. Քարտուղարությանն ի պահ հանձնված փաստաթղթերը մատչելի են հանրությանը, եթե Դատարանի նախագահն այլ որոշում չի ընդունում:

**Հոդված 41. Արդարացի բավարարումը**

Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի բավարարում է տրամադրում:

Պալատների վճիռները վերջնական են դառնում 44-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան:

Հոդված 43. Գործի հանձնումը Մեծ պալատին

1. Պալատի վճռի կայացման օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կարող է պահանջել, որպեսզի գործը հանձնվի Մեծ պալատին:

2. Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբն ընդունում է պահանջը, եթե գործն արծարծում է այնպիսի լուրջ հարց, որը վերաբերում է Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ՝ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց:

3. Եթե հանձնախումբն ընդունում է պահանջը, ապա Մեծ պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով:

Հոդված 44. Վերջնական վճիռները

1. Մեծ պալատի վճիռը վերջնական է:

2. Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝

a) կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնումը Մեծ պալատին, կամ

b) վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ

c) Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան մերժում է գործը հանձնելու պահանջը:

3. Վերջնական վճիռը ենթակա է հրապարակման:

Հոդված 45. Վճիռների և որոշումների պատճառաբանումը

1. Ինչպես վճիռները, այնպես էլ գանգատների ընդունելիության կամ անընդունելիության մասին որոշումները պետք է լինեն պատճառաբանված:

2. Եթե վճիռն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

Հոդված 46. Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

Հոդված 47. Խորհրդատվական եզրակացությունները

1. Նախարարների կոմիտեի խնդրանքով Դատարանը կարող է խորհրդատվական եզրակացություններ տալ Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավական հարցերի առնչությամբ:

2. Նման եզրակացությունները չպետք է շոշափեն այն հարցերը, որոնք վերաբերում են Կոնվենցիայի I բաժնում և դրան կից արձանագրություններում սահմանված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը, կամ՝ ցանկացած այլ հարց, որը Դատարանը կամ Նախարարների կոմիտեն կարող էին քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնք կարող էին տեղի ունենալ Կոնվենցիային համապատասխան:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացություն խնդրելու մասին Նախարարների կոմիտեի որոշումն ընդունվում է կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների քվեների մեծամասնությամբ:

**Հոդված 48. Դատարանի խորհրդատվական իրավազորությունը**

Դատարանը որոշում է, թե արդյոք խորհրդատվական եզրակացության համար Նախարարների կոմիտեի ներկայացրած խնդրանքը 47-րդ հոդվածով սահմանված իր իրավասության շրջանակում է:

**Հոդված 49. Խորհրդատվական եզրակացությունների պատճառաբանությունը**

1. Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է լինեն պատճառաբանված:

2. Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

3. Դատարանի խորհրդատվական եզրայացությունն ուղարկվում է Նախարարների կոմիտե:

**Հոդված 50. Դատարանի պահպանման ծախսերը**

Դատարանի գործունեության հետ կապված ծախսերը կրում է Եվրոպայի խորհուրդը:

**Հոդված 51. Դատավորների արտոնություններն ու անձեռնմխելիությունը**

Դատավորներն իրենց գործառույթները կատարելու ընթացքում օգտվում են Եվրոպայի խորհրդի կանոնադրության 40-րդ հոդվածով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով նախատեսված արտոնություններից ու անձեռնմխելիությունից:

## ԲԱԺԻՆ III

## ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 52. Գլխավոր քարտուղարի պահանջները**

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, ի պատասխան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի պահանջի, ներկայացնում է պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ, որով իր ներպետական իրավունքն ապահովում է Կոնվենցիայի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը։

**Հոդված 53. Մարդու առկա իրավունքների երաշխավորումը**

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորվել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով։

**Հոդված 54. Նախարարների կոմիտեի լիազորությունները**

Սույն Կոնվենցիայում ոչինչ ի վնաս չէ Նախարարների կոմիտեի լիազորություններին, որոնք նրան վերապահված են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությամբ։

**Հոդված 55. Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը**

Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ, բացառությամբ հատուկ համաձայնագրի, իրենք չեն օգտվի իրենց միջև գործող պայմանագրերից, կոնվենցիաներից կամ հռչակագրերից՝ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը զանգատի

միջոցով կարգավորման այլ միջոցների ներկայացնելու նպատակով, քան նրանք, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայով:

Հոդված 56. Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն վավերացնելիս կամ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիան, սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

2. Կոնվենցիայի գործողությունը ծանուցագրի մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա տարածվում է այդ ծանուցագիրը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց հետո 30-րդ օրվանից:

3. Սույն Կոնվենցիայի դրույթները հիշյալ տարածքներում կիրառվում են պատշաճորեն հաշվի առնելով տեղական պահանջները:

4. Ցանկացած պետություն, որը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություն է արել, հետագայում ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերում է այդ հայտարարությունը, հայտարարել, որ ինքը ճանաչում է անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անձանց խմբերից գանգատներ ստանալու Դատարանի իրավասությունը, ինչպես որ դա նախատեսված է Կոնվենցիայի 34-րդ հոդվածով:

Հոդված 57. Վերապահումները

1. Ցանկացած պետություն, սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս, կարող է վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ այն առումով, որ այդ ժամանակ իր տա-

րածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածն ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:

2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

**Հոդված 58. Չեղյալ հայտարարումը**

1. Բարձր պայմանավորվող կողմը կարող է սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել Կոնվենցիային մասնակից դառնալու պահից սկսած հինգ տարի անց միայն և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու պահից սկսած վեց ամիսը լրանալուց հետո. Գլխավոր քարտուղարն այդ մասին իրազեկ է պահում մյուս Բարձր պայմանավորվող կողմերին:

2. Չեղյալ հայտարարելը համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին չի ազատում սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից ցանկացած գործողության կապակցությամբ, որը կարող էր այդ պարտավորությունների խախտում լինել և նրա կողմից կատարվել մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ժամկետը:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը դադարում է Եվրոպայի խորհրդի անդամ լինել, նույն պայմաններով դադարում է սույն Կոնվենցիայի մասնակից լինել:

4. Կոնվենցիան կարող է, նախորդ կետերի դրույթներին համապատասխան, չեղյալ հայտարարվել ցանկացած տարածքի նկատմամբ, որի վրա տարածվում է նրա գործողությունը 56-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Հոդված 59. Ստորագրումը և վավերացումը

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո:

3. Կոնվենցիան ստորագրած այն պետությունների համար, որոնք Կոնվենցիան վավերացնելու են հետագայում, վերջինս ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերն ի պահ հանձնելու ամսաթվից:

4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի և բոլոր վավերագրերի ի պահ հանձնման մասին, որոնք կարող են ստացվել հետագայում:

Կնքված է Հռոմում, 1950 թ. նոյեմբերի 4-ին` անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ օրինակով, որը պահվում է Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը հավաստագրված պատճեններն ուղարկում է Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2003 թվականի հոկտեմբերի 21-ին*

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ

### Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Սույն օրենքը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնում ընտրելու և պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները և երաշխիքները:***(1-ին հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

### Հոդված 2. Մարդու իրավունքների պաշտպանը

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ` Պաշտպան) անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:***(2-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

### Հոդված 3. Պաշտպանի ընտրությունը

1. Պաշտպանի պաշտոնում կարող է ընտրվել 25 տարին լրացած, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

2. Պաշտպանին ընտրում է Ազգային ժողովը` պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով` վեց տարի ժամ-

կետով՝ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջադրված թեկնածուներից:

Պաշտոնը ստանձնելիս Պաշտպանը տալիս է հետևյալ երդումը.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը՝ երդվում եմ՝ հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, հասարակական համակեցության և արդարության սկզբունքներին՝ պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:

Երդվում եմ, որ լիազորություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ջանասիրությամբ:»:

3. Պաշտպանն իր պաշտոնը ստանձնում է նախորդ Պաշտպանի պաշտոնավարման ժամկետի ավարտման օրը: Եթե Պաշտպանի ընտրվելու պահին Պաշտպանի պաշտոնը թափուր է, ապա իր ընտրության հաջորդ օրը:

4. Պաշտպանի հերթական ընտրություններն անցկացվում են Պաշտպանի լիազորությունների ավարտին նախորդող 40 օրվա ընթացքում:

***(3-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

**Հոդված 4. Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը**

1. Պաշտպանը չի կարող զբաղեցնել պետական կամ այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

2. Պաշտպանը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը, մասնակցել նախընտրական քարոզչությանը:

3. Պաշտպանը պարտավոր է սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո՝ ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում:

**Հոդված 5. Պաշտպանի անկախությունը**

1. Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին: Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի:

2. Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

3. Պաշտպանի որոշումները վարչական ակտ չեն հանդիսանում և բողոքարկման ենթակա չեն:***(5-րդ հոդվածը լրաց. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

**Հոդված 6. Պաշտպանի լիազորությունների դադարումը**

1. Պաշտպանի լիազորությունների ժամկետը լրանում է նրա երդմանը հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

2. Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարում են միայն, եթե՝

1) Պաշտպանի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել.

2) նա հրաժարվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից կամ ձեռք է բերել այլ երկրի քաղաքացիություն.

3) նա Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելուց ոչ ուշ, քան 10 օր հետո կրկնում է իր հրաժարականը.

4) Պաշտպանը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

5) նա մահացել է:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Ազգային ժողովի նախագահն առաջիկա նիստում տեղեկացնում է պատգամավորներին Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին:

4. Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում Պաշտպանի ընտրություններն անցկացվում են պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում

***(6-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

**Հոդված 7. Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները**

1. Պաշտպանը քննարկում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաև քաղաքացու) իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նա կարող է տեղեկություններ պահանջել դատարաններից՝ կապված սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի, 12-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի և 17-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների կիրառելիության ապահովման հետ: Պաշտպանն իրա-

վասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:

2. Պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների և կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները:

3. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաև պետական այլ մարմինների նիստերին և ելույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաև այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր:

4. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ելույթ ունենալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, երբ քննարկվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր:*(7-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)*

**Հոդված 8. Պաշտպանին դիմելու իրավունքը**

1. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից: Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախա-

ձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:Պաշտպանին իրավունք ունի դիմել ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը:Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի զորամիավորումներում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման: Պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որևէ խտրականության:

2. Պաշտպանին կարող են դիմել նաև իրավաբանական անձինք:

Իրավաբանական անձի անունից տրված բողոքը վերաբերում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտմանը, եթե իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով խախտվել են նաև նրա մասնակից ֆիզիկական անձանց (բաժնետերերի, փայատերերի, անդամների և այլն), ինչպես նաև նրա պաշտոնատար անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, կամ այդ անձինք իրավաբանական անձի իրավունքների խախտման հետևանքով վնաս են կրել, կամ առկա է այդ անձանց վնաս կրելու հնարավորությունը:

3. Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաև մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

4. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների, չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել:

5. Պաշտոնատար անձինք իրավունք ունեն Պաշտպանին դիմել միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց խախտված իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 9. Պաշտպանին տրվող բողոքը

1. Բողոքը պետք է Պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին:

2. Սույն օրենքի գործողության առաջին տարում Պաշտպանին կարող են տրվել բողոքներ վերջին երեք տարվա ընթացքում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ: Բողոքի համար որևէ հատուկ ձև չպետք է սահմանվի, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը: Բողոքում պետք է նշվեն նաև մարդու խախտված կամ խախտվող իրավունքների և հիմնարար ազատությունների մասին տեղեկությունները:Եթե դիմողն ունի գործի պարզաբանման և լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաև բողոքի հետ կապված դատական կամ վարչական կարգով ընդունված ակտեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

3. Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր: Բանավոր բողոքների բովանդակությունը և սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված տվյալները պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը:

4. Ձերբակալված, նախնական կալանք կամ քրեական պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաև այլ հարկադրական պահման վայրերում գտնվող անձի կողմից Պաշտպանին ուղղված բողոքները և այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման ու որևէ գրաքննության: Դրանք այդ հիմնարկների վարչակազմերի կողմից 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:

5. Պաշտպանին ուղղված բողոքներն ընդունող մարմինը պարտավոր է դիմողի պահանջով վերջինին տրամադրել հավաստագիր (ստացական)՝ բողոքի ստացման մասին:

6. Պաշտպանին ուղղված բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

**Հոդված 10. Պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները**

1. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

2. Պաշտպանը կարող է չքննարկել անանուն բողոքները և այն բողոքները, որոնք տրվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների և ազատությունների խախտման մասին, ինչպես նաև այն բողոքները, որոնք իր

կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ պահանջ չեն ներկայացնում:

3. Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով կարող է լուծել նաև պետական այլ մարմինը կամ պաշտոնատար անձը, և եթե այդ անձը նախապես չի քննարկել տվյալ գործը, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է բողոքը քննարկման նպատակով փոխանցել նրան՝ վերահսկողություն սահմանելով դրա քննարկման նկատմամբ:

Այս դեպքում դիմողը տեղեկացվում է, որ բողոքն այլ պաշտոնատար անձի է փոխանցվել:*(10-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)*

Հոդված 11. Բողոքների ընդունումը

1. Բողոքը ստանալով՝ Պաշտպանը որոշում է ընդունում՝

1) բողոքը քննարկման ընդունելու մասին.

2) դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.

3) բողոքը ներկայացնողի համաձայնությամբ բողոքը այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը.

4) բողոքը չքննարկելու մասին:

2. Բողոքի քննարկման մերժումը պետք է հիմնավորվի սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս Պաշտպանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը:

3. Պաշտպանն ընդունված որոշման պատճենն ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

4. Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

5. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը:

6. Բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Հոդված 12. Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրումը

1. Պաշտպանն իրավասու է՝

1) անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատազրկման վայրեր.

2) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.

4) իրավասու պետական մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձաքննական հետազոտություններ և պատրաստել եզրակացություններ.

5) ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը.

6) ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

Պաշտպանի գրավոր որոշմամբ սույն մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված լիազորությունները կարող են իրականացնել նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները կամ փորձագետների խորհրդի անդամները:

2. Պետական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին Պաշտպանը կարող է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր և փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար և անարգել:

4. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին հնարավորինս արագ, հարցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

5. Իր լիազորությունների շրջանակում Պաշտպանն օգտվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև կազմակերպությունների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց, հարկադրական պահման վայրերի վարչակազմի մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից:***(12-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

**Հոդված 13. Բողոքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարզաբանումը**

1. Բողոքներն ուսումնասիրելիս Պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի և կատարված ուսումնասիրությունների արդյունք-

ների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իրենց դիրքորոշումն ամբողջությամբ:

2. Բողոքի վերաբերյալ քննարկման արդյունքները, քննարկման ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնվում են այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են: Վերջինս պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանումները Պաշտպանին ուղարկել ուսումնասիրության արդյունքներն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգել Պաշտպանը:

**Հոդված 14. Բողոքների կամ դրանց բովանդակության հրապարակումը**

1. Մինչև բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը, քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն:

2. Պաշտպանն իրավունք չունի բողոքի ուսումնասիրման ընթացքում իրեն հայտնի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության:

**Հոդված 15. Պաշտպանի կողմից ընդունվող որոշումները**

1. Քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

1) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ նա տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախ-

տումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները.

2) մարդու իրավունքների և ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում.

3) օրենքով նախատեսված հիմքերով բողոքի քննարկումը դադարեցնելու մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել են բողոքը չքննարկելու կամ քննարկումը դադարեցնելու վերաբերյալ հիմքեր.

4) մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և դրա պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը.

5) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունք-

ները և հիմնարար ազատությունները, և (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները:

2. Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որն ստացել է Պաշտպանի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված միջնորդությունը, պարտավոր է դա ստանալու օրվանից քսանօրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին: Անհրաժեշտության դեպքում Պաշտպանի համաձայնությամբ այս ժամկետը կարող է երկարաձգվել:

4. Պաշտպանը, բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված իր որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, պարտավոր է ուղարկել բողոքն ուղարկած անձին: Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները և հիմնարար ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

5. Պաշտպանը կարող է անհրաժեշտության դեպքում հատուկ զեկույցներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին և Ազգային ժողով:

6. Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ

տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ Պաշտպանի որոշման և միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձանց պատասխանների հետ միասին, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:*(15-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)*

Հոդված 16. Պաշտպանի կողմից տրվող պարզաբանումները

Պաշտպանն իրավասու է մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների հիման վրա, ուսումնասիրության արդյունքների ամփոփման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ:

Հոդված 17. Պաշտպանի զեկույցը

1. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին:

2. Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

**Հոդված 18. Պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման համար**

Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից սույն օրենքով սահմանված Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելն առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով և չափով:

**Հոդված 19. Պաշտպանի անձեռնմխելիությունը**

Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել Պաշտպանի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում: Պաշտպանին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել առանց Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցա-

գործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը:*(19-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)*

**Հոդված 20. Պաշտպանի սոցիալական երաշխիքները**

1. Պաշտպանի աշխատավարձը հավասար է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի աշխատավարձին:

2. Պաշտպանն ունի 30 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

3. Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ազատվում է ժամկետային զինվորական ծառայությունից, զորահավաքներից և վարժական հավաքներից:

**Հոդված 21. Պաշտպանի անվտանգությունը**

Պաշտպանը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Իրավասու պետական մարմինները Պաշտպանի դիմումի հիման վրա պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ Պաշտպանի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով:

**Հոդված 22. Պաշտպանի տեղակալը**

*(22-րդ հոդվածն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-112-Ն)*

**Հոդված 23. Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը**

1. Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ:

2. Պաշտպանի աշխատակազմն իրականացնում է Պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղեկատվական և այլ ապահովում:

3. Պաշտպանի աշխատակազմը պետական հիմնարկ է, որն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվամբ կնիք: Մարզերում կարող են ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանի մարզային ներկայացուցչություններ:

4. Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն և աշխատում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով: ***(1-ին նախադասությունը հանվել է 01.06.06 ՀՕ-112-Ն)***: ***(2-րդ նախադասությունը հանվել է 01.06.06 ՀՕ-112-Ն)***

5. Այն անձինք, ովքեր որևէ պաշտոն են զբաղեցնում Պաշտպանի աշխատակազմում, չեն կարող մեղադրվել, հետաքննության ենթարկվել, ձերբակալվել, կալանքի ենթարկվել կամ դատի տրվել Պաշտպանի հանձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որևէ գործողության, կարծիքի կամ ընդունած որոշման համար: Եթե աշխատակազմում որևէ պաշտոն զբաղեցնող անձը ձերբակալվում է, կալանքի է ենթարկվում կամ դատի է տրվում այլ հանցամանքի պատճառով, ապա մեղադրող մարմինը պետք է սահմանված կարգով և ժամկետում այդ մասին տեղեկացնի Պաշտպանին: ***(23-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

**Հոդված 24. Պաշտպանի գործունեության ֆինանսավորումը**

1. Պաշտպանի և նրա աշխատակազմի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, որը պետք է ապահովի նրանց բնականոն գործունեությունը:

2. Պաշտպանի և նրա աշխատակազմի բյուջեն պետական բյուջեի մաս է, որը ֆինանսավորվում է առանձին տողով:

3. Պաշտպանը օրենսդրությամբ սահմանված կարգով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված ժամկետում Պաշտպանի և աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) ներկայացնում է պետական լիազորված մարմին՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

4. Պաշտպանի և նրա աշխատակազմի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (նախահաշիվը) կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում՝ պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով:

Կառավարությունն Ազգային ժողով և Պաշտպանին է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման վերաբերյալ առարկության հիմնավորումը:

5. Պաշտպանն ինքնուրույն է տնօրինում իր ֆինանսական միջոցները:

6. Ֆինանսական և բյուջետային հաշվետվությունները Պաշտպանը ներկայացնում է համապատասխանաբար սույն օրենքի 17-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգերին համապատասխան: ***(24-րդ հոդվածը խմբ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

**Հոդված 25. Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը**

1. Պաշտպանը հաստատում է աշխատակազմի կառուցվածքը, նրա կանոնակարգը և անմիջականորեն ղեկավարում է աշխատակազմի աշխատանքները:

2. Ծախսերի հաշվարկի շրջանակներում Պաշտպանը որոշում է իր աշխատակազմի աշխատողների թվաքանակը և հաստիքացուցակը:

3. Աշխատակազմի ղեկավարման հետ կապված հարցերով Պաշտպանն արձակում է հրամաններ:

Հոդված 26. Փորձագիտական խորհուրդը

1. Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

2. Փորձագիտական խորհրդի անդամներին հրավիրում է Պաշտպանը:

3. Փորձագիտական խորհրդի կազմը չի կարող գերազանցել 20 անդամը:

4. Փորձագիտական խորհրդի անդամները ներգրավվում են կամավորական հիմունքներով և իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով:***(26-րդ հոդվածը փոփ. 01.06.06 ՀՕ-112-Ն)***

Հոդված 27. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը և 3-րդ մասը, 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ են մտնում Պաշտպանի նշանակման և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու իրավունքի մասին դրույթները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանելուց հետո:

2. Մինչև սահմանադրական փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) Ազգային ժողովի խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է Պաշտպանին.

2) տալիս է 6-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով պահանջվող համաձայնությունները:

Առաջին Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է սույն հոդվածի առաջին մասով սահմանված սահմանադրական փոփոխությունններն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

Առաջին Պաշտպանը նշանակվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

2003թ. Նոյեմբերի 15

Երևան

ՀՕ-23-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին*

## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### *ԳԼՈՒԽ 1.*
### *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

Սույն օրենքը կարգավորում է գիտական և գիտատեխնիկական գործունեության սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև գիտական արդյունքներն օգտագործողների հարաբերությունները, սահմանում է գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները:

Գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, գտնվում է պետության հովանավորության ներքո:

***Հոդված 1.*** **Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

**գիտական և գիտատեխնիկական գործունեություն**՝ ձեռք բերած գիտելիքների ընդլայնմանը և նոր գիտելիքների ստացմանն ու կիրառմանն ուղղված մտավոր ստեղծագործական գործունեություն, ներառյալ՝

ա) հիմնարար գիտական հետազոտություններ՝ բնության օրենքների, մարդու գործունեության, հասարակության կառուցվածքի և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին ունեցած գիտելիքների ընդլայնմանն ու նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գործունեություն,

բ) կիրառական գիտական հետազոտություններ՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտություններ.

*փորձարարական մշակումներ*՝ գիտական հետազոտությունների կամ գործնական փորձի միջոցով ձեռք բերված գիտելիքների վրա հիմնված և մարդու կյանքի ու առողջության պահպանմանը, նոր նյութերի, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի կամ մեթոդների ստեղծմանը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված գործունեություն.

*ինովացիոն գործունեություն*՝ գիտական արդյունքների օգտագործմանը, նոր արդյունքների ստացմանը, թողարկվող արտադրանքի որակի բարձրացմանը և ծախսերի նվազեցմանն ուղղված գործունեություն.

*գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականություն*՝ պետության քաղաքականության բաղկացուցիչ մաս, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտական ու գիտատեխնիկական գործունեության նկատմամբ, որոշում այդ բնագավառում պետական մարմինների գործունեության հիմնական նպատակները, սկզբունքները, ուղղությունները և եղանակները.

*գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունք*՝ նոր գիտելիքներ կամ լուծումներ բովանդակող ու տեղեկատվության ցանկացած կրիչի վրա գրանցված գիտական և (կամ) գիտատեխնիկական գործունեության արդյունք, որը կարող է ներդրվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում.

*գիտնական*՝ գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտ, որն զգալի ներդրում ունի գիտության մեջ.

*գիտական աշխատող*՝ գիտական կազմակերպություններում, հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական, հետախուզական աշխատանքներ կատարող անձ

*գիտական կամ գիտատեխնիկական կազմակերպություն (այսուհետ՝ գիտական կազմակերպություն)*՝ կազմակերպություն, որը, անկախ իր կազմակերպական-իրավական ձևից, հիմնականում իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում է գիտական կադրերի պատրաստմամբ:

***Հոդված 2.*** **Օրենքի հիմնական նպատակը և խնդիրները**

1. Սույն օրենքի հիմնական նպատակը գիտական և գիտատեխնիկական գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորումն է:

2. Սույն օրենքի հիմնական խնդիրներն են գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում սահմանել՝

ա) գիտական և գիտատեխնիկական գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակը.

բ) գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության հիմնական նպատակները, ուղղությունները և սկզբունքները.

գ) գիտության կառավարման մարմինների լիազորությունները.

դ) գիտական կազմակերպության իրավական կարգավիճակը.

ե) գիտական և գիտատեխնիկական գործունեության տնտեսական, սոցիալական և իրավական ազատության երաշխիքները:

***Հոդված 3.*** **Գիտական և գիտատեխնիկական գործունեության իրավական կարգավորումը**

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, որոնք նախատեսված չեն սույն օրենքում, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեությունը կարգավորող այլ օրենքներում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

## ԳԼՈՒԽ 2.
## ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

### *Հոդված 4.* Գիտության և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող անձինք և կազմակերպությունները

Գիտության և գիտատեխնիկական գործունեությունն իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք (ներառյալ` օտարերկրյա)` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այսուհետ` օրենսդրություն) սահմանված կարգով:

Գիտության և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներ են գիտնականները, գիտական աշխատողները, գիտամանկավարժական բնագավառի աշխատողները, գիտական (ներառյալ` հասարակական) կազմակերպությունները, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները:

### *Հոդված 5.* Գիտնականի և գիտական աշխատողի իրավունքները և պարտականությունները

1. Գիտնականը և գիտական աշխատողն իրավունք ունեն`

ա) իրենց հետաքրքրություններին, ստեղծագործական ունակություններին, ինչպես նաև համամարդկային ու ազգային արժեքներին համապատասխան ընտրել գիտական և գիտատեխնիկական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ.

բ) գիտական և գիտատեխնիկական համատեղ գործունեություն ծավալելու նպատակով միավորվել այլ գիտնականների, գիտական աշխատողների հետ և կազմակերպել մշտական կամ ժամանակավոր գիտական կոլեկտիվներ.

գ) պատճառաբանված կերպով հրաժարվել այն գիտական կամ գիտատեխնիկական հետազոտություններին մասնակցելուց, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել մարդու, հասարակության կամ շրջակա միջավայրի վրա.

դ) իրենց որակավորմանը, ստացված գիտական արդյունքների, կատարվող աշխատանքի որակի և բարդության աստիճանին համապատասխան ակնկալել իրենց գործունեության անաչառ գնահատական և նյութական խրախուսում, ինչպես նաև վարձատրվել կամ եկամուտ ստանալ իրենց գիտական կամ գիտատեխնիկական գործունեության արդյունքի իրացումից.

ե) մասնակցել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող գիտական հետազոտությունների համար հայտարարված մրցույթներին.

զ) տպագրել և հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

է) մասնակցել գիտական և գիտատեխնիկական աշխատողների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներին.

ը) գիտության զարգացման, տեխնոլոգիաների, գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, արտադրության մեջ դրանց ներդրման ու գիտական կադրերի պատրաստման համար արժանանալ գիտական աստիճանների, գիտական կոչումների, մրցանակների, տիտղոսների, պատվավոր կոչումների.

թ) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվության.

ժ) զբաղվել մանկավարժական գործունեությամբ, իրականացնել խորհրդատվություն, լինել փորձագետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

ժա) գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

2. Գիտնականը և գիտական աշխատողը պարտավոր են՝

ա) գիտական կամ գիտատեխնիկական գործունեությամբ վնաս չհասցնել մարդու կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին.

բ) պահպանել էթիկայի չափանիշները և մտավոր սեփականության իրավունքը:

3. Գիտական աշխատողը նաև պարտավոր է՝

ա) գիտական հետազոտությունները կատարել կնքված պայմանագրերին համապատասխան.

բ) մշտապես բարձրացնել իր որակավորումը:

***Հոդված 6.*** **Գիտական կազմակերպությունը**

1. Գիտական կազմակերպությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 51 հոդվածով, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ցանկացած առևտրային և ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական-իրավական ձև կամ լինել հիմնարկ:

2. Գիտական կազմակերպություններն ստորաբաժանվում են գիտահետազոտական կազմակերպությունների, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների գիտական ստորաբաժանումների, փորձակոնստրուկտորական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական կամ գիտական և գիտատեխնիկական գործունեություն ծավալող այլ կազմակերպությունների:

3. Գիտական կազմակերպության գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը սահմանվում է օրենսդրությամբ:

Առևտրային կազմակերպության կարգավիճակ ունեցող գիտական կազմակերպությունները կարող են լինել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, ինչպես նաև բաց կամ փակ բաժնետիրական ընկերության կազմակերպական-իրավական ձևերով: Առևտրային գիտական կազմակերպությունների կանոնադրություններն ընդունվում են այդ կազմակերպությունների կողմից: Դրանք օրենքով սահմանված կարգով գրանցում է հիմնադիրը:

Ոչ առևտրային գիտական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է, որի կանոնադրությունն ընդուն-

վում է այդ կազմակերպությունում և. օրենքով սահմանված կարգով, հաստատվում հիմնադրի կողմից:

4. Գիտական պետական կազմակերպությունը ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 129 հոդվածի, սույն օրենքի, այլ օրենքների ու նորմատիվ ակտերի հիման վրա և դրանցում նախատեսված կարգով ու սահմանված հիմքով ձեռք է բերում իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ: Գիտական պետական կազմակերպության կանոնադրությունը հաստատում է հիմնադիրը, իսկ նրա գույքը չի կարող օտարվել մասնավորեցման կարգով:

5. Պետական հիմնարկ հանդիսացող գիտական կազմակերպությունը սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև իր հիմնադրի հաստատած կանոնադրությամբ սահմանված կարգով տիրապետում, օգտագործում, տնօրինում է իրեն տրամադրված գույքը՝ դրա նշանակությանը համապատասխան: Հիմնարկն ունի հաշվեկշիռ, նախահաշիվ, բանկային հաշիվ և զինանշանով կնիք: Պետական հիմնարկ հանդիսացող գիտական կազմակերպության գույքը սեփականության իրավունքով պատկանում է պետությանը և չի կարող օտարվել մասնավորեցման կարգով: Հիմնարկի իրավական վիճակի այլ առանձնահատկությունները սահմանվում են օրենքով և հիմնարկի կանոնադրությամբ:

6. Գիտական կազմակերպությունը կարող է գիտական կամ գիտատեխնիկական համագործակցություն իրականացնել օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Բարձր որակավորմամբ գիտական աշխատողներ և մասնագետներ ունեցող գիտական կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ կառավարություն) կարող է տալ գիտական կենտրոնի կարգավիճակ: Կենտրոնը համալիր ուսումնասիրություն կատարող, ինչպես նաև բարձր որակավորման աշխատողներ և մասնագետներ ունեցող

գիտական կազմակերպություն է կամ դրա առանձնացված տարածքային միավորում:

8. Գիտական կազմակերպությունն ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

*Հոդված 7.* **Գիտական կազմակերպության գիտական խորհուրդը**

1. Գիտական կազմակերպության գիտական խորհուրդն այդ կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

2. Գիտական կազմակերպության գիտական խորհրդի կազմը, կազմավորման կարգը, խնդիրները, գործառույթները, կախված նրա կազմակերպական-իրավական ձևից, սահմանվում են կազմակերպության կամ դրա հիմնադրի կողմից հաստատված կանոնադրությամբ:

*Հոդված 8.* **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան**

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ԳԱԱ) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 129 հոդվածի, սույն օրենքի, այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի հիման վրա և դրանցում նախատեսված կարգով ու սահմանված հիմքով ձեռք է բերում և իրականացնում սույն հոդվածի 8-րդ կետում ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2. ԳԱԱ-ն Հայաստանի Հանրապետության գիտական բարձրագույն կենտրոնն է, որը միավորում է իր համակարգի գիտական կազմակերպությունները, ԳԱԱ իսկական և թղթակից անդամներին, գիտնականներին և գիտական աշխատողներին, համակարգում է հանրապետությունում իրականացվող հիմնարար գիտական հետազոտությունները:

3. ԳԱԱ-ն գործում է սույն օրենքի, այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ու իր կանոնադրության հիման վրա:

4. ԳԱԱ կառավարման մարմիններն են՝ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների ընդհանուր ժողովը, ԳԱԱ նախագահությունը և ԳԱՍ նախագահը: Նախագահությունը և նախագահն ընտրվում են ընդհանուր ժողովում՝ ԳԱԱ անդամների կազմից, հաշվետու և պատասխանատու են ընդհանուր ժողովի առջև:

ԳԱԱ կառավարման մարմինների կարգավիճակը սահմանվում է ԳԱԱ կանոնադրությամբ, որն ընդունում է ընդհանուր ժողովը և հաստատում կառավարությունը:

5. Հայաստանի Հանրապետությունում գիտական քաղաքականության մշակման, իրականացման և գիտության կառավարման ոլորտում ԳԱԱ-ն ունի հատուկ կարգավիճակ և պետության հետ ունեցած հարաբերություններում անմիջականորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ: ԳԱԱ նախագահը մասնակցում է կառավարության նիստերին:

6. ԳԱԱ-ն կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուն է, որի առաջարկները պարտադիր կարգով քննարկում են կառավարության և պետական կառավարման համապատասխան մարմինները: Պետական կառավարման մարմինները քննարկումներն անցկացնում են համապատասխան առաջարկները ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

7. ԳԱԱ գործունեության բազային և նպատակային-ծրագրային ֆինանսավորումը պետական բյուջեում նշվում է առանձին տողով:

8. ԳԱԱ-ն՝

ա) կազմակերպում և իրականացնում է հիմնարար ու կիրառական հետազոտություններ գիտության հիմնախնդիրների վերաբերյալ.

բ) համակարգում է գիտական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող հիմնարար հետազոտությունները.

գ) մասնակցում է Հայաստանի Հանրապետության գիտատեխնիկական քաղաքականության սկզբունքների մշակմանը և պետական գիտական ծրագրերի ստեղծմանը.

դ) մասնակցում է գիտահետազոտական ծրագրերի փորձաքննության սկզբունքների և մեթոդների մշակմանը, սահմանված կարգով իրականացնում է փորձաքննություն հիմնարար գիտությունների բնագավառում.

ե) իրականացնում է գիտական, կրթական և մշակութային ներդաշնակ համակարգի ձևավորմանն ու հանրապետության գիտական ներուժի զարգացմանն ուղղված՝ օրենսդրությամբ սահմանված այլ գործունեություն.

զ) իր կանոնադրությամբ հաստատված կարգով կազմակերպում է ԳԱԱ իսկական և թղթակից անդամների ընտրությունը և շնորհում է համապատասխան տիտղոսներ.

է) շնորհում է ակադեմիկոսի գիտական տիտղոս, որը Հայաստանի Հանրապետությունում կարող է շնորհել միայն ԳԱԱ-ն.

ը) ԳԱԱ իսկական և թղթակից անդամներին տրամադրում է ցմահ պատվո վճար, որի չափը սահմանում է կառավարությունը:

9. ԳԱԱ և նրա համակարգի կազմակերպությունների գույքը ենթակա չէ սեփականաշնորհման: ԳԱԱ և նրա համակարգի կազմակերպությունների չօգտագործվող գույքը վարձակալության հանձնվելու դեպքում ստացված գումարները օգտագործվում են նրանց կանոնադրական խնդիրները իրականացնելու համար:

10. ԳԱԱ-ն վերակազմակերպվում և լուծարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Հոդված 9.*** **ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունները**

1. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունները ԳԱԱ հիմնարկները են, որոնք գործում են սույն օրենքի, այլ օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ու ԳԱԱ-ի հաստատած կանոնադրությունների հիման վրա. ունեն հաշվեկշիռ, նախահաշիվ, բանկային հաշիվ և զինանշանով կնիք:

2. ԳԱԱ համակարգի կազմակերպությունների տիպային (օրինակելի) կանոնադրությունը, որը երաշխավորում է հատկացված գույքը տիրապետելու և տնօրինելու՝ այդ կազմակերպությունների ինքնուրույնությունը, հաստատում է կառավարությունը:

ԳԱԱ-ն, իր համակարգի գիտական կազմակերպությունների կանոնադրությունները հաստատելիս, իրավունք չունի սահմանափակել կառավարության հաստատած տիպային կանոնադրությամբ նախատեսված այդ կազմակերպություններին հատկացված գույքը տիրապետելու և օգտագործելու նրանց լիազորությունները:

3. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով կարող են զբաղվել շահութաբեր գործունեությամբ՝ այդ նպատակների համար օգտագործելով պետական առաջադրանքի կատարումից ազատ տարածքները, սարքավորումները և այլ գույք:

4. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների շահութաբեր գործունեության նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված ձեռնարկատիրական գործունեության ռեժիմը:

5. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունները ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները ծախսում են իրենց կանոնադրական խնդիրների լուծման համար:

### *Հոդված 10.* Գիտական և գիտատեխնիկական գործունեությունը բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեությունը բարձրագույն ուսումնական հաստատության կարևորագույն գործառույթներից մեկն է: Այն իրականացվում է սույն օրենքին, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և տվյալ հաստատության կանոնադրությանը համապատասխան:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության կազմում կարող են ստեղծվել գիտական ստորաբաժանումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

*Հոդված 11.* **Գիտնականների, գիտական աշխատողների հասարակական միավորումները**

1. Գիտնականները, գիտական աշխատողները, օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են կամավոր հիմունքներով ստեղծել հասարակական միավորումներ, ներառյալ՝ գիտական, գիտատեխնիկական և գիտալուսավորչական ընկերություններ, միություններ, գիտությունների հասարակական ակադեմիաներ, որոնք նպատակաուղղված գործունեություն են ծավալում գիտության համապատասխան բնագավառի զարգացման ուղղությամբ:

2. Պետական մարմինները գիտնականների, գիտական աշխատողների հասարակական միավորումներին, ներառյալ՝ գիտությունների հասարակական ակադեմիաներին, կարող են կամավորության հիմունքներով ներգրավել գիտության զարգացման հետ առնչվող որոշումների նախագծերի նախապատրաստմանը և փորձաքննությունների անցկացմանը:

## ԳԼՈՒԽ 3
## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

*Հոդված 12.* **Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության նպատակներն ու սկզբունքները**

1. Գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝

ա) հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրումը.

բ) տնտեսության զարգացման նպատակով գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման խրախուսումը.

գ) սոցիալական խնդիրների լուծմանը նպաստելը.

դ) մարդու, հասարակության և պետության անվտանգությանն աջակցելը.

ե) գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը.

զ) երկրի բնապահպանական վիճակի բարելավումը.

է) միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրումը.

ը) գիտատեխնիկական մշակույթի զարգացումը և տարածումը.

թ) գիտության ժամանակակից ենթակառուցվածքի և տեղեկատվական ապահովման համակարգի ձևավորումը:

2. Գիտական և գիտատեխնիկական ոլորտում պետական քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներն են`

ա) գիտության` իբրև պետության և հասարակության գործունեության բոլոր ոլորտներում գիտականորեն հիմնավորված մոտեցումների առաջատար դերի ընդունումը.

բ) հիմնարար գիտական հետազոտությունների, գիտության և տեխնիկայի գերակա ուղղությունների զարգացման ապահովումը.

գ) գիտության և տեխնիկայի բնագավառում մրցակցությանն ու ձեռնարկատիրական գործունեությանն աջակցելը.

դ) գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության խրախուսումը.

ե) մտավոր սեփականության իրավական պաշտպանվածությունը և դրա արդյունավետ օգտագործման պայմանների ստեղծումը.

զ) գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցության զարգացումը.

է) գիտության հասարակական վարկի բարձրացումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության, նրանց սոցիալական, տնտեսական և իրավական պաշտպանվածության ապահովումը.

ը) տաղանդավոր երիտասարդ գիտնականների ընտրության և խրախուսման համակարգի ստեղծումը.

թ) գիտատեխնիկական գործունեության սուբյեկտների ստեղծագործական ազատության ճանաչումը:

*Հոդված 13.* **Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարումը**

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության կառավարումն իրականացվում է պետական կարգավորման և այդ գործունեության սուբյեկտների ինքնակառավարման սկզբունքների զուգակցմամբ:

2. Պետական մարմինները, գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունները, իրենց իրավասության շրջանակներում, որոշում են գիտության և տեխնիկայի զարգացման ոլորտում գերակա ուղղությունները, ապահովում գիտական համակարգի զարգացումը, գիտական և գիտատեխնիկական գործունեության միջճյուղային համակարգումը, գիտական ու գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի մշակումն ու իրականացումը, գիտության և արտադրության ինտեգրման ձևերի զարգացումը, գիտության և տեխնիկայի նվաճումների իրացումը:

3. Գիտական պետական կազմակերպությունների հիմնադիրները՝

ա) հաստատում են գիտական պետական կազմակերպությունների կանոնադրությունները.

բ) վերահսկողություն են իրականացնում պետության կողմից գիտական պետական կազմակերպություններին տրամադրված գույքի արդյունավետ օգտագործման, տիրապետման և պահպանման նկատմամբ.

գ) իրենց իրավասության շրջանակներում իրականացնում են այլ լիազորություններ:

ԳԱԱ և գիտական այլ կազմակերպությունների ղեկավարները նշանակվում կամ ընտրվում են օրենսդրությամբ և իրենց կանոնադրություններով սահմանված կարգով:

*Հոդված 14.* **Կառավարության իրավասությունը գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում**

1. Գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում կառավարության իրավասությունն է՝

ա) գիտական և գիտատեխնիկական միասնական քաղաքականության իրականացումը.

բ) Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների որոշումը.

գ) գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը.

դ) գիտահետազոտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի հաստատումը.

ե) պետական բյուջեի համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը.

զ) գիտական պետական կազմակերպությունների ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

է) գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի ու չափանիշների հաստատումը.

ը) գիտական կադրերի որակավորման կարգի և գնահատման չափանիշների հաստատումը.

թ) գիտության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինների և նրանց խնդիրների սահմանումը:

2. Կառավարությունը պետական բյուջեի նախագծի հետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերը:

***Հոդված 15.* Գիտության պետական կառավարման խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում գիտության պետական կառավարման խնդիրներն են՝

ա) գիտական, գիտատեխնիկական պետական և նպատակային ծրագրերի մշակումը, պետական պատվերի տեղադրումը.

բ) գիտական և բարձր տեխնոլոգիական ոլորտի աշխատանքների համակարգումը.

գ) գիտության և արտադրության միջև փոխշահավետ հարաբերությունների ստեղծմանն օժանդակելը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը նպաստելը.

դ) միջպետական գիտատեխնիկական ծրագրերի մշակման աշխատանքների համակարգումը.

ե) գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային կազմակերպությունների հետ գիտական համագործակցության կազմակերպումը.

զ) գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի և չափանիշների մշակումը.

է) գիտական կադրերի որակավորման կարգի և գնահատման չափանիշների մշակումը:

***Հոդված 16*. Գիտական կադրերի պատրաստումը և որակավորումը: Գիտական աստիճանները և գիտական կոչումները**

1. Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրա, օրդինատուրա, դոկտորանտուրա և հայցողների համակարգ: Ասպիրանտուրայում, օրդինատուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Գիտական որակավորման իրավական հիմքերը և չափանիշները սահմանում է կառավարությունը, իսկ դրանց իրականացումն ապահովում է որակավորման պետական համակարգը:

3. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

4. Պրոֆեսորի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին հինգ տարիներին զբաղվել են գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեությամբ կամ առնվազն պաշտպանած գիտական հինգ թեզերի ղեկավար են:

5. Դոցենտի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեու-

թյան վերջին երեք տարիների ընթացքում բուհական համակարգում իրականացրել են գիտամանկավարժական գործունեություն:

6. Մշակույթի և սպորտի բնագավառներում պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումների շնորհման կարգը սահմանում է կառավարությունը:

7. Գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին առընթեր մասնագիտական խորհուրդները՝ կառավարության սահմանած կարգով:

8. Գիտական աստիճանները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը՝ կառավարության սահմանած կարգով: Դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը:

9. Գիտական կոչումները շնորհվում են բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների որոշմամբ՝ կառավարության սահմանած կարգով:

Գիտական կոչումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը: Դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը:

10. Գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման առկայությունը հաշվի է առնվում գիտական աշխատողի կողմից տվյալ գիտական պաշտոնին հավակնելու դեպքում:

11. Գիտական աստիճանները և (կամ) կոչումները, որոնք շնորհվել են մինչև 1993 թվականը, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և հավասարեցվում են դրանից հետո շնորհված գիտական աստիճաններին և (կամ) կոչումներին:

***Հոդված 17.*** **Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումը**

1. Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի ատեստավորումն իրականացվում է առնվազն հինգ տարին մեկ անգամ: Ատեստավորումը նպատակ ունի՝

ա) գնահատել գիտական աշխատողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը և նրա կողմից ստացված գիտական արդյունքները.

բ) պարզել գիտական աշխատողի մասնագիտական որակի համապատասխանությունը նրա զբաղեցրած պաշտոնին:

2. Գիտական աշխատողի ատեստավորման կարգի և գնահատման չափանիշների խախտման դեպքում ատեստավորման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

3. Գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատում է կառավարությունը:

***Հոդված 18.*** **Գիտական և գիտատեխնիկական աշխատանքի արդյունքի իրավական ռեժիմը**

Գիտական և գիտատեխնիկական աշխատանքի արդյունքը՝ որպես մտավոր սեփականության իրավական ռեժիմ, սահմանվում է օրենսդրությամբ:

***Հոդված 19.*** **Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և թոշակավորումը**

1. Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և կենսաթոշակը պետք է նպաստեն գիտական աշխատանքի վարկի բարձրացման ու գիտական կադրերի նորացման գործընթացին, բավարար նյութական պայմաններ ապահովեն ինքնուրույն և արդյունավետ ստեղծագործական գործունեություն իրականացնելու համար:

2. Գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի վարձատրությունը բաղկացած է օրենսդրությամբ սահմանված աշխատավարձից, պարգևատրումներից, գիտական աստիճանի, գիտության ոլորտում աշխատանքային ստաժի համար տրվող լրացուցիչ վարձատրությունից և այլ հավելավճարներից: Գիտական աշխատողի վարձատրության պայմանները սահմանում է կառավարությունը:

3. Պետությունը գիտական աստիճան ունեցող անձանց կենսաթոշակից բացի տալիս է հավելավճար, որի չափը և տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:

***Հոդված 20.*** **Գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական փորձաքննության կազմակերպումն ու իրականացումը**

Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի հաշվին ֆինանսավորվող գիտական ու գիտատեխնիկական ծրագրերի և նախագծերի ընտրությունն իրականացվում է փորձաքննության միջոցով՝ մրցույթով, որի անցկացման կարգը սահմանում է կառավարությունը:

***Հոդված 21.*** **Գիտատեխնիկական տեղեկատվական համակարգը**

Գիտության զարգացմանը և գիտատեխնիկական գործունեությանը նպաստելու նպատակով պետությունն ստեղծում է գիտատեխնիկական տեղեկատվության ապահովման համակարգ, որի գործունեությունը և զարգացումը կազավորրվում են օրենսդրությամբ:

***Հոդված 22.*** **Գիտական և գիտատեխնիկական գործունեության սերտիֆիկացումն ու ստանդարտացումը**

Գիտական և գիտատեխնիկական գործունեության սերտիֆիկացումն ու ստանդարտացումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Հոդված 23.*** **Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորումը**

1. Գիտական և գիտատեխնիկական քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից է բյուջետային ֆինանսավորումը:

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման համար, սկսած 2002 թվականից, պետությունը միջոցներ է հատկացնում պետական բյուջեի տարեկան ծախսային մասի երեք տոկոսից ոչ պակաս չափով: Այդ միջոցներն ուղղվում են բարձրորակ գիտական կադրերի պատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ինչպես նաև գիտական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, նոր տեխնոլոգիաների մշակմանն ու սարքավորումների ձեռքբերմանը:

3. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն.

բ) պայմանագրերից գոյացած միջոցները.

գ) հիմնադրամները, ներառյալ՝ արտասահմանյան ու միջազգային կազմակերպությունների հատկացումները, քաղաքացիների ներդրումները և այլն.

դ) դրամաշնորհները.

ե) վարկերը.

զ) գիտական, հրատարակչական, խորհրդատվական և օրենքով չարգելված այլ գործունեությունից գոյացած միջոցները.

է) գիտական արդյունքների ներդրումից և իրացումից գոյացած միջոցները:

4. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ ձևերով.

ա) բազային ֆինանսավորում, որը հատկացվում է գիտական պետական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ու գիտական կադրերի պատրաստման նպատակներով.

բ) նպատակային - ծրագրային ֆինանսավորում, որն իրականացվում է մրցութային հիմունքներով և ուղղված է գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի կատարմանը.

գ) պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորում, որն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի (կոլեկտիվների) նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը:

Պետական բյուջեից նշված երեք ձևով ֆինանսավորման ծավալների միջև համամասնությունները որոշվում են պետական բյուջեի մասին օրենքով: Պետական բյուջեից գիտության ֆինանսավորման ընդհանուր ծավալում բազային

ֆինանսավորման մասնաբաժինը հաստատվում է պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացմամբ:

***Հոդված 24.*** **Գիտական և գիտատեխնիկական միջազգային համագործակցությունը**

1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության սուբյեկտն իրավունք ունի անդամակցել գիտական և գիտատեխնիկական միջազգային կազմակերպություններին ու միավորումներին, մասնակցել միջազգային գիտական և գիտատեխնիկական ծրագրերին ու նախագծերին, օտարերկրյա պետությունների գիտական և գիտատեխնիկական ծրագրերին ու նախագծերին, աշխատանքային պայմանագրեր և այլ համաձայնագրեր կնքել օտարերկրյա ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ:

Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց և գիտական կազմակերպությունների հետ համատեղ կարող են ստեղծվել գիտական կազմակերպություններ և կենտրոններ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Գիտության և տեխնիկայի ոլորտում օտարերկրյա ներդրումները կատարվում են օրենսդրությանը համապատասխան:

## ԳԼՈՒԽ 4
## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

***Հոդված 25.*** Օրենքի ուժի մեջ մտնելը

Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

26 դեկտեմբերի 2000թ.
ՀՕ-119

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

*Ընդունված է 2006 թվականի ապրիլի 13-ին*

# «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (5 դեկտեմբերի 2000 թվականի, ՀՕ-119-Ն, այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի առաջին մասը լրացնել «ժ» կետով.

«ժ) հայագիտության զարգացմանը նպաստելը»:

***Հոդված 2.*** Օրենքի 14-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետը «որոշումը» բառից հետո լրացնել «հայագիտության զարգացման ծրագրերի հաստատումը» բառերով:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ — Ռ. Քոչարյան

2006 թ. մայիսի 4
Երևան
ՀՕ-46-Ն

# ԲԱԺԻՆ II

*Հաստատված է*
*ՀՀ կառավարության 2001 թվականի*
*հուլիսի 20-ի № 662 որոշմամբ*

# ԿԱՐԳ

## Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում պետական և հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհեր), Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների գիտական կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման, ինչպես նաև հայցորդության ձևակերպման կարգը:

2. Ասպիրանտուրան, դոկտորանտուրան և հայցորդությունը հետբուհաÏան կրթության համակարգում գիտամանկավարժական ու գիտական բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձևեր են, որոնք իրականացվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՈՀ) Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկին համապատասխան մասնագիտություններñáվ:

3. Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը սովորում է

ասպիրանտուրայում՝ տեսական մասնագիտական գիտելիքներ խորացնելու և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու, իսկ հետազոտողի հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի առկայության դեպքում նաև համապատասխան որակավորման աստիճան ստանալու համար։

4. Դոկտորանտը գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձ է, որն ընդունվել է դոկտորանտուրա՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն պատրաստելու համար։

5. Հայցորդը բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձ է, որը բուհին կամ կազմակերպությանը կից պատրաստում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն։

6. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և հայցորդների համակարգի ձևերով գիտական կադրեր պատրաստելու իրավունք ունեն այն բուհերն ու կազմակերպությունները, որոնք ունեն բարձր որակավորմամբ գիտամանկավարժական և գիտական կադրեր, ժամանակակից գիտահետազոտական ու փորձարարական բազա, հեղինակավոր գիտական դպրոցներ, մասնակցում են հանրապետական և միջազգային գիտակրթական ծրագրերի, նախագծերի մշակմանն ու իրականացմանը։

7. Ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ առաջարկությունները համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետև՝

նախարարություն), իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների, ազգային ակադեմիայի կազմակերպությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն՝ կցելով սույն կարգի 2-րդ կետում նշված մասնագիտությունների ցանկը, յուրաքանչյուր մասնագիտությամբ գիտամանկավարժական կադրերի և գիտական աշխատողների կազմը, նրանց գիտական աշխատությունների ցանկը, ինչպես նաև բուհի և կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհրդի որոշումը:

Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ձևերով գիտական կադրեր պատրաստելու և այն դադարեցնելու մասին որոշում ընդունվում է փորձաքննության հիման վրա, որը սույն կարգի 6-րդ կետում նշված նախարարության կողմից սահմանված չափանիշներով անցկացվում է նախարարության, իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից: Ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի բացումը և դրանց գործունեության դադարեցումը ձևակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի, իսկ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի հրամանով:

Բուհերում, կազմակերպություններում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի գիտամեթոդական ղեկավարությունն ու գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է նախարարությունը:

8. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ նախարարություններ, շահագրգիռ նախարարություններից և գերատեսչություններից ստացած հայտերի հիման վրա, համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի տեղերի թիվն ըստ ուսուցման ձևերի (առկա, հեռակա) և ֆինանսավորման (անվճար, վճարովի):

9. Առկա ուսուցմամբ ասպիրանտուրա և դոկտորանտուրա ընդունված անձինք զինվորական ծառայությունից ստանում են տարկետում «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

## II. Ասպիրանտուրա

10. Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում ¿³éկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը 4 տարին:

11. Ասպիրանտուրա մրցութային կարգով ընդունվում են Հայաստանի Հանր³պետության այն քաղաքացիները, ովքեր ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք բուհերի և կազմակերպությունների ասպիրանտուրա են ընդունվում վճարովի հիմունքներով՝ միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի, կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ:

Նախկինում ասպիրանտուրան ավարտած կամ ասպիրանտուրայից ազատված անձինք (անհարգելի պատճառով) չեն կարող պետական պատվերով կրկին ընդունվել ասպիրանտուրա:

12. Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը տրվում է բուհի կամ կազմակերպության ղեկավարի անունով ªկցելով հետևյալ փաստաթղթերը.

ա) բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

բ) հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքի մասին հաշվետվությունների ցու-

ցակր կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ.

Գ) որակավորման քննությունների հանձնման մասին վկայական (եթե դրանք հանձնված են).

Դ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինք-նակենսագրություն և »րեք լուսանկար (3x4 չափի).

Ե) բուհի (կամ ֆակուլտետի) գիտական խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածք՝ ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորության մասին.

Զ) քաղվածք՝ աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

Ընդունվողն անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմը ներկայացնում է անձամբ:

13. Ասպիրանտուրա ընդունելությունը կատարվում է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին: Ասպիրանտուրա ընդունելությունն իրականացնելու համար բուհի կամ կազմակերպության ղեկավարի կողմից ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ բուհի կամ կազմակերպության ղեկավարի (տեղակալի) նախագահությամբ: Ընդունող հանձնաժողովում ընդգրկվում են տվյալ մասնագիտու-թյամբ բարձր որակավորում ունեցող գիÏաման-կավարժական և գիտական կադրեր:

14. Ասպիրանտուրա ընդունվողները հանձնում են քննություններ մասնագիտական առարկայից, օտար լեզվից (անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն) և ստուգարք (ինֆորմատիկա և (կամ) համակարգչից օգտ-վելու հիմունքներ): Մասնագիտական առարկայի քննությունը պետք է նախորդի այլ առարկաների քննություններին:

Քննությունների և ստուգարքի անցկացման կանոնա-կարգը մշակում և հաստատում է նախարարությունը:

15. Ընդունելության քննությունների վերահանձ-նում չի թույլատրվում: Ասպիրանտուրա ընդունելու-

թյան քննությունների արդյունքներն ուժի մեջ են հա-ջորդ տարվա ընդունելության քննությունների ընթաց-քում:

16. Ընդունող հանձնաժողովն ընդունելության քննությունների և մրցույթի արդյունքներով որոշում է ընդունում յուրաքանչյուր դիմողի վերաբերյալ: Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են ընդունող հանձնաժողովի որոշումից հետո 5-օրյա ժամկետում:

17. Ասպիրանտների ընդունումը ձևակերպվում է բուհի կամ կազմակերպության ղեկավարի հրամանով:

18. Առկա ձևով և անվճար հիմունքներով ասպիրան-տուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից (եթե աշ-խատում է աշխատանքից ազատվելու պահից):

19. Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է՝

ա) հանձնի որակավորման քննություններ՝ ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգին համապատասխան.

բ) ունենա բուհի կամ կազմակերպության գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան և առնվազն 36 ժամ մանկավարժական ծանրա-բեռնվածություն (բուհում սովորող ասպիրանտը):

Առկա ասպիրանտուրայում ուսանելու ժամանակը մտնում է ասպիրանտների գիտամանկավարժական ստաժի մեջ:

20. Ասպիրանտների ընդունման օրվանից ոչ ուշ, քան 3 ամսվա ընթացքում հաստատվում են ատենախոսության թեման և գիտական ղեկավարը՝ համաձայն ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգի:

Գիտական ղեկավար, որպես կանոն, կարող է լինել տվյալ բուհում (կազմակերպությունում) աշխատող գի-տությունների դոկտորը կամ նախարարության սահմանած

կարգով ԲՈՀ-ի թույլտվության դեպքում գիտությունների թեկնածուն: Յուրաքանչյուր գիտական դեկավար կարող է միաժամանակ ունենալ 5-ից ոչ ավելի ասպիրանտ և հայցորդ:

21. Հարակից մասնագիտությունների սահմանում գիտական հետազոտություններ կատարելիս կարող է հաստատվել համաÕեկավար:

22. Ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի ամեն տարի հաշվետվության հիման վրա ատեստավորվում է ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից: Բուհերի համապատասխան ամբիոնում, ֆակուլտետի խորհրդում, կազմակերպությունների գիտական ստորաբաժանումներում, գիտական (գիտատեխնիկական) խորհրդում պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների ու նրանց գիտական դեկավարների հաշվետվությունները: Ատեստավորում չանցած ասպիրանտը բուհի կամ կազմակերպության դեկավարի հրամանով ազատվում ¿ ասպիրանտուրայից:

Ընտրած մասնագիտությամբ գիտական հետազոտություններ կատարելիս ասպիրանտները բուհի և կազմակերպության աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից:

23. Ասպիրանտի տեղափոխումը մեկ բուհից կամ կազմակեպությունից մյուսը, ինչպես նաև առկա ուսուցման ձևից[a] հեռակա և հակառակը, իրականացվում ¿ բուհերի և կազմակերպությունների դեկավարների կողմից՝ ընդունող կազմակերպության միջոցների հաշվին: Հարգելի պատճառներով մինչև ուսման ժամկետի ավարտն ասպիրանտուրայից ազատված պետպատվերով սովորող ասպիրանտը բուհի կամ կազմակերպության

միջոցների հաշվին կարող է վերականգնվել ուսման մնացած ժամկետով:

24. Առկա ուսուցմամբ ասպիրանտներին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ[a] կրթաթոշակի պահպանմամբ:

25. Բուհերի և կազմակերպությունների ղեկավարները կարող են արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել առկա ուսուցմամբ ասպիրանտների կրթաթոշակին հավելավճար: Առկա ուսուցմամբ այն ասպիրանտները, ովքեր կատարում են իրենց պարտականությունները, կարող են աշխատել:

26. Ասպիրանտների գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է բուհերի և կազմակերպությունների կանոնադրություններով սահմանված կարգով (մեկ ասպիրանտի համար տարեկան առնվազն 50 ժամ հաշվարկով): Բուհերի և կազմակերպությունների ղեկավարներն իրավունք ունեն ասպիրանտների գիտական ղեկավարների համար արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել ու աշխատավարձին հավելավճար:

## III. Դոկտորանտուրա

27. Դոկտորանտների պատրաստումն իրականացվում է առկա ուսուցման ձևով, որի ժամկետը չպետք է գերազանցի 3 տարին:

Դոկտորանտուրա Áնդունվում են Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Դոկտորանտուրա ընդունվողները ներկայացնում են տվյալ բուհում կամ կազմակերպությունում գիտական, տնտեսական կամ սոցիալ-մշակութային նշանակություն ունեցող հիմնարար և (կամ) կիրաéակաÝ հետազոտությունների ծրագիր (նախագիծ):

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետության բուհերի և կազմակերպությունների դոկտորանտուրա են ընդունվում միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա և (կամ) սեփական նախաձեռնությամբ:

28. Դոկտորանտուրա ընդունվելու համար դիմումները տրվում »ն համապատասխան բուհերի և կազմակերպությունների ղեկավարների անունով ª կցելով հետևյալ փաստաթղթերը·

ա) գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար նաև Բà Հ-ի կողմից տրված համապատասխանեցման վկայագիրը).

Բ) դոկտորական ատենախոսության ծավալուն åլանը·

Գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3x4 չափսի).

Դ) հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կա-

տարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:

Անձնագիրը և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագիրն ընդունվողը ներկայացնում է անձամբ:

29. Բուհի կամ կազմակերպության համապատասխան ամբիոնը կամ բաժինը (սեկտոր, լաբորատորիա) փաստաթղթերի քննարկման հիման վրա ներկայացնում է եզրակացություն: Դրական արդյունքի դեպքում բուհի կամ կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհուրդը քննարկում է եզրակացությունը և ընդունում որոշում թեկնածուին դոկտորանտուրա ընդունելու մասին, որը հաստատում է բուհի կամ կազմակերպության ղեկավարը: Երկու և ավելի թեկնածուների դեպքում դոկտորանտի ընտրությունը կատարում է բուհի կամ կազմակերպության գիտական (գիտատեխնիկական) խորհուրդը, որը թեկնածուի ատենախոսության ծավալուն պլանի հիման վրա որոշում է ատենախոսության ավարտման հնարավոր ժամկետը:

30. Դոկտորանտի ընդունումը ձևակերպվում է բուհի կամ կազմակերպության ղեկավարի հրամանով:

31. Դոկտորանտուրայում գտնվելու ժամկետում դոկտորանտը պետք է կատարի անհատական ծրագրով նախատեսված աշխատանքները՝ ավարտի ատենախոսությունը և տվյալ բուհում կամ կազմակերպությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկումը:

Դոկտորանտը կարող է ունենալ գիտական խորհրդատու, որը հաստատվում է բուհի կամ կազմակերպության ղեկավարի կողմից:

32. Դոկտորանտներն անվճար օգտվում են բուհերի և կազմակերպությունների լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, փորձարարական սարքավորումներից, գրադարաններից և այլ ծառայություններից՝ համաձայն բուհերի և կազմակերպությունների կանոնադրությունների:

33. Բուհերի կամ կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհուրդները դոկտորանտների ծրագրին համապատասխան ներկայացված հաշվետվության հիման վրա տարեկան մեկ անգամ ատեստավորում են նրանց: Ատեստավորումը չանցած դոկտորանտն ազատվում է դոկտորանտուրայից:

Մինչև սահմանված ժամկետի ավարտը դոկտորանտուրայից ազատված դոկտորանտը (հարգելի պատճառով) բուհի կամ կազմակերպության ղեկավարի հրամանով կարող է վերականգնվել` ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

34. Դոկտորանտներին վճարվում է պետական կրթաթոշակ և ամեն տարի տրամադրվում է երկամսյա արձակուրդ` կրթաթոշակի պահպանմամբ: Բուհի կամ կազմակերպության ղեկավարն արտաբյուջետային միջոցների հաշվին կարող է սահմանել դոկտորանտների կրթաթոշակին հավելավճար:

35. Դոկտորանտների գիտական խորհրդատուների աշխատանքի վարձատրություն կատարվում է բուհի կամ կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

## IV. Հայցորդների համակարգը (հայցորդություն)

36. Թեկնածուական ատենախոսության վրա ինքնուրույն աշխատող հայցորդներ կարող են լինել բարձրագույն կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող անձինք:

37. Որակավորման քննություններ հանձնելու և ատենախոսությունն ավարտելու համար հայցորդներին հատկացվող առավելագույն ժամկետը 5 տարի է:

Հայցորդի կարգավիճակով լրիվ ժամկետ անցած անձինք երկրորդ անգամ չեն կարող օգտվել նույն մասնագիտությամբ հայցորդ ձևակերպվելու իրավունքից:

38. Հայցորդների կցումը բուհին կամ կազմակերպությանը ձևակերպվում է տվյալ բուհի կամ կազմակերպության ղեկավարի հրամանով:

39. Բուհի կամ կազմակերպության ղեկավարը հայցորդի և նախատեսվող գիտական ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքների և համապատասխան ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) եզրակացության հիման վրա՝ ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգին համապատասխան հրամանագրում է հայցորդին՝ հաստատելով ատենախոսության թեման և գիտական ղեկավարին:

40. Հայցորդները տարեկան մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում, որի հիման վրա ատեստավորվում են բուհի կամ կազմակերպության ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից: Ատեստավորումը չանցած հայցորդները ենթակա են ազատման:

41. Հայցորդները տվյալ բուհում կամ կազմակերպությունում անվճար օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից և գրադարաններից: Բուհի կամ կազմակերպության ղեկավարն աջակցում է նրանց և ատենախոսությունների վրա աշխատելու համար ստեղծում անհրաժեշտ պայմաններ:

42. Հայցորդները բուհում և կազմակերպությունում հանձնում են որակավորման քննություններ՝ ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգին համապատասխան:

43. Բուհերի կամ կազմակերպությունների ղեկավարներին թույլատրվում է սահմանված կարգով կատարել հայցորդների գիտական ղեկավարների վարձատրությունը (տարեկան առնվազն 30 ժամ):

44. Դոկտորական ատենախոսություն ինքնուրույն պատրաստող գիտությունների թեկնածուների ատենախոսության թեման հաստատվում է ԲՈՀ-ի կողմից հաստատված կարգին համապատասխան: Նրանք անվճար օգտվում են բուհի կամ կազմակերպության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային սենյակներից և գրադարաններից: Նրանց գիտական

գործունեությունը որևէ ժամկետով չի սահմանափակվում:

Հայցորդությունը բուհերում կամ կազմակերպություններում իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով, տվյալ բուհի կամ կազմակերպության սահմանած կարգով:

ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

2006 Ã. û·áë ï áëÇ 10
Երևան

*«Վավերացնում եմ»*
Հայաստանի Հանրապետության
Նախագահի Ռ. Քոչարյան
*24 դեկտեմբերի 2005 թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՈՐՈՇՈՒՄ

*15 դեկտեմբերի 2005 թվականի № 2183-Ն*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի № 662 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվկւսնի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը հաստատելու մասին» 662 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը

որոշմամբ հաստատված կարգի՝

ա) 8-րդ կետում «և գերատեսչություններից» բառերը փոխարինել «և կազմակերպություններից իր սահմանած կարգով» բառերով.

բ) 18-րդ կետից հանել «(եթե աշխատում է աշխատանքից ազատվելու պահից)» բառերը.

գ) 21-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Եթե գիտական կազմակերպությունում հնարավոր չէ իրականացնել ասպիրանտական կրթական ծրագրեր «օտար լեզու», «փիլիսոփայություն», «ինֆորմատիկա» առարկաների գծով, ապա այդ ուսուցումը պայմանագրային հիմունքներով կարող է իրականացվել բուհում կամ այլ կազմակերպությունում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ՝ Ա. Մարգարյան**

2005 թ. դեկտեմբերի 19
Երևան

*ՀՀ կրթության և գիտության նախարարի*

*2006 թ. ապրիլի 11-ի № 207 Ն հրամանը*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

## Կ Ա Ր Գ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում պետական և հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության նախարարությունների գիտական կազմակերպությունների, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) ասպիրանտուրայի ընդունելության կարգը:

### 2. Հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը և ժամանակացույցը

2.1. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում են ընդունող հանձնաժողովներ:

2.2. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողովներ): Մասնագիտական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են կազմակերպությունում աշխատող տվյալ մասնագիտությամբ գիտության դոկտորի գիտական աստիճան կամ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող գիտամանկավարժական և գիտական կադրեր:

Օտար լեզվից քննություն և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարք անցկացնելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվում են համապատասխան առարկայական հանձնաժողովներ (ըստ մասնագիտական բնագավառների՝ բնական-տեխնիկական և հումանիտար), որոնց կազմում ընդգրկվում են գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող գիտամանկավարժական և գիտական կադրեր:

2.3. Քննություններին և ստուգարքին մասնակցելու թույլտվությունը ասպիրանտուրա ընդունվողին տալիս է կազմակերպության ընդունող հանձնաժողովը՝ ներկայացված գիտական ռեֆերատի (առնվազն 20 տպագրական էջի սահմաններում՝ հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունների բացակայության դեպքում) վերաբերյալ մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման կողմից գրավոր դրական գրախոսականի դեպքում:

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների անցկացման ժամանակացույցը հաստատում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը և քննությունների սկսվելուց 1 շաբաթ առաջ տեղեկացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) քննության անցկացման տեղի և ժամի վերաբերյալ:

Մասնագիտական քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդները զրկվում են ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից (8 -12 միավոր՝ 20 բալանոց սանդղակով, 3 միավոր՝ 5 բալանոց սանդղակով):

Մասնագիտական քննությունը պետք է նախորդի օտար լեզվից քննությանը և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքին:

2.4. Հարգելի պատճառով մասնագիտական քննությանը չներկայանալու դեպքում սահմանվում է նոր ժամանակացույց ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների համար՝ պահպանելով դրանց անցկացման համար սահմանված վերջին ժամկետը: Կազմակերպության գոր-

ծադիր մարմնի ղեկավարը նոր ժամանակացույցի մասին տեղեկացնում է նախարարությանը:

2.5. Օտար լեզվից քննության և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարք հանձնելու համար մասնագիտական քննությունը հանձնած ասպիրանտուրա ընդունվողների տվյալները ներկայացվում են նախարարություն քննությունը հանձնելու հաջորդ օրը:

Օտար լեզվի քննության և ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքի արդյունքները ներկայացվում են կազմակերպությունների ընդունող հանձնաժողովներին:

### 3. Քննական ծրագրերը և քննությունների (ստուգարքի) անցկացումը

3.1. Մասնագիտական առարկայից քննության հարցաշարը (առնվազն 100 հարց) կազմվում է կազմակերպությունների մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների) գիտական ստորաբաժանման կամ մասնագիտական հանձնաժողովի կողմից և հաստատվում է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից (տրամադրվում է դիմորդներին), որի հիման վրա քննությունից առնվազն 5 օր առաջ հանձնաժողովի նախագահի կողմից կազմվում են առնվազն 25 հարցատոմսեր (առաջադրանքներ)՝ ներառելով ողջ հարցաշարը, որոնք հաստատվում են կազմակերպության կնիքով:

Մասնագիտական քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է կազմակերպության ընդունող հանձնաժողովը:

Մասնագիտական առարկայից ասպիրանտուրա ընդունվողի գիտելիքների գնահատումը կատարվում է կազմակերպության ընդունող հանձնաժողովի կողմից մշակված համակարգով հանձնաժողովի կազմում ընդգրկված անդամների առնվազն 2/3-ի ներկայությամբ: Մասնագիտական քննության անցկացումն արձանագրվում է ասպիրանտուրա ընդունվողի քննական թերթում (Ձևը կցվում է)՝ նշելով առաջադրված հարցերը և ստացված գնահատականը: Քննական թերթում ստորագրում են հանձնաժողովի նախագահը և ներկա գտնվող հանձ-

նաժողովի անդամները: Ընդունվողի գիտելիքների գնահատման մասին որոշումը ընդունվում է որպես հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականը: Մասնագիտական քննությունը հանձնված է համարվում, եթե դիմորդը ստացել է առնվազն «13» միավոր «20» բալանոց սանդղակով կամ «4» միավոր «5» բալանոց սանդղակով:

3.2. Օտար լեզվի քննությունը և ինֆորմատիկայի և համակարգչից օգտվելու հիմունքների ստուգարքը անցկացվում են կենտրոնացված ձևով, նախարարության կողմից հաստատված ըստ մասնագիտությունների տարբերակված ծրագրերի հիման վրա կազմված առաջադրանքներով և սահմանված ժամկետներում: Օտար լեզվի քննությունն անցկացվում է գրավոր ձևով:

3.3. Դիմորդը քննության կամ ստուգարքի է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

### 4. Մրցույթի անցկացում

4.1. Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները ըստ հերթականության

ա) օտար լեզվի քննությունից ստացած գնահատականը,

բ) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,

գ) մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության և դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,

դ) հրատարակված գիտական աշխատանքների քանակը,

ե) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

ՁԵՎ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎՈՂԻ

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Անուն, հայրանուն, ազգանուն -------------------------------------------------------

Գիտական հիմնարկը -------------------------------------------------------------------

1. Մասնագիտական առարկա [ ] Քննության հանձնման ամսաթիվը [ ]

Առարկայի անվանումը -----------------------------------------------------------------

| Առաջադրված հարցերը | Գնահատականները |
|---|---|
| 1. ------------------------------------------------------------ | -------------------------- |
| -------------------------------------------------------------- | -------------------------- |
| 2. ------------------------------------------------------------ | -------------------------- |
| -------------------------------------------------------------- | -------------------------- |
| 3. ------------------------------------------------------------ | -------------------------- |
| -------------------------------------------------------------- | -------------------------- |

Ընդհանուր գնահատականը

-------------------------------------------

Կ. Տ.

Հանձնաժողովի նախագահ՝

-----------------------------------------

Հանձնաժողովի անդամներ՝

-----------------------------------------

2. Օտար լեզուներ

--------------------------------- լեզվից     Քննության հանձնման ամսաթիվը

-------------------------------------------

Առաջադրված հարցերը     Գնահատականները

1. ----------------------------------------------------------- ------------------------------
----------------------------------------------------------- ------------------------------
2. ----------------------------------------------------------- -----------------------------
----------------------------------------------------------- -----------------------------
3. ---------------------------------------------------------- ------------------------------
----------------------------------------------------------- ------------------------------
4. --------------------------------------------------------- -----------------------------

Ընդհանուր գնահատականը

-------------------------------------------

Կ. Տ.     Հանձնաժողովի նախագահ՝

------------------------------------------

Հանձնաժողովի անդամներ՝

------------------------------------------

3. Ինֆորմատիկայի հիմունքներ (ստուգարք)     Քննության հանձնման ամսաթիվը

-------------------------------------------

---------------------------------------------
(ստուգված, չստուգված)

Հանձնաժողովի նախագահ՝

Կ. Տ.     ------------------------------------------

Հանձնաժողովի անդամներ՝

------------------------------------------

*Հավելված*

*ՀՀ կառավարության 2005 թ.*

*հուլիսի 14-ի N 1112 Ն որոշման*

## ԿԱՐԳ

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԵԿ ՈՒՐԻՇԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի գործողությունը տարածվում է պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհեր) վրա՝ անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա), իրականացվող կրթական ծրագրերից (բակալավրիատ, դիպլոմավորված մասնագետ, մագիստրատուրա) և մասնագիտություններից:

2. Ուսանողի փոխադրումը մեկ բուհից մյուսը կատարվում է 2 բուհերի ռեկտորների համաձայնությամբ, կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում: Հայաստանի Հանրապետության (այլ պետությունների) այլ պետական բուհերից ուսանողների փոխադրումը Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատություն կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 28-ի «Ոստիկանության ուսումնական հաստատությունում ուսման մասին կանոնագիրքը հաստատելու մասին» № 1184-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Անվճար համակարգում ուսանողների փոխադրումը թույլատրվում է ակադեմիական խմբում անվճար տեղերի առկայության դեպքում: Վճարովի ուսուցման համակարգում ուսանողների փոխադրումը չի սահմանափակվում: Օտարերկրյա բուհերից փոխադրված ուսանողները հրամանագրվում են միայն վճարովի համակարգ: Փոխադրումներ կատարելիս պետք է պահպանել ուսումնական ծրագրերի միջև եղած տարբերությունը՝ մեկ ուսումնական տարին չգերազանցելու պարտադիր պահանջը:

3. Չի թույլատրվում ուսանողների փոխադրումն առաջին և ավարտական կուրսերում: Բուհերի հեռակա բաժիններից առկա բաժիններ փոխադրու-

մը թույլատրվում է առաջին, երկրորդ կուրսերն ավարտելուց հետո՝ առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի:

4. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկի կամ իրավաբանական անձանց հետ ուսուցման համար և դրա ավարտից հետո ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքած ուսանողի փոխադրումն այլ ուսումնական հաստատություն կամ մի մասնագիտությունից մյուսը կատարվում է միայն նշված պայմանագիրն օրենքով սահմանված կարգով փոփոխելուց կամ լուծելուց հետո: Չի թույլատրվում մանկավարժական բուհերի նպատակային տեղերում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ մասնագիտության ուսումնառության:

5. Թերի կամ լրիվ զինվորական (քաղաքացիական) բարձրագույն կրթություն ունեցող զինծառայողները և Հայաստանի Հանրապետության ռազմական բարձրագույն ուսումնական հաստատությունների կուրսանտները (ունկնդիրները), ովքեր իսկական զինվորական ծառայությունից զորացրվել են առողջական վիճակի, տարիքի կամ հաստիքների կրճատման պատճառով, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կարող են փոխադրվել բուհերի համապատասխան մասնագիտությունների 1-ին և հաջորդ կուրսեր:

6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատությունից ուսանողը փոխադրվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատության ղեկավարի համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի թույլտվությամբ:

7. Ուսանողների փոխադրումը թույլատրվում է, եթե առարկաների ժամաքանակների 25 տոկոսից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, չի գերազանցում 8-ը:

Մասնագիտության փոփոխմամբ թույլատրվող փոխարումների նպատակահարմարությունը հիմնավորվում և համաձայնեցվում է ընդունող բուհի կողմից: Օտարերկրյա բուհերից ուսանողների փոխադրման դեպքում հանձնման ենթակա ստուգարքների և քննությունների թվի մեջ չեն մտնում հայագիտական առարկաները:

8. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները և առարկաների առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբե-

րություններ, չհանձնած քննություններ և ստուգարքներ) համարվում են ակադեմիական պարտքեր՝ առարկայական ժամաքանակների տարբերությունը կազմում են 30 և ավելի բարձր տոկոս: Դրանց ցանկը և ծավալները որոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները՝ ընդունող բուհի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

9. Չի թույլատրվում պետական հավատարմագրում չունեցող ոչ պետական բուհերից ուսանողների փոխադրումը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհեր:

10. Հավատարմագրված ոչ պետական բուհից ուսանողի փոխադրումը պետական բուհ կատարում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ ընդունող բուհի ռեկտորի ներկայացմամբ:

11. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում բուհերը նախարարություն են ներկայացնում հաշվետվություն՝ ուսանողների փոխադրման բոլոր ձևերի վերաբերյալ, տալով մանրամասն տեղեկություն՝ ըստ կրթական ծրագրի, ուսուցման ձևի, մասնագիտության և ուսուցման կուրսի փոխա-դրման:

## II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԻՑ ԲՈՒՀ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

12. Ուսանողի բուհից բուհ փոխադրումը, որի ընթացքում կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը, կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա) և սկզբունքը (վճարովի, անվճար), իրականացվում է ուսանողի անձնական դիմումի համաձայն, որին կցվում է նաև ստուգարքային գրքույքի պատճենը:

13. Հայաստանի Հանրպապետության բուհերի ընդունելության կանոններով սահմանված արտոնություններով ընդունված ուսանողները կարող են փոխադրվել միայն նույն պայմաններով ընդունելություն կազմակերպած բուհեր՝ համապատասխան մասնագիտություններով:

14. Ուսանողը փոխադրման մասին դիմումը ներկայացնում է իր ուսումնառության բուհի ռեկտորին՝ նրա գրավոր համաձայնությունն ստանալու համար:

15. Անվճար սկզբունքով ուսումնառող ուսանողն ընդունող բուհում տվյալ մասնագիտությամբ և **կուրսում** անվճար ազատ տեղերի առկայության դեպքում ուսումը շարունակում է անվճար ուսուցման, իսկ մնացած դեպքերում՝ վճարովի ուսուցման սկզբունքով:

16. Ուսանողը փոխադրվում է ընդունող բուհի հայեցողությամբ՝ ատեստավորման հիմունքով, որը կարող է իրականացվել ուսանողի հանձնած քննությունների գնահատականների հաշվառման, հարցազրույցի, թեստավորման կամ բուհի կողմից սահմանված այլ կարգով: Եթե ընդունող բուհում տվյալ մասնագիտությամբ և կուրսում ազատ տեղերի քանակն ավելի քիչ է, քան փոխադրվել ցանկացողների թիվը, ատեստավորման գործընթացից հետո իրականացվում է մրցույթ, որի արդյունքով ընտրվում են ուսումնառությունը շարունակելու համար առավել պատրաստ ուսանողները: Ատեստավորման և մրցույթի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է ընդունող բուհը:

17. Ատեստավորման դրական արդյունքի դեպքում ընդունող բուհն ուսանողին տալիս է սահմանված նմուշի տեղեկանք՝ համաձայն ձևի: Ուսանողը նշված տեղեկանքը ներկայացնում է իր սովորած բուհ, որի ռեկտորը եռօրյա ժամկետում տալիս է հետևյալ ձևակերպմամբ ազատման հրաման՝

«Ուսանող ____________-ը ազատված է ___________ բուհ փոխադրման կապակցությամբ»:

Ուսանողին առձեռն տրվում կամ փոստով առաքվում է ազատման հրամանի պատճենը, սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանքը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը, անձնական գործի փաստաթղթերը և ընդունելության քննություններին առնչվող փաստաթղթերը:

Ուսանողի անձնական գործում մնում են ազատման մասին հրամանի և բուհի կողմից հաստատված միջնակարգ կրթության ավարտական վկայականի պատճենները, ուսանողական տոմսը, ստուգարքային գրքույկը և ուղարկված փաստաթղթերի ցուցակը:

18. Փոխադրվող ուսանողի հրամանագրումը կատարում է ընդունող բուհի ռեկտորը՝ ուսանողի դիմումը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը և ակադեմիական տեղեկանքն ստանալուց հետո (մինչ այդ ստուգվում է ակադեմիական տեղեկանքի և ստուգարքային գրքույկի պատճենի համապատասխանությունը): Մինչև նշված փաստաթղթի ստանալն ընդունող

բուհի ռեկտորն իրավասու է տալ ուսանողի ակադեմիական խմբին կցագրման հրամանը և նրան թույլատրել մասնակցելու ուսումնական պարապմունքներին:

Փոխադրման հրամանում կատարվում է հետևյալ գրառումը՝

*«_ _ _ _ _ _ _ _ _ -ին _ _ _ _ _ _ _ _ բուհից փոխադրման կարգով ընդունել _ _ _ _ _ _ _ ֆակուլտետի _ _ _ _ _ _ _ _ մասնագիտության _ _ _ _ կուրս _ _ _ _ _ _ուսուցման ձևով, վճարովի (անվճար) սկզբունքով»:*

Հրամանում նշվում են նաև ակադեմիական պարտքերի ցանկը, առարկաների (բաժինների) ծավալները, դրանց ուսումնառության և ակադեմիական պարտքերի մարման անհատական ժամանակացույցը:

Ընդունող բուհում կազմվում է ուսանողի նոր անձնական գործ: Ուսանողին տրվում է նոր ուսանողական տոմս և ստուգարքային գրքույք:

## III. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԵՐ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

Ուսանողների փոխադրումն օտարերկրյա պետական կամ հավատարմագրված ոչ պետական բուհերից Հայաստանի Հանրապետության բուհեր իրականացվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Բացառության կարգով (առողջական վիճակի կամ այլ հարգելի պատճառով) օտարերկրյա բուհ նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողները ընդունող բուհում տվյալ մասնագիտության համապատասխան կուրսում անվճար ուսուցման ազատ տեղերի առկայության դեպքում, ընդունող բուհի ռեկտորի առաջարկությամբ և նախարարության հետ համաձայնեցված, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:

20. Ուսանողի փոխադրման գործընթացին չի ազդում օտարերկրյա բուհ ընդունվելու կարգը (հարցազրույց, թեստավորում, քննություն, քննությունների թիվը և մրցույթի կարգը), ուսուցման ձևը և համակարգը:

21. Ընդունող բուհի դրական կարծիքի դեպքում ուսանողը նախարարություն է ներկայացնում փաստաթղթերի փաթեթը (ստուգման գրքույկ կամ ակադեմիական տեղեկանք, բուհերի համաձայնությունը): Փոխադրման մասին որոշումն ընդունում է նախարարը:

22. Ուսանողի փոխադրումն իրականացվում է սույն կարգի 7, 16-18 և 21-րդ կետերով սահմանված ընթացակարգերով: Եթե ուսանողի անձնական գործն

առաքման ենթակա չէ, ապա դրա մասին ընդունող բուհին հղվում է համապատասխան փաստաթուղթ, իսկ ուսանողի հրամանագրումը կատարվում է նրա դիմումի և ակադեմիական տեղեկանքի հիման վրա:

Ակադեմիական տեղեկանքների ձևաթերթերը բուհերն ստանում են նախարարությունից՝ համաձայն իրենց հայտերի և պահում են որպես խիստ հաշվառման փաստաթուղթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

Ընդունող բուհի անկյունային կնիքը,

ամսաթիվը, գրանցման համարը

(կամ բուհի բլանկը)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է ___________________________ առ այն, որ նրան ___________

(անունը, ազգանունը, հայրանունը` լրիվ) ____ (բուհի

_________________կողմից տրված _____________________________________

լրիվ անվանումը) (ստուգարքային գրքույկի գրանցման թիվը և ամսաթիվը)

ստուգարքային գրքույկի պատճենի և դիմումի համաձայն թույլատրվել էր մասնակցելու ատեստավորման գործընթացին, որը հաջողությամբ նա անցել է:

____________________________________ -ի փոխադրումը կիրամանագրվի

(անունը, ազգանունը, հայրանունը)

_________________________________________________________ ուսուցման

(ընդունող բուհի և ֆակուլտետի լրիվ անվանումը, առկա, հեռակա)

_________ կուրս ______________________________ մասնագիտության գծով

(մասնագիտության լրիվ անվանումը)

__________________սկզբունքով, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ

(անվճար, վճարովի)

կրթության ավարտական վկայականը ներկայացնելուց հետո:

Ռեկտոր _________________________________

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Զինանշանային կնիք ___________ 200 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

*16 օգոստոսի 2007 թվականի № 921-Ն*

## 922 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի № 1112-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու մասին» № 1112-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ` նախարար) թույլտվությամբ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության**
**փոխվարչապետ Հ.Աբրահամյան**

2007 թ. օգոստոսի 20
Երևան

*«Վավերացնում եմ»*
*Հայաստանի Հանրապետության*
*Նախագահ Ռ. Քոչարյան*
*9 հուլիսի 2001թ.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ու Մ

9 հուլիսի 2001 թվականի N 615

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻՆ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԵՎ ԴՈՑԵՆՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը (կցվում է):

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ա. Մարգարյան

* ՀՀՊՏ 2000/33 (31), 30.12.00

*Հաստատված է*

*ՀՀ կառավարության 2001 թվականի*

*հուլիսի 9-ի 615 որոշմամբ*

# ԿԱՐԳ

## Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու

## I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը:

2. Գիտական կոչում կարող է շնորհվել այն անձանց, ովքեր ունեն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում, որպես կանոն, համապատասխան գիտական աստիճան, որոշակի ավանդ գիտության տվյալ բնագավառում և զբաղվում են գիտամանկավարժական (գիտամեթոդական) գործունեությամբ:

3. Պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումները շնորհվում են պետական և ոչ պետական հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետև բուհ) և գիտական կազմակերպությունների (այսուհետև՝ կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհուրդների որոշմամբ՝ առաջնորդվելով սույն կարգով և Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (այսուհետև ԲՈՀ) հաստատած գիտական աստիճանաշնորհման անվանացանկով:

4. Գիտական կոչումներ շնորհելու մասին որոշումը հաստատում և համապատասխան դիպլոմներով (վկայագրերով) ամրագրում է ԲՈՀ-ը:

## II. Դոցենտի գիտական կոչում շնորհելը

5. Դոցենտի գիտական կոչում կարող է շնորհվել

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն.

բ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր գիտական կոչում շնորհող բուհում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունեն առնվազն 3 հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք.

գ) դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 20 տարվա ստաժ, այդ թվում գիտական կոչում շնորհող բուհում առնվազն 3 Ïարվա, վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և ունեն մենագրություն կամ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետև նախարարություն) կողմից երաշխավորված հրատարակված դասագիրք առանց համահեղինակների, և (կամ) դասագրքեր համահեղինակներով, ու տվյալ բնագավառում առնվազն 15 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, որոնցից առնվազն 2-ը հրատարակվել »ն վերջին 3 տարվա ընթացքում.

դ) մշակույթի և սպորտի ասպարեզում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց հետևյալ կարգովª

արվեստագիտության բնագավառում համաձայն սույն կարգի 5-րդ կետի §ա¦, §բ¦և §գ¦ենթակետերի,

ստեղծագործական և կատարողական արվեստի ու ճարտարապետության բնագավառներում՝ անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ)ª

ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,

հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ »ն,

հանրապետական փառատոների, մրցույթների հաղթողներ, պետական մրցանակակիրներ են,

հեղինակ են առնվազն 5 բեմադրության, ստեղծագործական աշխատանքի, տեսագրության, կառույցի, նախագծի, հանրապետական կամ միջազգային մրցույթներում մրցանակ ստացած առնվազն մեկ ստեղծագործության,

ղեկավարել են հանրապետական կամ միջազգային փառատոների, մրցույթների դափնեկիրների (գեղարվեստական խմբեր, համույթներ),

ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում, առնվազն 3 աշխատանքª վերջին 3 տարվա ընթացքում,

սպորտի բնագավառումª ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 15 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում

իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտաման-կավարժական գործունեություն և (կամ)՝

ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ »ն, պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների,

ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից »րաշխավորված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում առանց համահե-ղինակների), ընդ որում, առնվազն 3 աշխատանք վերջին 3 տարվա ընթացքում:

## III. Պրոֆեսորի գիտական կոչում շնորհելը

6. Պրոֆեսորի գիտական կոչում շնորհվում է

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր ունեն գիտական կոչում շնորհող բուհում առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում այ[1] բուհում իրականացրել »ն մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո ունեն տվյալ բնագավառում 5-ից ավելի հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում միջազգային գիտական ամսագրում տպագրված հոդված բացառությամբ հայագիտական բնույթի աշխատանքների), ղեկավարել են պաշտպանված ատենախոսություն կամ նախարարության կողմից երաշխավորված դասագրքի առանց համահեղինակների, կամ առնվազն 3 դասագրքի համահեղինակներով, հեղինակ են,

առնվազն վերջին մեկ տարին աշխատում են գիտական կոչում շնորհող բուհում կամ կազմակերպությունում և 5 պաշտպանված ատենախոսության գիտական ղեկավար են, այդ թվում առնվազն 3-ի միանձնյա.

բ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր

ունեն դոցենտի կոչում և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 30 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն, ունեն բուհի կամ կազմակերպության գիտական խորհուրդների կողմից երաշխավորված հրատարակված մենագրություն կամ նախարարության կողմից երաշխավորված հրատարակված դասագիրք առանց համահեղինակների, կամ 3 դասագիրք համահեղինակներով, և առնվազն 30 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք տվյալ

բնագավառում, այդ թվում վերջին 5 տարվա ընթացքում 3 աշխատանք և 3 պաշտպանած ատենախոսության ղեկավար»ն,

առնվազն վերջին մեկ տարին աշխատում են գիտական կոչում շնորհող բուհում կամ կազմակերպությունում, առնվազն 5 պաշտպանած ատենախոսության գիտական ղեկավար են, ունեն մենագրություն կամ նախարարության կողմից երաշխավորված հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների, կամ 3 դասագիրք համահեղինակներով, և տվյալ բնագավառում առնվազն 20 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, այդ թվում վերջին 5 տարվա ընթացքում 3 աշխատանք, որոնցից առնվազն մեկը միջազգային գիտական ամսագրում (բացառությամբ հայագիտական բնույթի աշխատանքների).

գ) մշակույթի և սպորտի բնագավառի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, ովքեր ունեն դոցենտի կոչումª

արվեստագիտության բնագավառում համաձայն սույն կարգի 6-րդ կետի §ա¦ և §բ¦ ենթակետերի,

ստեղծագործական և կատարողական արվեստի ու ճարտարապետության բնագավառներումª անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 15 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում զբաղվել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեությամբ և (կամ) ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,

միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ են և ունեցել են անհատական ցուցահանդեսներ,

միջազգային մրցույթների մասնակիցներ են և ունեցել են տարբեր ծրագրերով մենահամերգներ կամ մասնակցել բեմադրությունների,

հանրապետական և միջազգային փառատոների, մրցույթների հաղթողներ, պետական մրցանակակիրներ»ն,

հեղինակ են միջազգային մրցույթներում հաղթած ստեղծագործությունների, նախագծերի, կառույցների,

ղեկավարել են միջազգային փառատոների, մրցույթների հաղթողների (գեղարվեստական խմբեր, համույթներ),

ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից երաշխավորված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում առանց համահեղինակների), ընդ որում, առնվազն 5 աշխատանք վերջին 5 տարվա ընթացքում,

սպորտի բնագավառում անձանց, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 20 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում զբաղվել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեությամբ և (կամ)[a]

ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (տվյալ երկրի հետ համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ,

միջազգային մրցումների հաղթողներ »ն կամ պատրաստել են սաներ, ովքեր օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մեդալակիրներ են,

ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում առանց համահեղինակների), ընդ որում, առնվազն 5 աշխատանք վերջին 5 տարվա ընթացքում:

## IV. Գիտական կոչումների շնորհումը

7. Գիտական կոչում ստանալու համար անձը դիմում է ներկայացնում բուհի ռեկտորի կամ կազմակերպության տնօրենի անունով, որտեղ հիմնական կամ համատեղությամբ աշխատող է: Դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը (եթե գիտական ասÏիճան չկա),

բ) գիտական աստիճանի վկայագրի պատճենը,

գ) գիտական կոչման վկայականի պատճենը,

դ) հրատարակված աշխատանքների ցուցակը,

ե) քաղվածք աշխատանքային գրքույկից,

զ) գիտության, մանկավարժության, մշակույթի, սպորտի բնագավառներում նվաճումները հաստատող փաստաթղթերի պատճենները:

8. Բուհերի գիտական կամ կազմակերպությունների գիտական (գիտատեխնիկական) խորհրդում գիտական կոչում շնորհելու մասին դիմումը քննարկվում է երկու ամսվա ընթացքում:

9. Գիտական կոչում շնորհելու մասին որոշումն ընդունվում է փակ գաղտնի քվեարկությամբ:

Խորհուրդն իրավասու է գիտական կոչում շնորհելու հարցը քննարկելու խորհրդի անդամների 2/3-ի մասնակցությամբ: Գիտական կոչում շնորհելու մասին որոշումն ընդունվում է նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին ստանալու դեպքում:

10. Գիտական խորհրդի կոÕմից բացասական որոշում ընդունվելու դեպքում հավակնորդն իրավունք ունի մեկ տարի անց կրկին դիմելու գիտական խորհուրդ ներկայացնելով այդ ընթացքում հրատարակած իր նոր գիտական աշխատանքները կամ սույն կարգի 2-րդ և 3-րդ բաժինների պահանջներին համապատասխան այլ տվյալներ:

11. Գիտական խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածքը և սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերը 15 օրվա ընթացքում համապատասխան տեղեկանքի հետ միասին ներկայացվում են ԲՈՀ:

## V. Գիտական կոչումների հաստատումը ԲՈՀ-ում

12. Գիտական կոչումների շնորհման մասին գիտական և գիտատեխնիկական խորհուրդների որոշումը հաստատում ու համապատասխան գիտական կոչման դիպլոմ (վկայագիր) տալիս է ԲՈՀ-ը:

13. ԲՈՀ-ը գիտական կոչում շնորհելու հարցը քննարկում է համապատասխան փաստաթղթերն ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում:

14. Այլ երկրներում ստացած գիտական կոչման փաստաթղթերը ճանաչվում են Հայաստանի Հանրապետության կողմից. Եթե գոյություն ունեն համապատասխան միջպետական պայմանագրեր և համաձայնագրեր: Փաստաթղթերը համապատասխանեցվում են ԲՈՀ-ի կողմից սահմանված կարգով:

15. Գիտական կոչումների շնորհման մասին տեղեկատվությունը հրապարակվում է ԲՈՀ-ի տեղեկագրում:

16. Գիտական կոչման դիպլոմը (վկայագիրը) կորցնելու դեպքում ԲՈՀ-ի կողմից սահմանված կարգով տրվում է կրկնօրինակը:

17. ԲՈՀ-ի կողմից գիտական խորհրդի տվյալ որոշումը չհաստատվելու դեպքում այն մեկամսյա ժամկետում վերադարձվում է տվյալ գիտական խորհրդին:

Հիմք ընդունելով ԲՈՀ-ի դիտողությունները խորհուրդը

ա) լրամշակված գործը երկամսյա ժամկետում կրկին ներկայացնում է ԲՈՀ.

բ) չեղյալ է համարում գիտական կոչում շնորհելու մասին իր որոշումը:

18. Գիտական կոչում շնորհելու մասին խորհրդի որոշումը ԲՈՀ-ի կողմից չհաստատվելը կարող է բողոքարկվել դատական կարգով:

# ԿԱՐԳ
# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ` հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

## II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2. Խորհուրդը ձևավորվում է հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ` լիազոր մարմին) ներկայացուցիչներից:

3. Խորհրդի անդամների թիվը (ոչ պակաս 20 և ոչ ավելի, քան 32) սահմանում է հաստատության հիմնադիրը (այսուհետ` հիմնադիր)` հաստատության կանոնադրությամբ:

4. Հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում հաստատության կառուցվածքային միավորները`

ա) հաստատության կառուցվածքային միավորների կոÕմից խորհրդի անդամության թեկնածու կարոÕ է առաջադրվել հաստատության ցանկացած աշխատոÕ.

µ) հաստատության կառուցվածքային միավորներից առաջադրված անձանց թեկնածությունները ընտրվում

են հաստատության գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին.

գ) պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

5. Հաստատության ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝

ա) ուսանողական խորհուրդների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող (ուսանող կամ ասպիրանտ),

բ) հաստատության ուսանողական խորհուրդն ընտրում է ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածությունները և ներկայացնում լիազոր մարմին,

գ) ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

6. Հիմնադրի անունից խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը):

7. Լիազոր մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

8. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

9. Խորհուրդն իր կազմից, բացի ուսանողության ներկայացուցիչներից, ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող (դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս): Խորհրդի նախագահը նույն բուհում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:

10. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

ա) իր դիմումի համաձայն,

բ) խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ կամ մահվան պատճառով,

գ) խորհրդի անդամի թեկնածությունն առաջադրող մարմնի առաջարկությամբ,

դ) ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով,

ե) որպես ուսանող առաջադրվելու դեպքում ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով:

11. Խորհրդի անդամի լիազորությունները՝ լիազոր մարմնի ներկայացմամբ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:

12. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է նույն կարգի 5-9-րդ կետերի պահանջներին համապատասխան:

13. Խորհրդի անգործության դեպքում հիմնադիրը կարող է վաղաժամկետ դադարեցնել խորհրդի նախագահի լիազորությունները կամ լուծարել խորհուրդը:

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար՝ Մ. Թոփուզյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 օգոստոսի 2007 թվականի N 1038-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 1933-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի նիստի N 43 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1933-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) ապահովել մասնագիտական չափորոշիչների համապատասխանեցումը սույն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտություններին.

2) սույն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի համաձայն ընդունելությունը կազմակերպել 2008/2009 ուսումնական տարվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Վարչապետ Ս. Սարգսյան

2007 թ. սեպտեմբերի 18
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Ծած-կագիրը | Մասնագիտության անվանումը | Ծած-կագիրը | Որակավորումը, անվանումը |
|---|---|---|---|
| **010000** | **Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ** | | |
| 010100 | Մաթեմատիկա | 62 | Մաթեմատիկայի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մաթեմատիկայի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 010200 | Կիրառական մաթեմատիկա | 62 | Մաթեմատիկայի բակալավր |
| | | 68 | Մաթեմատիկայի մագիստրոս |
| 010300 | Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ | 62 | Մաթեմատիկայի բակալավր |
| | | 68 | Մաթեմատիկայի մագիստրոս |
| 010400 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | 62 | Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 010500 | Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա | 62 | Կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի բակալավր |
| | | 68 | Կիրառական մաթեմատիկայի և ֆիզիկայի մագիստրոս |
| 010600 | Ֆիզիկա | 62 | Ֆիզիկայի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Ֆիզիկայի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 010700 | Ռադիոֆիզիկա | 62 | Ռադիոֆիզիկայի բակալավր |
| | | 68 | Ռադիոֆիզիկայի մագիստրոս |
| 010800 | Մեխանիկա | 62 | Մեխանիկայի բակալավր |
| | | 68 | Մեխանիկայի մագիստրոս |
| 011000 | Ակտուար մաթեմատիկա | 62 | Մաթեմատիկայի բակալավր |
| | | 68 | Մաթեմատիկայի մագիստրոս |
| 011100 | Միջուկային ֆիզիկա | 62 | Ֆիզիկայի բակալավր |
| | | 68 | Ֆիզիկայի մագիստրոս |
| 011200 | Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա | 62 | Ռադիոֆիզիկայի բակալավր |
| | | 68 | Ռադիոֆիզիկայի մագիստրոս |
| 011300 | Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա | 62 | Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրո-նիկայի բակալավր |
| | | 68 | Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի մագիստրոս |
| 011400 | Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում | 62 | Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակման բակալավր |
| | | 68 | Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակման մագիստրոս |
| **020000 Բնագիտական գիտություններ** | | | |
| 020100 | Քիմիա | 62 | Քիմիայի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Քիմիայի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 020200 | Կենսաբանություն | 62 | Կենսաբանության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Կենսաբանության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 020300 | Երկրաբանություն | 62 | Երկրաբանության բակալավր |
| | | 68 | Երկրաբանության մագիստրոս |
| 020400 | Աշխարհագրություն | 62 | Աշխարհագրության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Աշխարհագրության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 020500 | Քարտեզագրություն և կադաստրային գործ | 62 | Քարտեզագրության բակալավր |
| | | 68 | Քարտեզագրության մագիստրոս |
| 020600 | Ջրաօդերևութաբանություն | 62 | Ջրաօդերևութաբանության բակալավր |
| | | 68 | Ջրաօդերևութաբանության մագիստրոս |
| 020700 | Հողագիտություն | 62 | Հողագիտության բակալավր |
| | | 68 | Հողագիտության մագիստրոս |
| 020800 | Բնապահպանություն և բնօգտագործում | 62 | Բնապահպանության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Բնապահպանության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 020900 | Էկոլոգիական քիմիա | 62 | Բնապահպանության բակալավր |
| | | 68 | Բնապահպանության մագիստրոս |
| 021000 | Դեղագործական քիմիա | 62 | Դեղագործական քիմիայի բակալավր |
| | | 68 | Դեղագործական քիմիայի մագիստրոս |
| 021100 | Կիրառական քիմիա | 62 | Քիմիայի բակալավր |
| | | 68 | Քիմիայի մագիստրոս |
| 021200 | Կենսաֆիզիկա | 62 | Կենսաֆիզիկայի բակալավր |
| | | 68 | Կենսաֆիզիկայի մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 021300 | Կենսաքիմիա | 62 | Կենսաքիմիայի բակալավր |
| | | 68 | Կենսաքիմիայի մագիստրոս |
| 021500 | Կենսաինֆորմատիկա | 62 | Բնագիտության բակալավր |
| | | 68 | Բնագիտության մագիստրոս |
| **030000 Հումանիտար գիտություններ** | | | |
| 030100 | Փիլիսոփայություն | 62 | Փիլիսոփայության բակալավր |
| | | 68 | Փիլիսոփայության մագիստրոս |
| 030200 | Քաղաքագիտություն | 62 | Քաղաքագիտության բակալավր |
| | | 68 | Քաղաքագիտության մագիստրոս |
| 030300 | Հոգեբանություն | 62 | Հոգեբանության բակալավր |
| | | 68 | Հոգեբանության մագիստրոս |
| 030400 | Պատմություն | 62 | Պատմության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Պատմության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 030500 | Իրավագիտություն | 62 | Իրավագիտության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Իրավագիտության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 030600 | Լրագրություն | 62 | Լրագրության բակալավր |
| | | 68 | Լրագրության մագիստրոս |
| 030700 | Միջազգային հարաբերություններ | 62 | Միջազգային հարաբերությունների բակալավր |
| | | 68 | Միջազգային հարաբերությունների մագիստրոս |
| 030800 | Արևելագիտություն | 62 | Արևելագիտության բակալավր |
| | | 68 | Արևելագիտության մագիստրոս |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | 62 | Բանասիրության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Բանասիրության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 031100 | Լեզվաբանություն | 62 | Լեզվաբանության բակալավր |
| | | 68 | Լեզվաբանության մագիստրոս |
| 031200 | Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն | 62 | Լեզվաբանության բակալավր |
| | | 68 | Լեզվաբանության մագիստրոս |
| 031300 | Օտար լեզու և գրականություն | 62 | Բանասիրության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Բանասիրության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 031400 | Մշակութաբանություն | 62 | Մշակութաբանության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մշակութաբանության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 031500 | Արվեստաբանություն (ըստ տեսակների) | 62 | Արվեստաբանության բակալավր |
| | | 68 | Արվեստաբանության մագիստրոս |
| 031600 | Արվեստ և հումանիտար գիտություններ | 62 | Արվեստի և հումանիտար գիտությունների բակալավր |
| | | 68 | Արվեստի և հումանիտար գիտությունների մագիստրոս |
| 031700 | Գեղեցիկ արվեստ | 62 | Գեղեցիկ արվեստի բակալավր |
| | | 68 | Գեղեցիկ արվեստի մագիստրոս |
| 031800 | Կրոնագիտություն | 62 | Կրոնագիտության բակալավր |
| | | 68 | Կրոնագիտության մագիստրոս |
| 031900 | Աստվածաբանություն | 62 | Աստվածաբանության բակալավր |

| | | | |
|---|---|---|---|
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Աստվածաբանության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 032000 | Հանրային կառավարում | 62 | Հանրային կառավարման բակալավր |
| | | 68 | Հանրային կառավարման մագիստրոս |
| 032100 | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ | 62 | Ֆիզիկական կուլտուրայի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Ֆիզիկական կուլտուրայի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 032200 | Ֆիզիկական կուլտուրա առողջական շեղում ունեցող անձանց համար (ադապտացված ֆիզիկական կուլտուրա և կինեզոլոգիա) | 62 | Ֆիզիկական կուլտուրայի բակալավր |
| | | 68 | Ֆիզիկական կուլտուրայի մագիստրոս |
| 032300 | Թարգմանչական գործ | 62 | Բանասիրության բակալավր |
| | | 62 | Լեզվաբանության բակալավր |
| | | 68 | Բանասիրության մագիստրոս |
| | | 68 | Լեզվաբանության մագիստրոս |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | 62 | Բանասիրության բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Բանասիրության մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| **040000** | **Սոցիալական գիտություններ** | | |
| 040100 | Սոցիալական աշխատանք | 62 | Սոցիալական աշխատանքի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Սոցիալական աշխատանքի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 040200 | Սոցիոլոգիա | 62 | Սոցիոլոգիայի բակալավր |
| | | 68 | Սոցիոլոգիայի մագիստրոս |
| 040300 | Կոնֆլիկտաբանություն | 62 | Կոնֆլիկտաբանության բակալավր |
| | | 68 | Կոնֆլիկտաբանության մագիստրոս |
| **050000** | **Կրթություն և մանկավարժություն** | | |
| 050100 | Կրթության կազմակերպում | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050200 | Ինֆորմատիկա (տեղեկաբանություն) | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050300 | Բնագիտություն | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050400 | Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050500 | Մասնագիտական ուսուցում | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050600 | Տեխնոլոգիա և ձեռնարկչություն | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050700 | Երաժշտական կրթություն | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 050800 | Կերպարվեստ և գծագրություն | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 051000 | Մանկավարժություն և հոգեբանություն | 62 | Մանկավարժության և հոգեբանության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության և հոգեբանության մագիստրոս |
| 051100 | Մանկավարժություն և մեթոդիկա | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մագիստրոս |
| 051300 | Սոցիալական մանկավարժություն | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| 051500 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն | 62 | Մանկավարժության և հոգեբանության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության և հոգեբանության մագիստրոս |
| 053400 | Մանկավարժություն և սոցիոլոգիա | 62 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Մանկավարժության մագիստրոս |
| **060000** | **Առողջապահություն** | | |
| 060100 | Բուժական գործ | 62 | Բժշկության բակալավր (բազային կրթությունը բժիշկ) |
| | | 68 | Բժշկության մագիստրոս (բժիշկ մասնագետ) |
| 060200 | Ստոմատոլոգիա | 62 | Ստոմատոլոգիայի բակալավր (բազային կրթությունը բժիշկ ստոմատոլոգ) |
| | | 68 | Ստոմատոլոգիայի մագիստրոս (բժիշկ ստոմատոլոգ մասնագետ) |
| 060300 | Դեղագիտություն | 62 | Դեղագիտության բակալավր (բազային կրթությունը դեղագետ) |
| | | 68 | Դեղագիտության մագիստրոս (դեղագետ մասնագետ) |
| 060400 | Բուժական գործ զինված ուժերում | 62 | Բժշկության բակալավր (բազային կրթությունը բժիշկ) |
| | | 68 | Բժշկության մագիստրոս (բժիշկ մասնագետ) |
| **070000** | **Մշակույթ և արվեստ** | | |
| 070100 | Երաժշտական արվեստ | 62 | Երաժշտական արվեստի բակալավր |
| | | 68 | Երաժշտական արվեստի մագիստրոս |
| 070200 | Դերասանական արվեստ | 62 | Դերասանական արվեստի բակալավր |

| | | | |
|---|---|---|---|
| | | 68 | Դերասանական արվեստի մագիստրոս |
| 070300 | Ռեժիսուրա | 62 | Ռեժիսուրայի բակալավր |
| | | 68 | Ռեժիսուրայի մագիստրոս |
| 070400 | Թատերագիտություն | 62 | Թատերագիտության բակալավր |
| | | 68 | Թատերագիտության մագիստրոս |
| 070600 | Պարարվեստ | 62 | Պարարվեստի բակալավր |
| | | 62.1 | Մանկավարժության բակալավր, ուսուցիչ |
| | | 68 | Պարարվեստի մագիստրոս |
| | | 68.1 | Մանկավարժության մագիստրոս |
| 070700 | Պարարվեստի ռեժիսուրա | 62 | Պարարվեստի ռեժիսուրայի բակալավր |
| | | 68 | Պարարվեստի ռեժիսուրայի մագիստրոս |
| 070900 | Դիզայն (զեղար) | 62 | Դիզայնի բակալավր |
| | | 68 | Դիզայնի մագիստրոս |
| 071100 | Կիրառական արվեստ | 62 | Կիրառական արվեստի բակալավր |
| | | 68 | Կիրառական արվեստի մագիստրոս |
| 071200 | Գրական ստեղծագործություն | 62 | Գրական ստեղծագործության բակալավր |
| | | 68 | Գրական ստեղծագործության մագիստրոս |
| 071300 | Կինոարվեստ | 62 | Կինոարվեստի բակալավր |
| | | 68 | Կինոարվեստի մագիստրոս |
| 071400 | Օպերատորություն | 62 | Օպերատորության բակալավր |
| | | 68 | Օպերատորության մագիստրոս |
| 071500 | Գրադարանային- տեղեկատվական աղբյուրներ | 62 | Գրադարանային-տեղեկատվական աղբյուրագիտության բակալավր |
| | | 68 | Գրադարանային-տեղեկատվական աղբյուրագիտության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 071600 | Ժողովրդական գեղարվեստական մշակույթ | 62 | Ժողովրդական գեղարվեստական մշակույթի բակալավր |
| | | 68 | Ժողովրդական գեղարվեստական մշակույթի մագիստրոս |
| 071700 | Սոցիալ-մշակութային գործունեություն | 62 | Սոցիալ-մշակութային գործունեության բակալավր |
| | | 68 | Սոցիալ-մշակութային գործունեության մագիստրոս |
| 071800 | Համակարգչային գեղարվեստական նախագծում | 62 | Համակարգչային գրաֆիկայի բակալավր |
| | | 68 | Համակարգչային գրաֆիկայի մագիստրոս |
| 071900 | Գեղանկարչություն | 62 | Գեղանկարչության բակալավր |
| | | 68 | Գեղանկարչության մագիստրոս |
| 072100 | Քանդակագործություն | 62 | Քանդակագործության բակալավր |
| | | 68 | Քանդակագործության մագիստրոս |
| 072200 | Գրաֆիկա | 62 | Գրաֆիկայի բակալավր |
| | | 68 | Գրաֆիկայի մագիստրոս |
| 072300 | Կերպարվեստի պատմություն և տեսություն | 62 | Կերպարվեստի պատմության և տեսության բակալավր |
| | | 68 | Կերպարվեստի պատմության և տեսության մագիստրոս |
| 072400 | Հագուստի մոդելավորում | 62 | Հագուստի մոդելավորման բակալավր |
| | | 68 | Հագուստի մոդելավորման մագիստրոս |
| 072500 | Կինոգիտություն | 62 | Կինոգիտության բակալավր |
| | | 68 | Կինոգիտության մագիստրոս |
| **080000 Տնտեսագիտություն և կառավարում** | | | |
| 080100 | Տնտեսագիտության տեսություն | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 080200 | Կառավարում | 62 | Կառավարման բակալավր |
| | | 68 | Կառավարման մագիստրոս |
| 080300 | Ֆինանսներ | 62 | Ֆինանսների բակալավր |

| | | | |
|---|---|---|---|
| | | 68 | Ֆինանսների մագիստրոս |
| 080400 | Կոմերցիա | 62 | Կոմերցիայի բակալավր |
| | | 68 | Կոմերցիայի մագիստրոս |
| 080500 | Վիճակագրություն | 62 | Վիճակագրության բակալավր |
| | | 68 | Վիճակագրության մագիստրոս |
| 080600 | Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի) | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 62 | Ճարտարագիտության բակալավր (ըստ ճյուղերի) |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս (ըստ ճյուղերի) |
| 080700 | Միջազգային տնտեսական հարաբերություններ | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 080800 | Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 080900 | Աշխատանքի տնտեսագիտություն | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 081000 | Բնօգտագործման տնտեսագիտություն | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 081100 | Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 081200 | Հողագույքային հարաբերություններ | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 081300 | Կառավարման տեղեկատվական համակարգեր | 62 | Կառավարման բակալավր |
| | | 68 | Կառավարման մագիստրոս |
| 081400 | Ապահովագրական գործ | 62 | Ֆինանսների բակալավր |
| | | 68 | Ֆինանսների մագիստրոս |
| 081500 | Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) | 62 | Ֆինանսների բակալավր |
| | | 68 | Ֆինանսների մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 081600 | Ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն | 62 | Կոմերցիայի բակալավր |
| | | 68 | Կոմերցիայի մագիստրոս |
| 081700 | Շուկայաբանություն (մարքեթինգ) | 62 | Կոմերցիայի բակալավր |
| | | 68 | Կոմերցիայի մագիստրոս |
| **090000 Տեղեկատվական տեխնոլոգիաներ և տեղեկատվական անվտանգություն** | | | |
| 090100 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | 62 | Տեղեկատվական տեխնոլոգիաների բակալավր |
| | | 68 | Տեղեկատվական տեխնոլոգիաների մագիստրոս |
| 090200 | Տեղեկատվական անվտանգություն | 62 | Տեղեկատվական անվտանգության բակալավր |
| | | 68 | Տեղեկատվական անվտանգության մագիստրոս |
| **100000 Սպասարկման ոլորտ** | | | |
| 100100 | Սերվիս | 62 | Սերվիսի բակալավր |
| **310000 Ագրոպարենային ոլորտ** | | | |
| **310100 Ագրոնոմիական** | | | |
| 310102 | Ագրոնոմիա | 62 | Գյուղատնտեսության բակալավր |
| | | 68 | Գյուղատնտեսության մագիստրոս |
| 310104 | Բույսերի պաշտպանություն | 62 | Գյուղատնտեսության բակալավր |
| | | 68 | Գյուղատնտեսության մագիստրոս |
| 310105 | Գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա | 62 | Գյուղատնտեսության բակալավր |
| | | 68 | Գյուղատնտեսության մագիստրոս |
| 310110 | Ագրարային քաղաքականություն և տարածաշրջանի զարգացում | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 310111 | Ագրոպարենային համակարգի խորհրդատվություն և տեղեկատվություն | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 310112 | Ապահովագրական գործ (ագրոպարենային համակարգի) | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| **310200 Անասնաբուծություն** | | | |
| 310201 | Անասնաբուծություն | 62 | Գյուղատնտեսության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բակալավր |
| | | 68 | Գյուղատնտեսության մագիստրոս |
| **310300** | **Անասնաբուժական- բժշկագիտություն** | | |
| 310301 | Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն | 62 | Անասնաբուժական-սանիտարական փորձաքննության բակալավր |
| | | 68 | Անասնաբուժական-սանիտարական փորձաքննության մագիստրոս |
| 310302 | Անասնաբուժություն | 62 | Անասնաբույժ բժիշկ բակալավր |
| | | 68 | Անասնաբույժ բժիշկ մագիստրոս |
| **310400** | **Անտառագիտություն** | | |
| 310404 | Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում | 62 | Անտառագիտության բակալավր |
| | | 68 | Անտառագիտության մագիստրոս |
| **310500** | **Կենսագործունեության անվտանգություն, բնապահպանություն, շրջակա միջավայրի պահպանություն և բնօգտագործում** | | |
| 310504 | Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանում | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310506 | Ագրոէկոլոգիա | 62 | Գյուղատնտեսության բակալավր |
| | | 68 | Գյուղատնտեսության մագիստրո |
| 310511 | Կենսագործունեության անվտանգություն և անվտանգությունն արտակարգ իրավիճակներում | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| **310600** | **Ջրային կենսապաշարներ և ակվակուլտուրա** | | |
| **310700** | **Գյուղատնտեսական հումքի վերամշակման և պարենամթերքների տեխնոլոգիա** | | |
| 310703 | Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրանքի տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310705 | Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 310707 | Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310708 | Մսի և մսամթերքի տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310709 | Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310710 | Ձկան և ձկնամթերքի տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310712 | Մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310713 | Կաշվի և մորթու տեխնոլոգիա | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310715 | Գյուղատնտեսական և պարենային արտադրանքի փաթեթավորման տեխնոլոգիա և դիզայն | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310716 | Գյուղատնտեսական հումքի պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| **310800** | **Ագրարային ճարտարագիտություն** | | |
| 310801 | Գյուղատնտեսության մեքենայացում | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 310802 | Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| **310900** | **Հողաշինարարություն և հողային կադաստր** | | |
| 310901 | Հողաշինարարություն և հողային կադաստր | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մագիստրոս |
| **311000 Գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ և ավտոմոբիլներ** | | | |
| 311001 | Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 311002 | Սննդաարդյունաբերության մեքենաներ և սարքավորումներ | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| 311003 | Փոխադրումների կազմակերպումն ու կառավարումն ագրոպարենային համակարգում | 62 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր |
| | | 68 | Տեխնիկայի և տեխնոլոգիայի մագիստրոս |
| **311100 Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա և կառավարում** | | | |
| 311101 | Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 311102 | Սննդարդյունաբերության էկոնոմիկա և կառավարում | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 311103 | Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 311112 | Ագրոպարենային համակարգի ֆինանսների կառավարում | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 311105 | Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն (գյուղատնտեսական արտադրանքի և պարենամթերքի) | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| 311107 | Ագրոբիզնես և շուկայաբանություն | 62 | Տնտեսագիտության բակալավր |
| | | 68 | Տնտեսագիտության մագիստրոս |
| **120000 Գեոդեզիա և հողաբարելավում** | | | |
| 120100 | Գեոդեզիա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 120200 | Հողաբարելավում և հողային կադաստր | 62 | Ճարտարագիտության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **130000 Երկրաբանություն, օգտակար հանածոների հետախուզում և մշակում** | | | |
| 130100 | Օգտակար հանածոների հետախուզում և մշակում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 130300 | Նավթագազային գործ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **140000 Էներգետիկա, էներգետիկական մեքենաշինություն և էլեկտրատեխնիկա** | | | |
| 140100 | Ջերմաէներգետիկա (ներառյալ ատոմային էլեկտրական կայաններ և սարքավորումներ) | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 140200 | Էլեկտրաէներգետիկա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 140300 | Էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ և էներգետիկական մենեջմենթ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 140500 | Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **150000 Մետալուրգիա, մեքենաշինություն և նյութերի մշակում** | | | |
| 150100 | Մետալուրգիա և նյութագիտություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 150200 | Կիրառական մեխանիկա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 150300 | Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 150400 | Մեքենաշինություն և նյութերի մշակում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 150500 | Հիդրավլիկ, վակուումային և կոմպրեսորային տեխնիկա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **160000 Ավիացիոն և հրթիռային տեխնիկա** | | | |
| 160100 | Ավիա- և հրթիռաշինություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **170000 Զենք և զինվորական համակարգեր** | | | |
| 170100 | Զենք և զինվորական համակարգեր | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **190000 Տրանսպորտային համակարգեր** | | | |
| 190200 | Տրանսպորտային ուղիների, միջոցների շինարարություն, կառավարում և դրանց շահագործում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 190300 | Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **200000 Սարքաշինություն և կենսաբժշկական տեխնիկա** | | | |
| 200100 | Սարքաշինություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 200200 | Օպտոտեխնիկա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 200300 | Կենսաբժշկական ճարտարագիտություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 200400 | Չափագիտություն, ստանդարտացում և սերտիֆիկացում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| **10000 Էլեկտրոնային տեխնիկա, ռադիոտեխնիկա և կապ** | | | |
| 210100 | Էլեկտրոնային տեխնիկա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 210300 | Ռադիոտեխնիկա և կապ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **220000 Ավտոմատացում և կառավարում** | | | |
| 220200 | Ավտոմատացում և կառավարում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **230000 Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա** | | | |
| 230100 | Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **240000 Քիմիական տեխնոլոգիաներ և կենսատեխնոլոգիա** | | | |
| 240100 | Քիմիական տեխնոլոգիաներ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 240200 | Կենսատեխնոլոգիա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **250000 Անտառային ռեսուրսների վերարտադրություն, վերամշակում** | | | |
| 250100 | Անտառային գործ | 62 | Անտառային գործի բակալավր |
| | | 68 | Անտառային գործի մագիստրոս |
| 250200 | Անտառանյութի և փայտամշակման տեխնոլոգիա և սարքաշինություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **260000 Պարենային մթերքների և ապրանքների տեխնոլոգիա** | | | |
| 260100 | Սննդամթերքի տեխնոլոգիա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 260200 | Տեքստիլ և թեթև արդյունաբերության արտադրանքի նախագծում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 260300 | Տեքստիլ և թեթև արդյունաբերության արտադրատեսակների տեխնոլոգիա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **270000 Շինարարություն և ճարտարապետություն** | | | |
| 270100 | Շինարարություն, շինարարական իրերի և կառուցվածքների արտադրություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 270300 | Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 270400 | Քաղաքային տնտեսություն և ջերմագազամատակարարում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 271100 | Շենքերի նախագծում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 271200 | Անշարժ գույքի փորձաքննություն և կառավարում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 271400 | Կադաստր և կիրառական գեոդեզիա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 271500 | Ճարտարապետություն և դիզայն | 62 | Ճարտարապետության բակալավր |
| | | 68 | Ճարտարապետության մագիստրոս |
| **280000 Կենսագործունեության անվտանգություն, բնապահպանություն, շրջակա միջավայրի պահպանություն և բնօգտագործում** | | | |
| 280100 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (ըստ ճյուղերի) | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |

| | | | |
|---|---|---|---|
| 280200 | Հողաբարելավում, վերամշակում և հողապահպանություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280300 | Ջրային պաշարների համալիր օգտագործում և պահպանում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280400 | Շրջակա միջավայրի պահպանություն և բնական պաշարների արդյունավետ օգտագործում (ըստ ճյուղերի) | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280500 | Բնապահպանական փորձաքննություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280600 | Կենսագործունեության անվտանգություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280700 | Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280800 | Հրդեհային անվտանգություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 280900 | Քաղաքացիական պաշտպանություն | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| 281000 | Փրկարարական գործ | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **290000 Պոլիգրաֆիա** | | | |
| 290100 | Հրատարակչական գործ և պոլիգրաֆիա | 62 | Ճարտարագիտության բակալավր |
| | | 68 | Ճարտարագիտության մագիստրոս |
| **300000 Ռազմական կրթություն** | | | |

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան**

*Հավելված 1*
*ՀՀ կրթության և գիտության*
*նախարարի 2006թ. հունվարի 26-ի*
*№ 27-Ն հրամանի*

ԿԱՐԳ

## Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման /բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, ասպիրանտուրայի/ինտերնատուրա, օրդինատուրա/ և դոկտորանտուրայի երկարատև վերապատրաստման ծրագրերով/

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգով սահմանվում են միջպետական համաձայնագրերի շրջանակներում օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունվել ցանկացող և հետագայում այդ հաստատություններում բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով կրթություն ստացող ՀՀ քաղաքացիներին ներկայացվող ընդհանուր պահանջները:

1.2 Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում իրենց կրթությունը կարող են շարունակել համապատասխանաբար միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության վկայական, միջին մասնագիտական կրթության դիպլոմ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության դիպլոմ ունեցող ՀՀ քաղաքացիները:

### 2. Մրցույթի անցկացման կարգը

2.1. Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթա-

քոշակային տեղերի մրցույթն իրականացվում է երկու փուլով՝ մասնագիտական քննություններ՝ համաձայն ընդհանուր քննական ծրագրերի, և հարցազրույց՝ ընդհանուր զարգացածության մակարդակը որոշելու նպատակով:

2.2. ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի համաձայն ստեղծվում է մրցութային հանձնաժողով:

2.3. Մրցույթի անցկացման աշխատանքներն իրականացնող ստորաբաժանումը մրցույթին մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր քաղաքացու վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը դիմորդների ընդհանուր անվանացանկի հետ միասին ներկայացնում է մրցութային հանձնաժողովի նախագահին:

2.4. Մրցութային հանձնաժողովը մինչև մրցույթի սկիզբը գումարած նիստում քննության է առնում ներկայացված փաստաթղթերը և կայացնում համապատասխան որոշում՝ մրցույթին մասնակցելու թույլտվություն տալու մասին: Հանձնաժողովը դիմորդին թույլ չի տալիս մասնակցելու մրցույթին, եթե բացակայում է պահանջվող փաստաթղթերից որևիցե մեկը: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել նիստին և լսել մրցույթին մասնակցելու համար դիմած դիմորդին(ներին):

2.5. Հանձնաժողովն իր որոշմամբ հաստատում է մրցույթի մասնակիցների ցանկը:

2.6. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ինչպես նաև մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ ոք չի ներկայացել, ապա հանձնաժողովի կողմից կայացվում է որոշում՝ մրցույթը չկայացած համարելու մասին:

2.7. Նախարարի հրամանով ստեղծվում են ժամանակավոր առարկայական հանձնաժողովներ, որտեղ ընդգրկվում են տվյալ մասնագիտության գծով համապատասխան մասնագետներ: Ժամանակավոր առարկայական հանձնաժողովները քննում և գնահատում են դիմորդների մասնագիտական գիտելիքները՝ տվյալ տարվա ընդունելության քննությունների ցանկին և ուսումնական ծրագրերին, ինչպես նաև գնահատման չափանիշներին համապատասխան: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ հայոց լեզվի քննությունը կամ ստուգարքը կարող է փոխարինվել օտար լեզվի քննությամբ կամ ստուգարքով: Օտար լեզվի իմացությունը ստուգվում է նաև մրցույթի երկրորդ փուլում՝ հարցազրույցի ժամանակ:

2.8. Մրցույթի երկրորդ փուլում, որն անց է կացվում առարկայական հանձնաժողովի գնահատականի բողոքարկման ժամկետը (3օր) լրանալուց և արդյունքներն ամփոփելուց հետո, մրցութային հանձնաժողովը հարցազրույցի միջոցով ստուգում է մրցույթի մասնակիցների զարգացածության մակարդակը: Մրցութային հանձնաժողովը որոշում է կայացնում մրցույթի հաղթողների վերաբերյալ` հաշվի առնելով համապատասխան ժամանակավոր առարկայական հանձնաժողովի նշանակած գնահատականը (ները):

2.9. Եթե նախկինում գործուղված ասպիրանտը կամ դոկտորանտը օբյեկտիվ կամ տեխնիկական պատճառներով (հիվանդություն, տարբեր բնույթի համաճարակներ, թեմայի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների բացակայություն և այլն) չի հասցրել ավարտել իր գիտական ուսումնասիրությունը, ապա բուհի և տվյալ երկրում ՀՀ դեսպանության միջնորդագրերի առկայության դեպքում նախարարության կողմից կարող է կրթաթոշակն երկարաձգվել մինչև մեկ տարի ժամկետով:

2.10. Մրցույթի արդյունքում թափուր տեղեր առաջանալու դեպքում սահմանված ժամկետներում կարող է անցկացվել նոր մրցույթ` համաձայնեցնելով կրթաթոշակ տրամադրող կողմի հետ:

2.11. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթի անցկացման օրը, ոչ ուշ, քան մրցույթի ավարտից 3 ժամ անց:

2.12. Մրցույթի արդյունքների հրապարակման մասին կազմվում է մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկ, որը կնքվում է հանձնաժողովի կողմից:

2.13. Մրցույթի արդյունքների հրապարակման թերթիկի մեջ նշվում են`

ա/ կրթաթոշակ տրամադրող երկրի անվանումը,

բ/ մասնագիտությունը(ները), որի համար անցկացվել է մրցույթը,

գ/ մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,

դ/ մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների ազգանունը, անունը և հայրանունը:

2.14. Մրցութային հանձնաժողովը հիմնական հաղթողներից բացի հայտարարում է նաև պահուստային ճանաչված թեկնածուների անունները, որոնց թեկնածությունները որպես պահեստային ներկայացվում են կրթաթոշակ տրամադրող կողմին:

## 3. Փաստաթղթերի ցանկը և ներկայացման կարգը

3.1 Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթը անցկացնելու մասին հայտարարությունը (այսուհետ` հայտարարություն) հրապարակում է նախարարությունը: Նախարարի հանձնարարականի հիման վրա հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան կրթաթոշակի տրամադրման մասին հայտը ստանալուց 5-օրյա ժամկետում, առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև նախարարության ինտերնետային պաշտոնական էջում:

3.2 Հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տվյալները.

ա/ համապատասխան երկրի անվանումը,

բ/ ուսուցման լեզուն,

գ/ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի թիվն` ըստ հատկացված մասնագիտությունների,

դ/ մրցույթին մասնակցելու համար գիտելիքների (մասնագիտական) իմացության տեսանկյունից ներկայացվող պահանջները,

ե/ առկայության դեպքում սովորելու ժամանակահատվածը` ներառյալ նախապատրաստական կուրսը,

զ/ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացնելու վերջնաժամկետը,

է/ մրցույթն անցկացնելու օրը, ժամը և վայրը,

ը/ մրցույթի աշխատանքներն իրականացնող մարմնի գտնվելու վայրը և հեռախոսահամարները:

3.3. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող ստորաբաժանմանը ներկայացնում են`

ա/ դիմում` հասցեագրված մրցութային հանձնաժողովի նախագահին, որի մեջ պետք է նշվի ընտրած մասնագիտությունը,

բ/ դիմում-հարցաթերթիկ (ըստ ներկայացված ձևի),

գ/ կրթության վկայականի և ներդիրի պատճենը նոտարական վավերացմամբ, իսկ կրթաթոշակ հատկացնող երկրի պահանջի դեպքում նաև ավարտական դասարաններում կամ կուրսում սովորողները` առաջադիմության թերթիկ կամ ակադեմիական տեղեկանք` թարգմանությունը նոտարական վավերացմամբ,

դ/ արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի պատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր կամ զորակոչային տեղամասից համապատասխան տեղեկանք,

սմ չափսի լուսանկար (ըստ պահանջվող քանակի),

զ/ անձնագրի պատճենը,

է/ ասպիրանտուրա ընդունվել ցանկացողները ներկայացնում են նաև մասնագիտական ռեֆերատ պահանջվող լեզվով, անհրաժեշտության դեպքում համառոտագրություն հայերեն լեզվով,

ը/ այլ փաստաթղթեր, եթե դրանք պահանջվում են կրթաթոշակ տրամադրող երկրի կողմից,

թ/ դիմորդը կարող է իր ցանկությամբ լրացուցիչ փաստաթղթեր կցել անձնական գործին:

3.4. Փաստաթղթերն ընդունվում են մրցույթը զանգվածային լրատվամիջոցներով հայտարարելուց հետո:

3.5. Դիմորդները 3.3. կետում նշված փաստաթղթերը ներկայացնում են անձամբ: Բացառիկ դեպքերում (հիվանդություն, հանրապետությունից բացակայելու և այլն) դիմորդը կարող է ներկայացնել փաստաթղթերը ներկայացուցչի միջոցով: Մրցույթի անցկացման աշխատանքներն իրականացնող ստորաբաժանումը 3.3. կետում նշված փաստաթղթերի պատճենը համեմատում է բնօրինակի հետ և ընդունում պատճենները:

3.6. Մրցույթի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների կազմման, ինչպես նաև մրցույթի անցկացման աշխատանքները պատշաճ ձևով կազմակերպելու նպատակով նախարարության համապատասխան ստորաբաժանումը վարում է մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման համարակալված և ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից կնքված գրանցամատյան: Գրանցամատյանը վարում է տվյալ երկրի համար պատասխանատու մասնագետը:

3.7. Գրանցամատյանում նշվում են մրցույթին մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր քաղաքացու անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, անձնագրի համարը և սերիան, ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, հասցեն և հեռախոսահամարը:

3.8. Մրցույթին մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր դիմորդի տվյալները գրանցամատյանում գրառվում են փաստաթղթերն ընդունելու օրը և ստորագրվում դիմորդի կողմից:

3.9. Մրցույթին մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր դիմորդ կարող է, համաձայն ներկայացված դիմումի հրաժարվել մրցույթին մասնակցելուց և հետ վերցնել հանձնած փաստաթղթերը:

## 4. Բողոքարկում

4.1. Ժամանակավոր մասնագիտական հանձնաժողովի որոշումը (ները) կարող են բողոքարկվել դիմորդի կողմից:

4.2. Գրավոր բողոքը պետք է տրվի մրցույթի աշխատանքներն իրականացնող ստորաբաժանմանը մասնագիտական որոշումը հրապարակվելուց հետո 24 ժամվա ընթացքում, որն այն ստանալուց անմիջապես հետո ներկայացնում է մրցութային հանձնաժողովի նախագահին:

4.3. Մրցույթի անցկացման աշխատանքներն իրականացնող ստորաբաժանումը պարտավոր է հրապարակել գրավոր բողոքի առկայության կամ բացակայության մասին տեղեկություն: Գրավոր բողոքի առկայության դեպքում հրապարակման մեջ պարտադիր պետք է նշվի այն մասնակցի ազգանունը, անունը և հայրանունը, ում վերաբերյալ ներկայացվել է գրավոր բողոք:

4.4. Գրավոր բողոքը քննության առնելիս մրցութային հանձնաժողովի նախագահն անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել համապատասխան մասնագետի:

4.5. Բողոքարկման արդյունքում գնահատականները կարող են իջեցվել, բարձրացվել կամ մնալ անփոփոխ:

4.6 Սույն կարգով կրկնակի բողոքարկում չի նախատեսվում:

## 5. Փաստաթղթերի արխիվացումը

5.1 Մրցույթին մասնակցող դիմորդների ներկայացրած փաստաթղթերի պատճենները արխիվացվում են նախարարությունում` մեկ տարի ժամկետով:

5.2 Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվածների անձնական գործերը պահպանվում են նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում մինչև ուսման ավարտը և դրանից հետո 15 տարի ժամկետով` նախարարության արխիվում:

## 6. Մրցույթի հրապարակայնությունը

6.1 Հանձնաժողովի որոշմամբ մրցույթին ներկա գտնվելու իրավունք ունեն մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև դիտորդներ:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Մրցույթ հայտարարվելուց հետո, սույն կարգի 3.2 կետի «է» ենթակետով նախատեսված մրցույթն սկսելու օրը, ժամը և վայրը նախարարի կամ համապատասխան հանձնաժողովի կողմից կարող են փոփոխվել: Այդ ասին ոչ ուշ, քան մրցույթն անցկացնելու օրվանից հինգ օր առաջ հայտարարություն է հրապարակվում մամուլի և զանգվածային լրատվության այն նույն միջոցներով, որտեղ հրապարակվել է մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը:

7.2. Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված և նախարարության կողմից գործուղված քաղաքացիների և նախարարության միջև կնքվում է պայմանագիր:

## ´àì²Ü¸²ÎàôÂÚàôÜ

ԲԱԺԻՆ I


- 5
- «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» ՀՀ օրենքը 59
- «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» ՀՀ օրենքը 67
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը .. 73
- «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրեն- 122
- «Լեզվի մասին» ՀՀ օրենքը՝ լրաց 162

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը 166
- «Կոնվենցիա - Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» 177
- «Մարդու իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը . 205
- «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը՝ լրացումներով 227


ԲԱԺԻՆ II


- ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 20-ի «ՀՀ ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգի մասին» N 662-Ն որոշումը՝լրացումներով և փոփոխություններով 250
- «Հայաստանի Հանրապետության ասպիրանտուրայի ընդունելության կարգի մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. ապրիլի 11-ի N 207-Ն հրամանը 262
- «Ոխսանողին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի N 1112-Ն որոշումը՝ փոփոխություններով 268

- «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի կոչումներ շնորհելու մասին» ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի N 615-Ն որոշումը 276
- «Բուհի խորհրդի ձևավորման կարգը» ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 23-ի N 975-Ն որոշումը 285
- «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշումը 288
- Օտարերկրյա պետությունների բուհերում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի, ասպիրանտուրայի (ինտերնատուրա, օրդինատուրա) և դոկտորանտուրայի երկարատև վերապատրաստման ծրագրերով) կարգը՝ հաստատված ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. հունվարի 9-ի N 27-Ն հրամանով 310

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ

# ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊՐԱԿ I

ՏԵՂԵԿԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ՝

*Նորայր Ղուկասյան*

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

*Ռուբեն Գասպարյան*

*Վրեժ Սարգսյան*

Համակարգչային աշխատանքները՝

***Մարիամ Պետրոսյանի***

***Աստղիկ Միրզաքունյանի***

***Աշխեն Այվազյանի***

Սրբագրիչ՝ ***Անահիտ Ուքմազյան***

Ստորագրված է տպագրության՝ 13.11.2007,

Ծավալը 20 մամուլ, Ֆորմատը՝ 64X90 $^{1}/_{16}$,

Տպաքանակը՝ 7000, տպագրությունը օֆսեթ:

«Կրթության ազգային ինստիտուտ» Երևան, Տիգրան Մեծի 67,

Հեռ. 574910